



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



ԿԱՆԱԳԻՐՔ

ՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԴՊՐՈՅԱՅ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ.



ԹԷՂՈՂՈՍԻՍ,

ի Խաչիպուրի, սահմանի.

1860.

այ  
88











~~784~~

Հրամայեցաք տպագրել, եւ յետ տպագրու-  
բեանն առաջի առնել ուր հարկն է գահամա-  
նեայ թիւ օրինակացն:

Թեոդոսիա, 6 Օգոստոսի 1860:

ԳԱԲՐ. Վ. ԱՅՎԱԶԵԱՆ.



688-2009

ԴԱՍԱԳԻՐԲ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴՊՐՈՅԱՑ



ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ.

*Նախագիտելիք.*

- Հ. Աշխարհագրութիւնն ի՞նչ է:  
Պ. Աշխարհագրութիւնը երկրիս, այս-  
ինքն մեր բնակած աշխարհին եւ տիե-  
զերաց ստորագրութիւնն է:  
Հ. Աշխարհագրութիւնը քանի՞ մասն է:  
Պ. երկու. Բնական եւ Քաղաքական:

ՄԱՍՆ Ա.

ԲՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

---

ԴԱՍ Ա.

*Ընդհանուր ստորագրուածքին տեղերաց.*

Հ. Ի՞նչ է բնական աշխարհագրութիւնը :

Պ. Բնական աշխարհագրութիւնն է այն զիտութիւնը՝ որով մարդս կտեղեկանայ ընդհանուր տեղերաց կազմութեանը, եւ կհասկընայ քե ինչ է երկինքն ու երկնային մարմինները, լեռները, բլուրները, ձորերը, գետերը, ծովերը, կենդանիները, բոյսերը, եւ այլն :

Հ. Տեղերք ըսելով ինչ կիմանամք :

Պ. Կիմանամք երկինքը, երկիրս ու անոնց մեջ եղած բաները .

Տեղերքը անհուն միջոց մի է՝ որուն ընդարձակութեանը մեր խելքը չհասնիր :

Հ. Ի՞նչ կասուի այն զիտութիւնը որ երկնային մարմնոց վրայ կխօսի :

Պ. Աստեղաբաշխութիւն :

2. Աստեղարաշխութեան վախճանն ինչ է :

Պ. Աստեղարաշխութեան վախճանն է ճանջ-  
ցընել երկինքը տեսնուած մարմինները, եւ  
անոնց դիրքը, ձեւը, իրարմէ ունեցած հեռա-  
ւորութիւնն ու շարժումնքը մեզի սովորեցընել :

3. Երկինքն ինչ է :

Պ. Տիեզերաց այն մասն է որ մեր գլխուն վրայ  
կամարի պէս կեցած ու չորս կողմերնիս պա-  
տած է, եւ անոր մէջ են արեւը, լուսինը,  
աստղերը, եւ բոլոր երկնային մարմինները :  
Երկինքը կըսուի նաեւ *հաստատուրիւն* կամ  
*երկնային կամար* :

4. Երկնային մարմիններն իրարմէ ինչ տար-  
բերութիւն ունին :

Պ. Ոմանք ինքնայոյս կամ իրենք իրենցմէ  
լուսաւոր մարմիններ են, այսինքն լոյս չեն  
առնուր. ոմանք ալ այնպիսի մարմիններ են  
որ միայն ուրիշէ լոյս առած ժամանակին  
լուսաւոր կերեւնան :

5. Ինքնայոյս մարմինները որոնք են :

Պ. Արեւը կամ *արեգակը*, որ երկրիս, լուս-  
նի, եւ իւր չորս կողմը պտըտող աստղերուն  
լոյս կուտայ. եւ *հաստատուրն աստղերը*,  
որ մեկմեկ արեգակներ են, եւ իրենց բոլոր-  
տիքն ալ ուրիշ աստղեր կպտըտին :

ԴԱՍ Բ.

Ա ռ ե ռ .

Հ. Արեւը թնչ ձեռ ունի :

Պ. Արեւը գնտակի պէս կը որ է :

Հ. Արեւը անշարժ է :

Պ. Արեւն իւր տեղը հաստատուն կեցած է, թէ եւ այնպէս երեւի որ երկրիս չորս դին կրպտրտի. միայն ինքիւր վրայ կղառնայ քսանըհինգ օրուան եւ տասուերկու ժամուան մեջ :

Հ. Հապա ինչո՞ւ կըսեմք թէ *արեւն կշար*, *արեւը մտար* :

Պ. Արեւն ելաւ կըսեմք՝ երբոր արեւը կսկսի երեւիլ. եւ արեւը մտաւ կըսեմք՝ երբոր մեր աչքէն աներեւոյթ կլինի. եւ այսպէս ըսելնիս պարզ արտաքին երեւոյթը հասկըցընելու համար է. բայց իրօք արեւը ոչ կելլէ՝ ոչ կըմտնէ, հապա երկիրս է որ քսանըչորս ժամուան մեջ մեկ անգամ ինքն իւր վրայ դառնալով՝ արեւուն այնպիսի երեւոյթներ կուտայ :

Հ. Երկիրս արեգական նայելով միշտ նոյն տեղը կկենանք թէ ոչ :

Պ. Ոչ. վասնզի իւր վրայ դառնալէն զատ՝ նաեւ տարուան մը մեջ, (այսինքն 365 օրուան 5



ժամուան 48 վայրկենի եւ 45 բոպէի մեջ), մեկ  
անգամ արեւուն չորս կողմը կատրտի, որ է  
իւր տարեկան շրջանը:

Հ. Երկիրս արեւնն ճրջափ հեռու է:

Պ. Տասնըհինգ միջիոն հարիւր ինը հազար  
վեցհարիւր բիւրամերը:

Հ. Արեւուն լոյսը ճրջափ ժամանակի մեջ եր-  
կիր կհասնի:

Պ. Գրեթէ ուրը վայրկենի մեջ:

---

ԳԱՍ Գ.

*Աստղիք, Մոլորակք, Գիսաւորք.*

Հ. Աստղերն ինչ են:

Պ. Այն լուսաւոր կետերն են որ երկնքին  
երեսը կփայլին, եւ զոր կտեսնեմք գիշերը:

Հ. Ինչո՞ւ համար աստղերը մանր կերեւան:

Պ. Երկրէս սաստիկ հեռու լինելուն համար:

Հ. Աստղերը քանի կարգ կրաժնուին:

Պ. Երկու կարգ, Հաստատուռն աստղիք ու  
Շարժուռն աստղիք կամ Մոլորակք:

Հ. Հաստատուն աստղերն ինչ են :

Պ. Ինքնալոյս մարմիններ են, որ երկրէս եւ իրարմէ միշտ նոյն հեռաւորութեան մէջ կրկենան : Ասոնք հաստատուն աստղեր կասուին՝ որպէսզի մոլորակ ասուածներէն գատուին՝ որ շարժուն աստղեր են, եւ արեւուն ջորս կողմը դառնալով՝ անդադար դիրքերնին կփոխեն :

Հ. Աստեղաց թիւը զիտեմք :

Պ. Ոչ. վասնզի մեզմէ խիստ շատ հեռու լինելով՝ չենք կրնար ճիշդ համրել :

Հ. Մոլորակներն ինչ են :

Պ. Այնպիսի մարմիններ են որ իրենք իրենցմէ լոյս չունին, եւ կանոնաւոր շարժմամբ արեւուն բոլորափքը կալտրաին. արեւուն լոյսը վրանին գարնելով՝ իրենք ալ մեզի լուսաւոր կերեւին :

Հ. Գլխաւոր մոլորակները քանի հատ են :

Պ. Ութը հատ, եւ արեւէն ունեցած հեռաւորութեան կարգով սոքա են. Փայլածու, Արուսեակ, Երկիր, Հրատ, Լուսնրագ, Երեւակ, Ռարանոս ու Պոսիդոն կամ Նեպտոն :

Ասոնցմէ գատ շատ մը մանր մոլորակներ եւս վերջի ժամանակներս գտնուեցան հետզհետէ, այնպէս որ հիմա մոլորակաց թիւը մեծ ու փոքր վաթսուներեւ անելի է :

Հ. Գիտաւորներն ինչ են :

Պ. Գիտաւորներն ալ մոլորակաց պէս անլոյս մարմիններ են, ու արեւէն կառնուն լոյսերնին . լոյս մը ունին ետեւնին ձգած որ *գէս* կամ *ագի* կասուի, որով իրենք ալ *Գիտաւոր* կամ *Ազեւոր* աստղ ասուեր են, եւ արեւուն չորս կողմը կպտըտին :

Հ. Գիտաւորի երեւիլը նշանն է դիպուածի :

Պ. Ժամանակով այնպէս կկարծուեր . բայց այժմ ամեն մարդ գիտէ որ նոքա եւս մեկմեկ մոլորակ են, ու արեւուն վրայ դարձած ժամանակնին՝ երկրիս մօտենալով կերեւին մեզ :

Հ. Արբանեակ ասուածներն ինչ են :

Պ. Այնպիսի մանր մոլորակներ են որ զբխաւոր մոլորակի մը չորս դին, ու անոր հետ մեկտեղ արեւուն չորս բոլորը կպտըտին :

Հ. Արբանեակ ունեցող մոլորակքը որոնք են :

Պ. Լուսնրագը, որ չորս արբանեակ ունի, երեւակը՝ ուր արբանեակ,  
Ուրանոսը՝ վեց արբանեակ,  
Պոսիդոն՝ երկու արբանեակ, ու  
Երկիրս մեկ արբանեակ՝ որ է Լուսինը :

ԳԱՍ Գ.

Լ ու ռ ս ի ն .

Հ. Լուսինն ինչ է :

Պ. Լուսինը երկրիս նման գունատ մի է՝ ու շուտաւարտ գիշերոյ կասուի, անոր համար որ արեւուն լուսէն զրկուած ժամանակնիս ինքը զմեզ փոքր մի կլուսաւորէ :

Հ. Ի՞նչպէս կարելի է լուսինը արբանեակ կոչել՝ որ միւս մոլորակներէն մեծ կերեւի :

Պ. Լուսինը մոլորակներէն մեծ երեւնալուն պատճառն այն է որ ամենէն աւելի մօտ է մեզի :

Հ. Լուսինն ինչ ընթացք ունի :

Պ. Լուսինը քսանըեօքը օրուան, եօքը ժամուան ու քառասուններեք վայրկենի մեզ իւր վրայ կղաւնայ՝ եւ երկրիս նեւ մեկտեղ արեւուն վրայ կպտրտի :

Հ. Լուսնի շրջանին միջոցը ինչ կասուի :

Պ. Լուսնական ամիս :

Հ. Ինչո՞ւ համար երբեմն կլոր կերեւի լուսինն ու երբեմն եղջիւրաձեւ :

Պ. Այն այլեւայլ ձեւերը, որ երեւոյրք լուսնի կասուին, լուսնին երկրիս վրայ պտրտուլէն առաջ կուզան : Լուսինն ինքիւրմէ լոյս չունենալով՝ մեք նորա արեւէն լուսաւորուած

կտորը միայն կրնամք տեսնել. երբեմն զիր-  
քերնիս այնպէս կուգայ որ այն լուսաւորուած  
կտորին եւս եղջիւրաձեւ մեկ մասը միայն կա-  
րող եմք տեսնել, քառարդ շուսի կասուի:

Հ. Նոր շուսին եւ շուսմն շուսի ինչ է:

Պ. Նոր լուսին կասուի՝ երբոր լուսնին մութ  
կողմը կտեսնեմք, եւ ոչ զինքը. իսկ լրումն  
լուսնի կասուի՝ երբոր բոլորը լուսաւորուած  
կտեսնեմք:

Հ. Լուսնի շրջանովը ուրիշ ինչ կհանդիպի:

Պ. Լուսնի ու արեւու խաւարմունքը:

Հ. Խաւարումն ինչ է:

Պ. Խաւարումն է արեւուն կամ լուսոյն առ  
ժամանակ մի չերեւիլը կամ պակսիլը:

Հ. Լուսինը երբ կխաւարի:

Պ. Երբոր երկիրս լուսնի՛ ու արեւուն մեջ-  
տեղը գայ, այնպէս որ ըող ջտայ որ լուսինը  
արեւէն լոյս առնու:

Հ. Արեւն երբ կխաւարի:

Պ. Երբոր լուսինը երկրիս ու արեւուն մեջ-  
տեղը կուգայ, ու ջրողութք որ արեւէն լոյս  
առնումք. այն ժամանակ կասեմք թէ արեւը  
խաւարեցաւ, փոխանակ ասելու թէ լուսնին  
պատճառաւ արեւուն լոյսը չեմք տեսնել:



ԴԱՍ Ե.

*Մքնուորսին գլխաւոր երեւոյթները.*

Հ. Մքնուորտն ինչ է:

Պ. Մքնուորտը կամ օդուորտը հարիւր տասն հազար մերթ քանձրութեամբ օդն է, որ մեր երկրագնտիս չորս կողմը պատած է, ու մեք անով շունչ կառնումք: Մքնուորտին մեջ կը ձեւանան ամպերը, անձրեւ, ձիւն, կարկուտ, հովեր, որոտմունք, փայլակ. մեկ խօսքով՝ ամեն օդային երեւոյթները:

Հ. Ամպերն ինչ են եւ ինչպէս կձեւանան.

Պ. Արեւուն տաքութենէն երկրիս վրայի ջրերը գուորշի կղանան, օդուն մեջ կբարձրանան, եւ մանր կաթիլներ ձեւանալով՝ ամպ կասուին: Իսկ նոցա ձեւերուն ու գոյներուն գլխաւոր պատճառ է մէյմը իրենց քանձրութիւնը, մէյմ՝ ալ նոցա արեւէն կամ լուսնէն լուսաւորուելուն կերպը:

Հ. Անձրեւն ինչ է:

Պ. Ամպերուն մանր կաթիլներն իրարու հետ կմիանան այլ եւ այլ պատճառներով, եւ հետզհետէ ծանրանալով երկրիս վրայ կբափքրփին: Երբեմն ասոնք ճամբուն մեջ գուորշի կը-

դառնան կցնդին, երբեմն այ մինչեւ գետին  
կհասնին ու *սնձրեւ* կասուին:

Հ. Մեզն ինչ է:

Պ. Այն ամպն է որ գետնի երեսին մօտ կը-  
ձեւանայ. վասնզի գետնէն ելած գոյորշիքը  
գիշերուան օդին պաղութենէն վեր ջկարենա-  
լով բարձրանայ՝ երկրիս երեսը կմնան, վերի  
գոյորշիքներն այ վար կիջնան մինչեւ իգետին,  
անով կձեւանայ այն ցած ամպը որուն *մեզ*  
կամ *մառախուղ* կասեմք:

Հ. Չիւնն ինչ է:

Պ. Տուրտ ժամանակ գոյորշիքն՝ փոխանակ  
հեղուկի պէս կաթիլ կաթիլ երկրիս վրայ բա-  
փելու, բամբակի մանր ծիւերուն պէս վար  
կիջնայ, եւ կասուի *ձիւն*:

Հ. Հովը ինչ է:

Պ. Հովը օդուն տեղէ տեղ շարժիլն է:

---

## ԴԱՍ Զ.

Հ. Փայլակն ինչ է:

Պ. Պայծառ եւ փայլուն լոյս մը որ յանկարծ  
մբնոյորտին մեջ կերեւի, ու մեկէն աներեւոյթ  
կլինի:

Հ. Որոտումն ինչ է :

Պ. Որոտումն է փայլակին երեւելէն յետոյ ելած գոռալու ձայնը :

Հ. Փայլակին, որոտման եւ կայծակին ինչ է պատճառը :

Պ. Օդուն մեջ եղած անտեսանելի հոսանք մը յանկարձակի կշարժի կանցնի, որ ելքտորական հոսանիւք կկոչի . յորմէ ելած լոյսը՝ կասուի *ֆայշակ*, ձայնը՝ *որոտում*, իսկ կրակը՝ *կայծակ* կամ *շակ* :

Հ. Ելեկտրական հոսանիւքն օդուն մեջ միայն կգտնուի :

Պ. Ելեքտրական հոսանիւքն ոչ միայն օդի մեջ, հապա նաեւ շատ մարմնոց մեջ կգրտնուի, զոր դուրս հանելու համար բաւական է այն մարմինները քիչ մը շփել, որ մեկէն կսկրսին կամ կայծեր հանել եւ կամ քերեւ մարմիններն իրենց քաշել : Օրինակի համար, քէ որ մութ տեղ մը կատուին կունակը դեպ իհակառակ դին շփեմք՝ կայծեր կելլեն, մանաւանդ ցուրտ ժամանակ . նոյնպէս քէ որ կնքամոմը չուխայի վրայ քսեմք եւ յետոյ քերեւ մարմնոյ մը մօտեցրնեմք, զոր օրինակ մագի, մեկէն իրեն կքաշէ :



Հ. Կայծակէ ազատ մնալու հնարք կան :

Պ. Կայծակը՝ տուն, մարդ, ամեն բան կր-  
զարնէ մոխիր կղարձունէ : Ֆրանքլին ամերի-  
կացին անկէց ազատելու հնարք գտաւ՝ շեն-  
քերու վրայ տնկելով երկաթե սրածայր երկայն  
ձող մը, որոյ վարի ծայրը ուրիշ բարակ եր-  
կաթով մը երթայ գետինը մտնէ . այս է ահա  
*շանքարգեղ* կոչուածը . վասնզի իրեն մօտ ե-  
ղած փոթորկալից ամպերուն մեջէն էլեքտրա-  
կան հոսանիւթը ցրուելով՝ չբողուր որ կայ-  
ծակը գայ շենքին գարնէ :

Հ. Շանքարգելը միշտ էլեքտրականութիւնը  
կցրուէ :

Պ. Ոչ, չկրնար . բայց էլեքտրական հոսա-  
նիւթն իրեն քաշելով՝ տակի երկաթէն կսա-  
հեցընէ մինչեւ գետին կանցունէ, որով չը-  
կրնար կայծակ դառնալով շենքը կործա-  
նել, մեջիններն այրել :

Հ. Փոթորկի ատեն ծառի տակ քաշուիլը  
լնա է :

Պ. Փոթորկի ժամանակ՝ ծառի, աշտարակի  
եւ ընդհանրապէս ամեն տեսակ բարձր ու  
սրածայր շենքի տակ մտնելը շատ վտանգա-  
ւոր է, որովհետեւ էլեկտրական հոսանիւթը  
կամ կայծակն աւելի կսիրէ սրածայր մարմ-  
նոց վրայ իջնալ :

---

ԳԱՍ Է.

Ե ր կ ի ր .

Հ. Երկիրս ինչ է :

Պ. Երկիրս այն գունտն է, որոյ վրայ մեք կրնակիմք, եւ ձեւացած է ցամաքով ու ջրով :

Հ. Երկրագունտն ինչ է :

Պ. Երկրիս ձեւը ցուցնող գունտը՝ որոյ վրայ նկարուած են ցամաքն ու ջրերը :

Հ. Հապա երկնագունտն ինչ է :

Պ. Երկնքի ձեւն ու աստեղաց դիրքը ցուցնող գունտն է :

Հ. Աշխարհացոյցն ինչ է :

Պ. Երկրիս երեսն ու այլեւայլ բաժանմունքը, լեռներն ու գետերը ցուցնող բոլորը :

Հ. Ըսիր քե արեգակն անշարժ է, եւ երկիրս անոր չորս կողմը կդառնայ. երկիրս այս պտոյտն ու քաւայումը ինչպէս կընէ արեւուն չորս կողմը :

Պ. Երկիրս երկու շարժմունք ունի, ու երկուքն ալ մեկտեղ կընէ. այսինքն մի եւ նոյն ժամանակի մեջ քե ինքն իւր առանցքին վրայ կդառնայ՝ անուոյն լիտանը վրայ դար-

ձածին պէս, եւ թէ արեւուն չորս կողմը կը-  
պտըտի: Իւր վրայ կղաւնայ քսանըջորս ժա-  
մոռան մէջ. այսպէս դառնալովը՝ կարգա-  
մէյմը մէկ կողմը արեւուն կղարձունէ, մէյմը  
միւսը, որով եւ անդադար գիշեր ու ցորեկ կը-  
լինի. վասնզի արեւուն դարձուցած կտորը  
լոյս տեսնելով՝ *ցորեկ* կլինի հոն. միւս կտորն  
եւս լոյս չտեսնելով՝ *գիշեր* կլինի:

Հ. Երկիրս քանի օրուան մէջ կընէ շրջանը:

Պ. Երկրիս միւս շարժումը, այսինքն արե-  
ւուն չորս կողմը պտըտիլը, երեքհարիւր  
վարսունընից օրուան եւ վեց ժամուան մէջ  
կլինի. այս շարժումնքով տարւոյն երկայ-  
նութիւնը կջափուի ու չորս եղանակները կը-  
փոփոխին, որք են՝ Գարուն, Ամառ, Աշուն  
եւ Ձմեռ:

Հ. Օրինակ մը տուր երկրիս երկու տեսակ  
շարժմանը:

Պ. Օրինակի համար կառք մը քայած ժա-  
մանակը անիւր երկրիս պէս կրկին շարժման  
մէջ է: Վասնզի թէ լիտւանը վրայ կղաւնայ,  
եւ թէ միանգամայն առաջ կերբայ: Այսպէս  
է եւ երկիրս ու միւս մոլորակները:

Հ. Օրը քանի ժամ է:

Պ. Գիշերով մեկտեղ քսանըջորս ժամ:

Հ. Տարին քանի օր է :

Պ. Երեքհարիւր վարսունեհինգ օր, եւ վեց ժամի չափ ալ անելի է. բայց սովորաբար՝ երեքհարիւր վարսունեհինգ օր կասուի :

Հ. Ժամին բաժանմունքն ինչ է :

Պ. Ժամը կրածնուի վարսուն վայրկեան . վայրկեանն ալ՝ վարսուն ըոպէ :

Հ. Մեք երկրիս ճր մասին վրայ կրնակիմք :

Պ. Դրսի երեսին կամ կեղեհին վրայ, որ մակերեսոյք կասուի :

Հ. Երկրիս դառնալու ժամանակը մեք ինչպէս չեմք իյնար ու շարժիլը չեմք իմանար :

Պ. Ինչպէս որ գնտակի կամ գունտի մը վրայ մրջիւն մը կեցած ժամանակ երբ գունտը դարձունեմք՝ մրջիւնը չիյնար, եւ ոչ իսկ կըզգայ թէ գունտը կդառնայ. այսպէս եւ մեք երկրիս մեծութեանը նայելով՝ մրջիւնեն ալ պզտիկ եմք, ուստի եւ երկրիս դառնալը ամենեւին չեմք իմանար :

Հ. Երկիրս ինչ տեսակ մարմին է :

Պ. Երկիրս հաստատուն մարմին է. բայց որովհետեւ քանի որ փորելով երկրիս խորունկը կիջնամք՝ այնչափ ջերմութիւնը կըշատնայ, ասկեց գիտունք հետեւցուցին թէ երկրիս միջուկը հալած մարմին է, եւ երեսը պաղելով՝ կեղեւ կապած է :

Հ. Երկիրս արեւն մեծ է:

Պ. Երկիրս արեւն գրեթէ մեկ միլիոն երեք-հարիւր երեսուն հազար անգամ փոքր է:

Հ. Երկիրս յուսնէն մեծ է քէ փոքր:

Պ. Յիսուն անգամ ասելի մեծ է:

Հ. Երկրիս չորս բոլորը կարելի է պտըտիլ:

Պ. Կարելի է, եւ ճանապարհորդ մը որ ժամը մեկ մղոն տեղ կտրելով՝ զիշեր ցորեկ քալէ միակերպ, երեքհարիւր եօթանասունընինգ օրուան մեջ կրնայ անոր չորս կողմը պտըտիլ. վասնզի հարկ է երբեմն ծովով, երբեմն ցամաքով երթալ, ու տեղ տեղ կենալ:

Հ. Երկրիս ձեւն ինչ է, եւ ո՞րն է բեւեռը:

Պ. Երկիրս կըր կամ գնտաձեւ է, քայց հիւսիսային եւ հարաւային ծայրերը քիչ մը տափարակ, որք եւ *բեւեռք* կասուին:

Հ. Երկրիս շրջապատը ո՞րչափ է, եւ տրամագիծը կամ խորութիւնը ո՞րչափ:

Պ. Երկրիս շրջապատն է քառասուն հազար բիւրամեքր, եւ տրամագիծը կամ խորութիւնը իբր տասուիբեք հազար բիւրամեքր:

68905  
68905 - 000





ԴԱՍ Թ.

2. Երկրիս դիրքն ինչպէս կորոշուի :

Պ. Երկրիս այլեւայլ կողմերուն դիրքը գիտնալու կամ գանոնք իրարմէ դիւրաս որոշելու համար՝ աշխարհագետք չորս գլխաւոր կետ որոշեր ու անուաներ են *ժագրերկրի*, որք են *Արեւելք*, *Արեւմուտք*, *Հիւսիս*, *Հարաւ* :

3. Արեւելքն ինչ է :

Պ. Այն կետն է, ուսկից այնպէս կերեւի քեարեւը կելլէ :

4. Արեւմուտքը ո՞րն է :

Պ. Այն կետն է, ուր այնպէս կերեւի քեարեւը կմտնէ. արեւմուտքը արեւելքին հակառակ կողմն է :

5. Հիւսիսն ինչ է :

Պ. Հիւսիս է այն կետն որ մեր դիմացը կլինայ՝ երբոր աջ ձեռքերնիս արեւելքին տամք, ու ձախը արեւմուտքին :

6. Հապա հարաւը ո՞րն է :

Պ. Հարաւն է հիւսիսին հակառակ կողմի կետը, այսինքն երբ երեսնիս դեպ ինիւսիս դարձունեմք՝ ետեւնիս դեպի հարաւ կլինայ :

Հ. Գողմնական քանի ծագք կան, եւ ոյք են:

Պ. Չորս գլխաւոր ծագաց մեջտեղը կան նա-  
մեւ տարիչ չորս ծագք, որ կողմնակաւք կա-  
տուին, եւ են:

Հիւսիսային արեւելք՝ հիւսիսին ու ա-  
րեւելքին մեջտեղը .

Հիւսիսային արեւմուտք՝ հիւսիսին ու  
արեւմուտքին մեջտեղը .

Հարաւային արեւելք՝ հարաւին ու ա-  
րեւելքին մեջտեղը .

Հարաւային արեւմուտք՝ հարաւին ու  
արեւմուտքին մեջտեղը :

2. Աշխարհացոցին վրայ գլխաւոր չորս  
ծագերը թնչպէս դրուած են :

Պ. Հիւսիսը աշխարհացոցին վերի կողմը  
դրուած է, հարաւը տակը, արեւմուտքը ձախ  
կողմը, արեւելքը աջ կողմը :

---

### ԴԱՍ Ժ.

2. Երկրիս առանցքը ո՞րն է :

Պ. Երկիրս աճագին մեծութեամբ գունտ մի  
է որ ինքիր վրայ կղառնայ . եւ այն երե-  
ւակայեալ գիծը՝ որուն վրայ կենթադրեմք թէ  
կրնէ իւր շրջանը՝ կկոչուի *առանցք* :

Հ. Երկրիս բեւեռաց անունները որոնք են :  
Պ. Երկրիս առանցքին երկու ծայրերն են բե-  
ւեռները . հիւսիսային կողմի բեւեռին անունն  
է *Արջային թեւեռ* , հարաւայինը կասուի  
*Հակարջային թեւեռ* :

Հ. Երկրիս ո՞ր մասը միայն մարդիկ չեն  
կարող բնակիլ :

Պ. Երկրիս կամ երկրագնտին ամեն կողմը  
բնակած են մարդիկ՝ բաց իրեւեռներէն , որ  
ահագին սառույցներով պատած են :

Հ. Երկրագնտին վրայ ուրիշ ինչ կայ գիտ-  
նայու :

Պ. Այլ եւ այլ շրջանակներ կան , եւ գլխա-  
ւորներն են երկու . առաջինը կասուի *Հասար-  
ակած* , որ մեծ շրջանակ մի է , եւ երկրիս  
մեջտեղէն անցնելով՝ Արեւելքէ դեպ ի Արեւ-  
մուտք , զայն երկու հաւասար կտոր կրածնէ .  
որք եւ կասուին *Հիւսիսային* եւ *Հարաւային*  
*կիսագունտք* :

Հ. Հասարակածը ուրիշ ինչ անուն ունի :

Պ. Գիծ *գիշերահաւասարի* , որովհետեւ նո-  
րա մօտ եղած երկիրներուն զիշերն ու ցորեկը  
հաւասար են իրարու :

Հ. Երկրագնտին երկրորդ գլխաւոր շրջա-  
նակն ինչ կասուի :

Պ. *Միջօրեական* , որ բեւեռներէն անցնելով՝



երկիրս կապուե. եւ անոր համար միջօրեա-  
կան կասուի՝ որ երբ արեան իւր օրական շրջ-  
ջանին կամ ընթացքին մեջ այն գծին վրայ  
կուգայ, արեւ տեսնող բնակչացը ամենուն ալ  
կեսօր կլինի, եւ արեւ չտեսնողներուն կես գի-  
շեր: Միջօրեականն ալ երկրագունտը երկու  
հասասար կտոր կրածնէ, Արեւելեանն եւ Ա-  
րեւմտեան կիսագունտք:

ԴԱՍ ԺԱ.

Երկայնութիւնն եւ լայնութիւնն.

Հ. Աշխարհացոյցներու վրայ քաշուած գը-  
ծերն ինչ են:

Պ. Երկրիս չորս դին քաշուած երեւակայեալ  
շրջանակներ են, ինչպէս թէ խնձորի կամ գըն-  
տակի մը չորս կողմը դերձան կապէինք:

Հ. Հիւսիսէն դեպ իհարաւ քաշուածներն ինչ  
կասուին եւ ինչ բանի կուգան:

Պ. Միջօրեայք կամ միջօրեական գծեր կա-  
սուին, եւ երկրի մը երկայնութիւնը կցուցը-  
նեն:

Հ. Աշխարհագրութեան մէջ *երկայնութիւն* ասելով ինչ հասկընալու է:

Պ. Հասկընալու է տեղոյ մը որոշեալ միջօրեական մը ունեցած հեռաւորութիւնը: Օրինակի համար, Գաղղիացոց աշխարհացոյցներու մէջ երկայնութիւնը կ'ըսուի Փարիզու ղիտանոցէն, եւ Անգղիացոց աշխարհացոյցներուն մէջ՝ Կրինիչի ղիտանոցէն:

Հ. Արեւելքէն արեւմուտք քաշուած զըծերն ինչ են:

Պ. Զուգահեռականք են, եւ տեղեաց շայնութիւնը չափելու կգործածուին:

Հ. Հայնութիւնն ինչ է:

Պ. Տեղոյ մը հասարակածէն ունեցած հեռաւորութիւնը:

Հ. Աշխարհացոյցներու վրայ ինչպէս նշանակուած են հեռաւորութիւնք:

Պ. Աստիճաններով իւրաքանչիւր աստիճանը կրածնուի 60 մասն, եւ կցուցընէ 25 միոնիկամ 44 հազարամերի հեռաւորութիւն: Հասարակածէն: Երկրագունտը իւր չորս բոլորը 360 աստիճան ունի:

**ԳԱՍ ԺԲ.**

**Գօտիք եւ կշիռնայք .**

Հ. Կլիմայն թնչ է :

Պ. Չորս եղանակները երկրիս այլեայլ կողմերուն մէջ իրարմէ տարբեր են, եւ այն տարբերութիւնը կշիռնայ կամ օդ կկոչուի : Կլիմայն տաք կամ ցուրտ, չոր կամ խոնաւ կլինի :

Հ. Կլիմայից նայելով՝ երկիրս թնչպէս կը բաժնուի :

Պ. Հասարակածին մօտ՝ կլիման տաք է կամ այրեցած . բնեւոներուն մօտ՝ ցուրտ է կամ սառուցեալ . այրեցած գօտւոյն եւ սառուցեալ գօտւոյն մէջտեղուանքը՝ բարեխառն :

Հ. Աշխարհագրութեան մէջ գօտի ասելով թնչ կհասկըցուի :

Պ. Երեւակայեալ գօտի կամ շրջանակ մը՝ որ երկրիս բոլորտիքը կպատէ :

Հ. Բանի գօտիք կան :

Պ. Երեք . Այրեցած գօտի, որ գրեթէ 23 եւ կէս աստիճան տարածութիւն ունի հասարակածին երկու կողմը . Բարեխառն գօտիք՝ Հիւսիս

սիսային եւ. Հարաւային կիսագնտից մեջ՝ այրեցած եւ սառուցեալ գօտիներուն մեջտեղը. եւ Սառուցեալ գօտիք՝ բեւեռաց քովերը :

Հ. Քանի սառուցեալ գօտի կայ :

Պ. Երկու. իւրաքանչիւր բեւեռին քով մեկ-մեկ հատ :

Հ. Սառուցեալ գօտիներուն տակի երկիրներն ինչպէս են :

Պ. Օղը շատ ցուրտ է, եւ երկիրը տարւոյն ինն ամիսը ձիւնով ու սառուցով ծածկուած է :

Հ. Սառուցեալ գօտեաց բուսականութիւնն ինչպէս է :

Պ. Ոչ պտուղ կայ հոն՝ ոչ հունտ. խիստ քիչ ծառ կգտնուի, անոնք ալ կարճ եւ ճոզած :

Հ. Ի՞նչ կենդանիք կգտնուին :

Պ. Խիստ քիչ կենդանիք կան, եւ գլխաւորներն են եղջերու կամ վերջասպետ, ճերմակ եւ գորշ աղուես, եւ ճերմակ արջ : Սառուցեալ գօտեաց ծովերուն մեջ կգտնուին նաեւ կէտեր եւ ծովու հորթեր :

Հ. Սառուցեալ գօտիներուն տակը բնակիչ կան :

Պ. Այո, կան սակաւաթիւ աղքատ եւ տղետ բնակիչներ, որ խեղճ հիւղերու մեջ կրնակին, սակայն զուարթ բնութիւն ունին :

Հ. Մարդ եղած է մինչեւ քեւեռները զնացող :

Պ. Ոչ, այնչափ սաստիկ ցուրտ կլինի հոն-  
որ անկարելի է երթալ :

### ԴԱՍ ԺԳ.

Հ. Քանի հատ այրեցած գօտի կայ :

Պ. Մեկ հատ միայն՝ հասարակածին տակն-  
ու երկու կողմը :

Հ. Այրեցած գօտուոյն բուսականութիւնն ինչ-  
պէս է :

Պ. Շատ զարմանալի է. մի եւ նոյն ժամա-  
նակը եւ մի եւ նոյն ծառի վրայ կտեսնուի հոն  
ծաղիկ ու պտուղ միանգամայն. եւ առա-  
տութեամբ կբուսնին նարինջ, թուզ, լիմոն,  
շաքարարոյս, բամբակ, լեղակ, եւ այլն :

Հ. Այրեցած գօտուոյն տակը ինչ կենդանիք  
կան :

Պ. Բազմաթիւ օձեր, ուրոց ոմանք կարգէ  
դուրս մեծութիւն ունին : Կան նաեւ շատ մը  
կապիկ, կոկորդիլոս, առիւծ, փիղ, եւ ուրիշ  
զազաններ :



Հ. Այրեցած գօտւոյն բնակչացը վրայ թնջ տեղեկութիւն կայ :

Պ. Այրեցած գօտւոյն բնակչաց գոյնը ընդհանրապէս բուխ է. ցիցերով ու ճիւղերով շինուած հիւղերու մեջ կրնակին, տգետ են եւ ծոյլ :

Հ. Այրեցած գօտւոյն տակի երկիրներն թնջ կկոչուին :

Պ. Արեւադարձի երկիրներ :

Հ. Արեւադարձի երկիրներուն կամ այրեցած գօտւոյն կլիմայն թնջպէս է :

Պ. Տաք է, եւ հոն ամենեւին ջմեռ չլինիր :

Հ. Արեւադարձներն թնջ են :

Պ. Հասարակածին զուգահեռական երկու փոքրիկ շրջանակներ են. հիւսիսային կիսագնդին վրայ եղածը կասուի *Արեւադարձի շրջանակ*, եւ հարաւային կիսագնդին վրայինը՝ *Արեւադարձ Այծեղջեր*. սոքա հասարակածէն 23 աստիճան ու 27 մասն հեռու են :

Հ. Ինչո՞ւ համար այս շրջանակներն արեւադարձ կասուին :

Պ. Վասնզի այնպէս կերեւի բէ արեւն այս շրջանակաց վրայ որ կհասնի, փոխանակ անդին անցնելու՝ կկայնի եւ դեպ իհասարակածը կդառնայ : Երբոր արեւը Արեւադարձի շրջանակ

զետնին կհասնի՝ որ կլինի յունիսի 23-ին, կունենամք ամառուան Արեւակայքը, որ է տարուան ամենէն երկայն օրը. եւ երբոր Արեւադարձ Այծեղջեր կհասնի՝ դեկտեմբերի 22-ին, ձմեռուան Արեւակայքն է, եւ է տարուան ամենէն կարճ օրը:

Հ. Ռարեան օրերն Յրբ կսկսին կարճընալ եւ երկըննալ:

Պ. Յունիսի 24-ին (ըստ նոր տոմարի) կսկսին կարճընալ, եւ դեկտեմբերի 23-ին երկըննալ:

---

### ԴԱՍ ԺԳ.

Հ. Քանի բարեխառն գօտիք կան:

Պ. Երկու մեկը կասուի Հիւսիսային գօտիք, միւսը Հարաւային գօտիք:

Հ. Բարեխառն գօտիներուն մեջ տարին ինչպէս կբաժնուի:

Պ. Չորս եղանակի կբաժնուի, որք են Գարուն, Ամառ, Աշուն, Չմեռ:

Հ. Կրնան ինձ նկարագրել բարեխառն գօտիներուն օդն ու բերքը:

Պ. Միշտ օդը բարեխառն կամ չափաւոր կլինի, այսինքն ոչ սաստիկ տաք, ոչ սառ-

տիկ ցուրտ . առատ կգտնուի խաղող , դեղձ ,  
խնձոր , տանձ եւ ուրիշ սովորական պտուղ-  
ներ . կրօսցընէ երկիրը տեսակ տեսակ ցո-  
րեն , գարի եւ գետնախնձոր : Շագանակի ,  
ընկուզի եւ կաղնի անտառներ ունի . նմանա-  
պէս պարարտաբոյս արօտներ , որոց խոտը  
բնակիչք կհնձեն կչորցընեն ու անասնոց հա-  
մար ձմեռուան պաշար կպահեն :

Հ. Բարեխառն գօտիներուն տակը ինչ կեն-  
դանիներ կգտնուին :

Պ. Այս գօտեաց տակը բազմատեսակ կեն-  
դանիներ կգտնուին , ինչպէս ձի , կով , եզ ,  
ոչխար , այծ , եւ այլն . կգտնուին նաեւ այ-  
ծեամն , գայլ , արջ , ճագար , եւ այլն :

Հ. Բնակիչներն ո՞րք են :

Պ. Աշխարհիս մեջ գտնուած մարդոց առա-  
քինի , խելացի ու գիտունները ընդհանրապէս  
բարեխառն գօտեաց բնակիչներն են . ուստի  
եւ մեծամեծ քաղաքներ ու բազմաբիւ ազգեր  
եւ ժողովուրդներ բարեխառն գաւառաց մեջ  
կգրտնուին :



## ԴԱՍ ժԵ.

Հ. Երկրիս քանի մասը ջուր եւ քանի մասը  
ցամաք է:

Պ. Երկրագնտիս երեսին մեծագոյն մասը  
ջուր պատած, եւ փոքրը ցամաք է. այսինքն  
երեքին երկուքը ջուր է եւ մեկը ցամաք:

Հ. Երկրիս ջրը եղած մասին այլ եւ այլ  
կտորներն ինչ կասուին:

Պ. Յամաք, աշխարհ, կղզի, քերակղզի,  
գլուխ կամ հրուանդան, պարանոց, շեռ,  
սևապարտ, եւ այլն:

Հ. Երկրագնտին վրայ պատած ջրոյն այլ եւ  
այլ մասունքն ինչ կասուին:

Պ. Ովկիանոս, ծով, ծոց, նեղուց, շիւն,  
գետ, ջրվեժ, եւ այլն:

Հ. Յամաքն ինչ է:

Պ. Յամաք է այն ընդարձակ մասն երկրի՝  
ուր կրնայ մարդ ծայրէ ծայր քայլել՝ առանց  
ծովէ անցնելու:

Հ. Գանի ցամաք կայ:

Պ. Երեք. հին ցամաք, նոր ցամաք, եւ  
հարաւայիկ ցամաք:

Հ. Հին ցամաքը ո՞րն է :

Պ. Եւրոպա, Ասիա եւ Ափրիկէ :

Հ. Նոր ցամաքը ո՞րն է :

Պ. Ամերիկա, զոր գտաւ Քրիստափոր Գոլումպոս 1492-ին. սա նաեւ Նոր աշխարհ կասուի :

Հ. Հարաւային ցամաքը ո՞րն է :

Պ. Աւստրալիա կամ Նոր-Հոլանտա, որ Ովկիանիոյ մէջ է :

---

## ԴԱՍ ԺԶ.

### Ովկիանիա եւ ու.

Հ. Ովկիանոսը կամ ծովն ինչ է :

Պ. Ովկիանոս կամ ծով կասուի այն աղի ջրոյ տարածութիւնը՝ որ երկրագնդիս մեծագոյն մասը զուսած է :

Հ. Ովկիանոսին այլ եւ այլ մասուերն ինչ կասուին :

Պ. Նոյնպէս ծով կասուին, բայց զանազան անուններ ունին :

Հ. Ովկիանոսը քանի գլխաւոր մասն ունի:

Պ. Հինգ. այսինքն Ատլանտեան ովկիանոս, Մեծ ովկիանոս, Հնդկաց ովկիանոս, Սառուցեալ հիւսիսային ովկիանոս եւ Սառուցեալ հարաւային ովկիանոս:

Հ. Ասոնք աշխարհիս ո՞ր կողմերն են:

Հ. Ատլանտեան ովկիանոսը մեկ կողմէն Եւրոպայի ու Ափրիկէի, եւ միւս կողմէն Ամերիկայի մեջ կտարածուի:

Մեծ ովկիանոսը աշխարհիս ամենէն մեծ ծովն է, զրեք Ովկիանիայի բոլոր երկիրները կապտէ, եւ Ասիոյ ու Ամերիկայի մեջտեղը կտարածուի: Սա կասուի նաեւ Խաղաղական ովկիանոս եւ Հարաւային ծով:

Հնդկաց ովկիանոսը Ասիոյ հարաւային կողմն է:

Հիւսիսային Սառուցեալ ովկիանոսը հիւսիսային բեւեռը կապտէ, եւ կասուի նաեւ Սառուցեալ ովկիանոս, Արջային կամ հիւսիսային Սառուցեալ ծով:

Հարաւային Սառուցեալ ովկիանոսը ամենեւին մարդարնակ երկիր չկայ, հարաւային բեւեռը կապտէ, եւ կասուի նաեւ Սառուցեալ ովկիանոս հսկարջային, կամ Հարաւային սառուցեալ ծով:

## ԴԱՍ ԺԷ.

Ծ ո Վ Բ .

Հ. Հինգ ովկիանոսներէն ինչ ծովեր կրձեանան :

Պ. Ամեն մասնաւոր ծովերը :

Հ Սառուցեալ արջային ովկիանոսէն ո՞ր ծովերը կձեանան :

Պ. Այս երեք փոքր ծովերը . *Բարսայի ծով*՝ Ասիոյ հիւսիսակողմը, *Սպիտակ ծով*՝ Եւրոպայի հիւսիսակողմը, *Բեւեռայի ծով*՝ Ամերիկայի հիւսիսակողմը :

Հ. Հակարջային Սառուցեալ ովկիանոսէն ծով կձեանան :

Պ. Ոչ . մասնաւոր ծով մը չձեանար :

Հ. Ատլանտեան ովկիանոսէն քանի ծով կկազմուի :

Պ. Տասը . հինգը Եւրոպա, եւ հինգը հիւսիսային Ամերիկա :

Հ. Եւրոպայիները որոնք են :

Պ. *Պարթիկ ծով*, *Հիւսիսային ծով*, *Մանչի ծով*, *Կասքունի ծոց* կամ *Պիւքայի ծով* :

Յետոյ Ատլանտեան ովկիանոսը ցամաքներուն մեջ կմտնէ ու Միջերկրական ծովը կը ձեռացընէ. եւս եւ այլ եւ այլ ներքին ծովեր, որոց զլիաւորն է Սև ծովը:

Հ. Ամերիկայիները որոնք են:

Պ. Պաֆֆիևի ծով, Հուտտոնի ծով կամ ծոց, Եսքիմացոց ծով՝ Նոր-Երկրին հիւսիսակողմը, Մեքսիքոյի ծոց կամ ծով, եւ Աերիզևան ծով:

Հ. Հնդկաց ովկիանոսէն քանի ծով կձեռանայ:

Պ. Երեք ներքին ծովեր կամ մեծ ծոցեր, որք են Պեկկարայի ծով կամ ծոց, Արարիոյ ծով կամ Էօմլեևի ծոց, եւ Կարմիր ծով կամ Արարիոյ ծոց:

Հ. Մեծ Ովկիանոսէն քանի ծով կձեռանայ:

Պ. Վեց, ամենքն ալ Ասիոյ արեւելեան կողմը, եւ հիւսիսէն դեպ ինարաւ կտարածուին. այսինքն Պեկիկայ ծով, Օխոսքի ծով, Ճարիսևի ծով, Դեղիև ծով կամ Բորեայի ծով, Կասպոյտ կամ Արեւելեան ծով, եւ Զիւնաց ծով:

Հ. Կասպից ծովը որն է:

Պ. Ասիոյ ու Եւրոպայի մեջտեղը մեծ լիճ մի է:



## ԴԱՍ ԺԸ.

### Յարևափին աշխուայլ վաստերը.

Հ. Աշխարհն ինչ է:

Պ. Աշխարհագրորեն *աշխարհ* կասուի մեկ մը երեք ցամաքները մեկտեղ՝ հանդերձ ծովերով. մեկ մըն ալ որ եւ իցէ ընդարձակ երկիր որ սովորաբար մեկ բազաւորի իշխանութեան տակ է, ինչպէս են Տաճկաստան, Ռուսաստան, եւ այլն:

Հ. Նեղուցն ինչ է:

Պ. *Նեղուց* կասուի երկու ցամաքի մեջ մընացած ծովու կտորը, որով երկու ծով իրարու հետ կմիանան. այսպէս է *ձիպիշքերաշի* նեղուցը՝ Սպանիոյ հարաւակողմը, որով Ովկիանոսն ու Միջերկրականը իրարու հետ կմիանան. *Վոսիորի* կամ *Կոստանդնուպօլսոյ նեղուցը*՝ որ Սեւ ծովը Մարմարային հետ կմիացընէ:

Հ. Ծոց, գոգ, խորշ ինչ են:

Պ. *Ծոց*՝ *գոգ*՝ *խորշ* կասուին ծովուն այն կտորներն որ ցամաքի մեջ կմտնեն՝ իրարմէ մեծ կամ փոքր տարածութեամբ:

2. Նաւահանգիստն թնջ է:

Պ. Ծովուն այն կտորն է որ դեպ իցամաք երկնցած է. եւ վերիններէն աւելի փոքրը լինելով՝ հովերու սաստկութենէն ազատ կլինի, որով եւ նաւերը կրնան մեջը ապահով կենալ. այսպէս են Պօլսոյ, Օտեսսայի եւ ուրիշ քաղաքաց առջեւն եղած նաւահանգիստները:

3. Կղզին թնջ է:

Պ. Կղզի կասուի այն երկիրը՝ որոյ չորս կողմը ջրով պատած է. օրինակի համար՝ *Քորսիքա կղզին՝ Իտալիոյ, Գաղղիոյ եւ Սպանիոյ մեջտեղը:*

4. Խումր կղզեաց ձրն է:

Պ. Խումր կղզեաց կասուին շատ մը իրարու մօտ կղզիներ մեկտեղ առնուած, ինչպէս *Ռիկադեան կղզիք՝ Սկովտիոյ հիւսիսային ծայրը:*

5. Արշիպեղագոսը ձրն է:

Պ. Իրարու մօտ եղած այլ եւ այլ խումրք կղզեաց մեկտեղ *արշիպեղագոս* կասուին, ինչպէս է Բրիտանական արշիպեղագոսը՝ Եւրոպայի հիւսիսային արեւմտեան կողմը:

6. Թերակղզին եւ՝ ցամաք կղզին ձրն է:

Պ. Թերակղզի կամ *ցամաք կղզի* կասուի այն երկիրն որ երեք կողմէն ջրով պատած է,

Ե. մեկ դիւն միայն ցամաքի հետ կալած : Աշխարհիս ամենէն մեծ բերակողին Է Ափրիկէ :

Հ. Պարանոցն ինչ է :  
Պ. Պարանոց կասուի բերակողոյն այն կրտորն որ երկու ծովերու մէջ լեզուի պէս կերկրնայ ու ցամաքին հետ բերակողին կմիացրնէ, ինչպէս Է Սիւեզի պարանոցը որով Ափրիկէն Ասիոյ ցամաքին հետ կմիանայ :

### ԳԼՈՒԽ ԺԹ.

Հ. Գլուխը կամ հրուանդանն ինչ է :  
Պ. Գլուխ կամ հրուանդան կասուի դեպ իծով երկնցած ցամաքը, ինչպէս Բարեշուայ գլուխը կամ հրուանդանը՝ Ափրիկէի հարաւային ծայրը :  
Հ. Սարն ինչ է :  
Պ. Սար կասուին ցած գլուխները :  
Հ. Լեռն ինչ է :  
Պ. Երկրիս բարձր տեղերը շեռ կասուին :  
Հ. Լեռանց գօտին ո՞րն է :  
Պ. Լեռանց գօտի կասուին իրարու կալած այլ եւ այլ լեռներու շարքը :



Հ. Աշխարհիս ամենէն բարձր լեռները որոնք են, եւ քանի մերք բարձրութիւն ունին :

Պ. Ասիոյ մեջ *Հիւսալայա* լեռներն են, որոց բարձրութիւնն է եօթնհազար ութհարիւր քսան մերք՝ ծովու երեսէն :

Հ. Ամերիկայի բարձրագոյն լեռները որոնք են, եւ բարձրութիւննին որչափ է :

Պ. Ամերիկայի ամենէն բարձր լեռներն են *Մեծ Բորտիլեանք*՝ հարաւային Ամերիկոյ արեւմտակողմը . բարձրութիւննին է եօթըհազար վեցհարիւր իննսունվեց մերք :

Հ. Եւրոպայի ամենէն բարձր լեռները որոնք են :

Պ. Եւրոպայի ամենէն բարձր լեռներն են *Ալպեան* լեռները :

Հ. Ափրիկէի բարձր լեռները որոնք են :

Պ. *Ատլաս* լեռներն են :

Հ. Հրաբուխն ինչ է :

Պ. *Հրաբուխ* կասուի այն լեռը՝ որ բերնէն բոց ու խանձող կամ *շաւա* (կրային հալած նիւթ) կրափէ դուրս, ինչպէս Նափոլիի քով *Վեսուվ* լեռը :

Հ. Լեռնակն ու բլուրը ինչ են :

Պ. Երբոր բարձրաւանդակ մը ընդհանրապէս ճիւղհարիւր մերթէն աւելի բարձրութիւն չունի՝ *լեռնակ* ու *բլուր* կասուի :

Հ. Լեռնադաշտակն ինչ է :

Պ. Լեռնադաշտակ կասուին լեռներու վրայ կամ մեջտեղուանքն եղած տափարակ կտորները :

Հ. Կիրճն ինչ է :

Պ. Կիրճ կասուի լեռներու մեջ եղած նեղ անցքը :

Հ. Լերանց ո՞ր մասը *ձոր* կամ *հովիտ* կը կոչուի :

Պ. Երկու լերանց մեջտեղն եղած տափարակ կտորը :

Հ. Դաշտն ինչ է :

Պ. Դաշտ է երկրի մը ցած տափարակ ու խոտաեւտ կտորը :

Հ. Անապատն ինչ է :

Պ. Անապատ է ընդարձակ երկիր անմարդաբնակ ու անբեր :

Հ. Աշխարհիս ամենէն մեծ անապատը ո՞րն է :

Պ. Աշխարհիս ամենէն մեծ անապատն է Ափրիկէի Սահրա կամ Մեծ անապատ կոչուածը :

Հ. Ովասիսն ինչ է :

Պ. Ովասիս է անբեր աւազուտ անապատի մեջ եղած պտղաբեր ցամաք կտորը :

**ԴԱՍ Ի.**

*Ջրոյ այլ եւ այլ սեասկներն ու կտորները.*

Հ. Գետն ինչ է:

Պ. Գետն է յորդ ջրոյ ընթացք մը որ կերթայ ծովը կրափի:

Հ. Առուակը կամ գետակն ինչ է:

Պ. Գետի պէս ջրոյ ընթացք է, բայց անկէց նեղ եւ սակաւաջուր, որ գետի կամ ուրիշ առուակի մէջ կրափոսի:

Հ. Գետախառնունքն ինչ է:

Պ. Երկու գետոց իրարու հետ միացած տեղը:

Հ. Բազուկն ինչ է:

Պ. Բազուկ կամ *նիւղ* կասուի ուրիշ ջրոյ ընթացքին մէջ վազած ջրոյ ընթացքը:

Հ. Ափն կամ գետափն ինչ է:

Պ. Ափն կամ *գետափուռք* կասուին գետի կամ ո՞ր եւ իցէ ջրոյ ընթացքին երկու եզերքը:

Հ. Ծովուն եզերքը ինչ կասուին:

Պ. Ծովուն եզերքը կամ մօտ եղած տեղուանքը կասուին *ծովափն* եւ *ծովեզերք*:

Հ. Գետի մը ձախակողմեան ու աջակողմեան ավուանքը ո՞րն է :

Պ. Երբոր մեկը երեսը դեպ իգետոյն բերանը դարձրնէ, աջ կողմն ընկած եզերքը աջակողմեան ավուանքն է, եւ ձախ դին ընկածը ձախակողմեան :

Հ. Գլուխն ու գետարերանը որո՞նք են :

Պ. Գետի կամ վտակի *ցուխ* կամ *աղբերակն* կասուի ջրոյ ընթացքին բխած տեղը. իսկ *քերակն* կամ *գետարերակն*՝ ջրոյ մը ուրիշ ջրոյ մէջ բափուած տեղը :

Հ. Հեղեղատն ինչ է :

Պ. Հեղեղատ կամ *հեղեղ* կասուի սաստիկ ուժով վազող ջուրը, որ սովորաբար յորդաններէն կամ ձեան հալելէն կձեւանայ եւ ամառը կցամքի :

Հ. Զրվեծն ինչ է :

Պ. Զրվեծ կամ *սահակք* կասուի բարձր տեղէ վար ցատքող գետը կամ առուակը :

Հ. Լիճն ինչ է :

Պ. Լիճն է մեծ աւազանի պէս չորս կողմը ցամաք պատած ընդարձակ ջուր. ուստի ելք չունեցող ծովերն ալ կարելի է մեծամեծ լճեր համարիլ :

Հ. Աշխարհիս ամենէն մեծ լիճը ո՞րն է:

Պ. Կասպից ծովն է:

Հ. Ճահիճն ինչ է:

Պ. *Ճահիճ* է այն ջրոյ ժողովը, որ լճի պէս խոր չլինիր, շատ անգամ ալ մեջը ջրային բոյսեր կբուսնին:

Հ. Ջրանցքն ինչ է:

Պ. *Ջրանցք* կասուի այն առուակը որ փորելով բացուած ու մօտակայ ջրերուն մեկտեղ գալովը ձեւացած է. ասոր վախճանն է երկու առուակ իրարու հետ՝ կամ առուակ մը ծովու հետ միաւորելով՝ վաճառաց տեղէ տեղ փոխադրութիւնը դիւրացընել. ուստի եւ վաճառականութեան ծաղկելուն մեծ օգուտ ունի ջրանցքներուն բազմութիւնը:







ՄԱՍՆ Բ.

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ԴԱՍ ԻԱ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ.

### Կառավարութիւնք.

Հ. Քաղաքական աշխարհագրութեան վախճանն ինչ է:

Պ. Սովրեցընել երկրիս այլ եւ այլ մասանց անունը, բաժանմունքը, դիրքը, բնութիւնը, շնորհաբաւութիւնը, բնակիչքը, տէրութեան կամ կառավարութեան կերպերը, քաղաքները, բերքը, ազգաց եւ ժողովրդոց կրօնքն ու սովորութիւնները՝ հանդերձ ուրիշ հարկաւոր տեղեկութիւններով:

Հ. Տէրութիւն կամ կառավարութիւնն ինչ է:

Պ. Այն վարչութիւնն է՝ որով ազգի կամ ժողովրդեան մը գործերը կտեսնուին կկառավարուին:

Հ. Քանի տեսակ կառավարութիւն կայ:

Պ. Շատ տեսակ, բայց զլիսաւորներն են *միապետական* կառավարութիւն կամ *միապետութիւն*, որոյ ինքնիշխան գլուխ կեցած է թագաւորը կամ կայսրը. *սահմանադրական միապետութիւն*, յորում թագաւորը ինքնիշխան չէ, այլ ամեն բան տերութեան սահմանադրութեանը համեմատ պէտք է գործէ. *ազնուապետական* կառավարութիւն կամ *ազնուապետութիւն*՝ որ մէկքանի իշխանաւոր մարդոց ձեռքովը կկառավարուի. եւ *հասարակապետական կառավարութիւն* կամ *հասարակապետութիւն*՝ յորում ժողովուրդը կընտրէ իւր իշխանները:

Հ. Մայրաքաղաքն ինչ է:

Պ. Կառավարութեան արուանիստ քաղաքը կամ զլիսաւոր իշխաններուն բնակած տեղն է: Օրինակի համար՝ Տաճկաստանի մայրաքաղաքն է Կոստանդնուպօլիս, Ռուսիոյ՝ Փեթրպուրկ, Գաղղիոյ՝ Փարիզ, Անգղիոյ՝ Լոնտոն, եւ այլն:

Հ. Թագաւորութիւնն ինչ է:

Պ. Այն տերութիւնն է, որոյ զլուխն է թագաւոր:

Հ. Կայսերութիւնն ինչ է:

Պ. Այն տերութիւնը, որոյ զլուխն է կայսր:

Հ. Թագաւոր մը Յրբ կրնայ կայսր ասուիլ:  
Պ. Երբ իւր իշխանութեանը տակ ուրիշ թա-  
գաւորութիւն այ ունենայ:

**ԴԱՍ ԻՔ.**

**Կ ր օ ն ք.**

Հ. Կրօնն ինչ է:

Պ. Կրօնը կամ կրօնքն է ճշմարտին Աստու-  
ծոյ կամ ուրիշ եակաց տրուած պաշտօնը:

Հ. Ամեն մարդիկ գԱստուած կպաշտեն:

Պ. Ոչ. *հեթանոս* կոչուած ժողովուրդները  
կուռք, տարերք, կրակ' ու նաեւ կենդանիք  
կպաշտեն. ուստի եւ կասուին կուապաշտ,  
տարրապաշտ, կրակապաշտ, կենդանապաշտ:

Հ. Գլխաւոր կրօնները որոնք են:

Պ. Քրիստոնէութիւն, մահմետականութիւն,  
հրեութիւն, եւ կուապաշտութիւն, որոյ գլխա-  
ւոր ճիւղերն են' պրահմականութիւն' իՀընդ-  
կաստան, եւ պուտականութիւն' իԶինաստան:

Հ. Այս ամենայն կրօնից մեջ ճշմարտին  
Աստուծոյ պաշտօնը սովրեցընողը ո՞րն է:

Պ. Քրիստոնէութիւնն է միայն:

Հ. Քրիստոնեութիւնը քանի գլխաւոր ճիւղ կրթմանի :

Պ. Երեք. այսինքն, ա, արեւելեան եկեղեցի, որոյ զանազան ճիւղերն են դաւանութիւն Յունաց, Հայոց, եւ Ասորոց. թ, արեւմտեան եկեղեցի կամ հռովմեադաւանութիւն կամ պապականութիւն. եւ գ, նորադանդութիւն կամ բողոքականութիւն՝ որոյ գլխաւոր ճիւղերն են լուտերականութիւն եւ կալվինականութիւն :

Հ. Կրօնական շէնքերն ինչ կասուին :

Պ. Քրիստոնեայք իրենց աստուածապաշտութեան համար որոշած տեղը կկոչեն *եկեղեցի*, մահմետականք՝ *մզկիթ* կամ *մամի*, հրեայք՝ *ժողովրդաւոց* կամ *սինակոկայ*, կռապաշտք՝ *կրատուռն* կամ *մեհեռան*, կրակապաշտք՝ *ատրուշան* կամ *կրակատուռն* :

---

## ԳԱՍ ԻԳ.

### *Լեզուք եւ ցեղք մարդկան.*

Հ. Ամեն ազգեր ու ժողովուրդներ մի եւ նոյն լեզուն կխօսին :

Պ. Ոչ. իրարմէ տարբեր լեզուներ. ուստի հազարաւոր լեզուներ կան աշխարհիս վրայ :

Հ. Ամենայն մարդ ալ մի եւ նոյն գոյնն ունի:  
Պ. Ոչ. կան որ *սպիտակ* կամ *ճերմակ* են, ինչպէս Ասիոյ բնակչաց մեծ մասը, անոնցմէ սերած Ամերիկացիք, ու Եւրոպացիք. կան որ *սև* են, ինչպէս Ափրիկէի, Հնդկաստանի եւ Ամերիկայի բնակչաց մեծ մասը. կան որ *շէկ* են, ինչպէս Ամերիկայի սեւերը. կան որ *պղնձագոյն* են, ինչպէս Մալայեցիք. կան նաև որ *դեղին* են, ինչպէս Ճափոնացիք եւ Չինացիք:

Հ. Ամենայն ազգք եւ ժողովուրդք նոյնպէս խելացի եւ կրթուած են:

Պ. Ոչ. ոմանք *վայրենութեան* մեջ են, ոմանք *բարբարոսութեան* մեջ, ոմանք *տգիտութեան* ու *անկրթութեան* մեջ բաղուած, եւ ոմանք կրթուած ու արուեստից եւ գիտութեանց մեջ ծաղկած՝ ինչպէս Եւրոպացիք:

Հ. Վայրենի ժողովրդոց վիճակը ո՞րն է:

Պ. Վայրենիները կոպիտ, կատաղի եւ անգութ են, ինչպէս Ամերիկայի սեւերը: Սոցա բնակարանները տձեւ հիւղեր են. ոչ կան կարասի ունին, եւ ոչ աշխատութեան գործիք. եւ վերջին աստիճանի տգետ են:

Հ. Բարբարոս ժողովրդոց վիճակը ո՞րն է:

Պ. Բարբարոսաց մեջ շատ նարուստ մար-



դիկ ալ կան, բայց սովորաբար ժողովուրդը աղքատ, տգետ եւ ողորմելի է, ինչպէս Արաբացիք եւ Հնդիկք:

2. Քաղաքակիրք ժողովրդոց վիճակը ճիշդն է:

Պ. Առաջիններէն բոլորովին տարրեր. աստուծոնք ունին դպրոցներ, վարժարաններ, ուսումնարաններ, եկեղեցիներ, գեղեցկաշէն տներ, հոյակապ սլալատներ, արուեստանոցներ, գործարաններ, հիւանդանոցներ, աղքատանոցներ, որբանոցներ, լաւ ճամբաներ, երկաթուղիներ, եւ այլն, եւ այլն, ինչպէս Անգղիա, Գաղղիա, եւ ուրիշ անբութիւնք եւրոպայի:



ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆ ԱՇԽԱՐՀԻ,

Ե Ի Ր Ո Պ Ա.

ԴԱՍ ԻԴ.

Բնակիչ, կրօնք, սարածուքիւն, օղ, երկիր, քերք Եւրոպայ:

Հ. Եւրոպայի բնակիչը սրջափ է:

Պ. Երկուհարիւր եօթանասուն միլիոն:

Հ. Ասոնք ինչ դաւանանք ունին:

Պ. Ասոնց 436 միլիոնն է հռոմէական, 65 միլիոնը յունական, 52 միլիոնը բողոքական, 1 միլիոնն այլ եւ այլ կրօններ, 3 միլիոնը մահմետական, 3 միլիոնը հրեայ, եւ 16 միլիոնը կուպաշտ, որ Ռուսիոյ եւ Աքանտինասիա բերակղզոյն հիւսիսային ծայրերը տարածուած են:

Հ. Եւրոպայի տարածութիւնը զրջափ է :

Պ. Եւրոպայի տարածութիւնն է 95,500 բիւր-  
մեքր քառակուսի, այսինքն Ասիոյ եւ Ամե-  
րիկայի չորրորդ մասին չափ, եւ Ափրիկէի  
երրորդ մասին չափ. բայց անոնց պէս ըն-  
դարձակ անապատներ չունի. ուստի եւ տա-  
րածութեանը նայելով՝ ամենէն բազմամար-  
դը, ամենէն քաղաքակիրթը, զօրաւորը, ծաղ-  
կածն ու վաճառաշահն է :

Հ. Եւրոպայի կլիման կամ օդն ինչպէս է,  
եւ մարդուս մտացը վրայ եւ երկրին վրայ ինչ  
ազդեցութիւն ունի :

Պ. Բաց ինիւսիսային մասէն՝ Եւրոպայի օ-  
դը կամ կլիման բարեխառն լինելով՝ մար-  
դուս ամէն մտաւոր կարողութիւնները կբա-  
նայ կսրրէ, ու երկրէն ամէն տեսակ բերք  
կրուսցընէ :

Հ. Երկիրն ինչպէս է :

Պ. Տեղ տեղ լեռնոտ է, ինչպէս Նորվեկիա  
եւ Զուիցերի, եւ տեղ տեղ դաշտային, ինչ-  
պէս Ռուսաստան՝ որ լայնածաւալ դաշտեր  
ունի :

Հ. Բերքն ինչ է :

Պ. Բարեխառն տեղերուն բերքն է ցորեն,  
քրինձ, մսրացորեն, զետնախնձոր, ձիբապը-  
տուղ, խաղող, եւ կենաց ուրիշ հարկաւոր

արմտիք. իսկ հարաւային կողմերուն բերքերըն են տաքութիւն ուզող բոյսեր, ինչպէս քամրակ, շաքարենի եւ ուրիշ տունկեր:

Հ. Եւրոպան ինչ կենդանիներ ունի:

Պ. Գրեթէ ամեն տեսակ օգտակար կենդանիք կգտնուին Եւրոպա, իսկ վնասակարները խիստ քիչ են:

Հ. Ի՞նչ հանքեր ունի Եւրոպան:

Պ. Հանքային ածուխ, անագ, պղինձ, կապար եւ մանանանդ երկաթ. նոյնպէս ալ մարմարիոնի եւ ամեն տեսակ քարի հանքեր:

---

## ԴԱՍ ԻՆ.

*Սահմանիք եւ քաժանորան Եւրոպայ:*

Հ. Եւրոպայի սահմանները որո՞նք են:

Պ. Եւրոպայի սահմաններն են Հիւսիսէն Արջային Սառուցեալ ովկիանոսը,  
Հարաւէն Միջերկրական ծովը, Սեւ ծովն  
ու Կովկաս լեռանց գօտին.

Արեւմտքէն Ատլանտեան ովկիանոսը.

Արեւելքէն Կասպից ծովը, Ուրալ լեռները, Ուրալ գետը, եւ Քարա գետակը:

Հ. Եւրոպան քանի՛ գլխաւոր մասն կրածնուի :

Պ. Տասնըօթը գլխաւոր մասն կամ աշխարհ կրածնուի :

Հ. Ո՞ր կողերմը կիյնան ասոնք :

Պ. Չորսը հիւսիսակողմը, օթը մեջտեղը, վեցը հարաւակողմը :

Հ. Հիւսիսայինները որոնք են :

Պ. Եւրոպայի Ռուսաստան, Տանիմարքա, Շուետ, եւ Բրիտանական կղզիք :

Հ. Մեջտեղիները որոնք են :

Պ. Գաղղիա, Պելճիա, Հուլանտա, Չուիցերի, Աստրիա, Բրուսիա, եւ Գերմանական Դաշնակցութիւն կամ Գերմանիոյ երկրորդական տերութիւնները :

Հ. Հարաւայինները որոնք են :

Պ. Փորբուկայ, Սպանիա, Իտալիա, Եւրոպայի Տաճկաստան, Յունաստան, եւ Յունիական կղզիք :

## ԴԱՍ ԻԶ.

### *Եւրոպայի ծովերը.*

Հ. Եւրոպան քանի հատ ծով ունի :

Պ. Երեք. Արջային Սառուցեալ ովկիանոս՝ հիւսիսակողմը, Ատլանտեան ովկիանոս՝ արեւմտակողմը, Միջերկրական ծով՝ հարաւակողմը :

Հ. Այս երեք ծովերէն՝ ուրիշ քանի ծով կը ձեւանայ :

Պ. Տասնըվեց :

---

## ԴԱՍ ԻԷ.

### *Եւրոպայի նեղուցները.*

Հ. Եւրոպա քանի նեղուց ունի :

Պ. Տասնըվեց, եւ իւր ծովերը այս նեղուցներով իրարու հետ կմիանան :

Հ. Ռուսիոյ հիւսիսակողմն եղած նեղուցը որն է, եւ ինչ ծովեր կմիացնէ իրարու հետ :

Պ. Վայկացի նեղուցն է, որով Արջային սառուցեալ ովկիանոսի երկու մասերն իրարու հետ կմիանայ :

Հ. Ո՞ր նեղուցներն են անոնք որ Հիւսիսային ծովը Պալթիկ ծովուն հետ կմիացրնեն :

Պ. Այս հինգը . Սքակերրաք, Բաբկլաք, Սոււնտ, Մեծ Պէլք եւ Փոքր Պէլք՝ Նորվեկիոյ, Շուետի եւ Տանիմարքային մեջտեղը :

Հ. Ո՞ր նեղուցն է որ Մանշը Հիւսիսային ծովուն հետ կմիացրնէ :

Պ. Քալէի նեղուցը կամ անցքը՝ Գաղղիոյ եւ Անգղիոյ մեջտեղը :

Հ. Ո՞ր նեղուցներով Ատլանտեան ովկիանոսը Իռլանտայի ծովուն հետ կմիանայ :

Պ. Սուրբ Գեորգայ ջրանցքովն ու Հիւսիսային ջրանցքովը, որ Մեծին Բրիտանիոյ եւ Իռլանտայի մեջտեղն են :

Հ. Ո՞ր նեղուցը Ատլանտեան ովկիանոսը Միջերկրականին հետ կկապէ :

Պ. Ճիպրայթարի նեղուցը՝ Սպանիոյ ու Ափրիկէի մեջտեղը :

Հ. Որոնք են այն նեղուցներն որ Միջերկրականէն ձեւացած վեց ծովերն իրարու հետ կմիացրնեն :

Պ. Պոնիֆաչիոյի նեղուցը՝ Քորսիքա կղզւոյն ու Սարտենիոյ մեջտեղը . Մեսինայի փարոսը՝ որ Սիկիլիոյ ծովը Յոնիական ծովուն հետ կմիացրնէ . Օթրանթի ջրանցքը որ Յոնիական



ծովը Ադրիական ծովուն հետ կմիացրնէ. Տարտանելի կամ Չանագգայէսի նեղուցը՝ որ Արշիպեղագոսը Մարմարայի հետ կմիացրնէ՝ Եւրոպական Տաճկաստանի ու Ասիոյ Տաճկաստանին մեջտեղը. Կոստանդնուպօլսոյ նեղուցը կամ ջրանցքը՝ որ Սեւ ծովը Մարմարային հետ կը միացրնէ. Ենիգայէի նեղուցը՝ որ Սեւ ծովը Ազախու ծովուն հետ կմիացրնէ՝ Ռուսիոյ հարաւակողմը :

---

## ԴԱՍ ԻԸ.

### *Եւրոպայի ծոցերը.*

Հ. Եւրոպայի մեջ գլխաւոր քանի ծոց կայ :

Պ. Տասուերկու :

Հ. Պալքիկ ծովը ո՞ր ծոցերը կձեւացրնէ :

Պ. Այս երեքը. Լիվոնիոյ եւ Ֆինլանտիոյ ծոցերը՝ Ռուսիոյ արեւմտակողմը. Պորնեան ծոցը՝ Ռուսիոյ եւ Շուեաի մեջտեղը :

Հ. Հիւսիսային ծովը ո՞ր ծոցերը կկազմէ :

Պ. Այս երեքը, Մըրբէի ծոց եւ Ֆորթի ծոց, Սկովտիոյ ծովեզերքը, եւ Զուիտերգէ՝ Հոլանտայի մեջ :

Հ. Ատլանտեան ովկիանոսը ինչ ծոց կձե-  
ւացրնէ :

Պ. Ատլանտեան ովկիանոսէն կձեւանայ  
Պրիսքըլի ջրանցքը՝ Անգղիոյ հարաւային ա-  
րեւմտակողմը :

Հ. Միջերկրականին ծոցերը որոնք են :

Պ. Այս երկուքը . Լիոնի ծոցը՝ Գաղղիոյ հա-  
րաւակողմը , եւ Ճենովայի ծոցը՝ Իտալիոյ մէջ :

Հ. Յոնիական ծովէն ո՞ր ծոցերը կձեւանան :

Պ. Այս երկուքը . Տարենտոնի ծոցը՝ Իտա-  
լիոյ հարաւակողմը , եւ Լեփանթոյի ծոցը .  
Յունաստանի մէջ :

Հ. Արշիպեղագոսին ձեւացուցած ծոցը ո՞րն է :

Պ. Սեւանիկի ծոցը՝ Տաճկաստանի հարաւա-  
կողմը :

---

## ԴԱՍ ԻԹ.

### *Եւրոպայի կղզիները.*

Հ. Եւրոպայի մէջ ո՞րչափ կղզի կայ :

Պ. Եւրոպայի ամեն ծովերն ալ բազմաթիւ  
կղզիներ ունին . բայց գլխաւորները կամ գեթ  
գլխաւոր խումբերը կրնան տասը համարուիլ :

Հ. Սառուցեալ ովկիանոսին զլիաւոր կղզիները որոնք են,

Պ. Սփիցպէրկ եւ Նոր-Ջեմլեա:

Հ. Ատլանտեան ովկիանոսին զլիաւոր կղզիները որոնք են:

Պ. Իսլանտա՝ Տանիմարքայի ձեռքը. Մեծն Բրիտանիա եւ Իռլանտա՝ որ Բրիտանական կղզիք կասուին:

Հ. Միջերկրականին զլիաւոր կղզիները որոնք են:

Պ. Բորսիքա՝ Գաղղիոյ ձեռքը, Սարտենիա՝ Փիեմոնթի ձեռքը, Սիկիլիա՝ այժմ ինքնագլուխ, Կրետե (Կիբրիտ)՝ Օսմանցւոց ձեռքը, Մալթա՝ Անգղիացւոց ձեռքը:

---

## ԴԱՍ Լ.

*Թերակղզիք եւ պարսկոց Եւրոպայ.*

Հ. Եւրոպայի մեջ քանի թերակղզի կայ:

Պ. Վեց. երեքը մեծ եւ երեքը փոքր:

Հ. Մեծերը որոնք են:

Պ. Սքանտինաւիա, Սպանիա եւ Փորթուկալ, եւ Իտալիա:

- Հ. Փոքրները որոնք են :
- Պ. Եռօթլանտ, Մորա եւ Խրիմ :
- Հ. Ասոնք Եւրոպայի ո՞ր կողմը կիյնան :
- Պ. Երկուքը հիւսիսակողմը, մեկը հարաւային արեւմտակողմը, երկուքը հարաւակողմը, եւ մեկը հարաւային արեւելակողմը :
- Հ. Եւրոպայի հիւսիսակողմն եղած թերակղզիները որոնք են :
- Պ. Սքանտինաւիա, յորուս եւ Շուետ եւ Նորվեկիա, եւ դիմացը Եռօթլանտ՝ Տանիմարքայի մեջ :
- Հ. Հարաւային արեւմտակողմն եղածը ո՞րն է :
- Պ. Հարաւային արեւմտակողմն է այն մեծ թերակղզին յորուս եւ Սպանիա ու Փորթուկալ :
- Հ. Հարաւայինները որոնք են :
- Պ. Իտալիա, եւ Պեղոպոնես կամ Մորա՝ Յունաստանի մեջ :
- Հ. Հարաւային արեւելակողմն եղածը ո՞րն է :
- Պ. Խրիմ՝ Ռուսաստանի մեջ, Սեւ ծովին մօտ :
- Հ. Եւրոպայի մեջ քանի՞ գլխաւոր պարանոց կայ :
- Պ. Երկու. Կորնթոսի պարանոցը՝ որով Մորան հիւսիսային Յունաստանի հետ կմիանայ, եւ Փերեքոփի պարանոցը՝ որով Խրիմը Ռուսիոյ հետ կմիանայ :

## ԴԱՍ ԼԱ.

### *Գլուխի կամ հրոշանդանի Եւրոպայ.*

Հ. Եւրոպայի մեջ քանի՞ երեսելի գլուխ կամ հրոշանդան կայ, եւ ո՞ր են :

Պ. Տասնըմեկ. երկուքը հիւսիսային կողմը, եօթը արեւմտակողմը, եւ երկուքը հարաւային կողմը :

Հ. Հիւսիսայինները որո՞նք են :

Պ. Գլուխ Հիւսիսոյ՝ Նորվեկիոյ հիւսիսակողմը՝ Մակերեօ կղզւոյն մեջ, եւ Լինտ՝ Նորվեկիոյ հարաւակողմը :

Հ. Արեւմտեանները որո՞նք են :

Պ. Բլիբր՝ Իռլանտայի հարաւային արեւմտակողմը. Լիզարտ եւ Լենտուենտ՝ Անգղիոյ հարաւային ծայրը. Հոկ՝ Գաղղիոյ հիւսիսային արեւմտակողմը. Թրաֆալկար՝ Սպանիոյ հարաւակողմը. Սուրբ Վիցենցիոս՝ Փորթուկալի հարաւային արեւմտակողմը. Ֆինիսթեր Սպանիոյ հիւսիսային արեւմտակողմը :

Հ. Հարաւայինները որո՞նք են :

Պ. Փասարօ՝ Սիկիլիոյ հարաւակողմը, եւ Մաթափան՝ Մորայի հարաւակողմը :

## ԴԱՍ ԼԲ.

### *Լեռինք եւ հրաբուխք Եւրոպայ.*

Հ. Եւրոպան քանի՛ հատ անուանի լեռներու գօտիներ ունի:

Պ. Ուրբ, եւ եւ

*Ուրբալ լեռինք՝* որ Եւրոպան Ասիայէն կրածնեն.

*Սքանտինաւեան Ալպեանք՝* Շուետի ու Նորվեկիոյ մեջտեղը.

*Պիրենեանք՝* Գաղղիոյ եւ Սպանիոյ մեջտեղը.

*Ալպեանք՝* Գաղղիոյ, Զուիցերիի, Գերմանիոյ եւ Իտալիոյ մեջտեղը.

*Ապենեանք՝* որ բոլոր Իտալիան կկտրեն կանցնին.

*Կարպատ* լեռինք Աւստրիոյ մեջ.

*Պաշգան* լեռինք Տաճկաստանի մեջ.

*Կովկաս՝* որ Եւրոպան Ասիայէն կրածնէ, Կասպից ծովուն եւ Սեւ ծովուն մեջտեղը:

Հ. Եւրոպայի ամենէն բարձր լեռը ո՞րն է, եւ ո՞րչափ է բարձրութիւնը:

Պ. Սպիտակ լեռն է՝ Ալպեան լեռանց մէկը, եւ բարձրութիւնն է ծովուն երեսէն 4795 մետր:



2. Եւրոպան քանի գլխաւոր հրաբուխ ունի:  
Պ. Չորս, եւ են  
*Վեսուվ*՝ Իտալիոյ մեջ Նափուլիի մօտ.  
*Հեքլա*՝ Իսլանտայի մեջ:  
*Ետնա*՝ Սիկիլիոյ մեջ.  
*Սրբունյոյի*՝ Միջերկրական ծովուն Լի-  
պարեան կղզեացր մեջ:

---

### ԴԱՍ ԼԳ.

#### *Եւրոպայի գետերը.*

2. Եւրոպայի մեծամեծ գետերը քանի հատ են:  
Պ. Երեսունըմեկ հատ:  
2. Ասոնք ո՞ր կրափին:  
Պ. Եւրոպայի ծովերը, նեղուցներն ու ծո-  
ցերը:  
2. Սառուցեալ ծովուն մեջ ո՞ր գետը կրա-  
փի, եւ ինչ երկրէ կանցնի:  
Պ. *Փելչուրա*, եւ Ռուսաստանէն կանցնի:  
2. Սպիտակ ծովուն մեջ ո՞ր գետը կրափի,  
եւ ինչ երկրէ կանցնի:  
Պ. *Տիբուս*, եւ Նոյնպէս Ռուսաստանէն  
կանցնի:

Հ. Պալքիկ ծովը թափուող գետերը որոնք են, եւ ո՞ր երկիրներէն կանցնին:

Պ. Այս ջորսն են. *Տուևա*՝ իՌուսաստան. *Նևմեն*՝ իՌուսաստան եւ իԲրուսիա, *Վիսրուչա*՝ իԼենաստան եւ իԲրուսիա, եւ *Օտէր*՝ իԲրուսիա:

Հ. Հիւսիսային ծովը թափուող գետերը որոնք են, եւ ո՞ր երկիրները կոռոզեն:

Պ. Այս հինգն են. *Էրպս*՝ որ Գերմանիան կոռոզէ, *Հուևու*՝ որ Զուիցերիկն կրբխէ, Գաղղիան Գերմանիայէն կզատէ եւ Ստորին Նահանգները կոռոզէ. *Մեօզ*՝ որ Գաղղիան ու Ստորին Նահանգները կոռոզէ. *Էսքօ*՝ որ Գաղղիայէն ու Պելճիայէն կանցնի. եւ *Թեւզ* կամ *Թամիզ*՝ որ Անգղիան կոռոզէ:

Հ. Մանչին մեջ թափուողը ո՞րն է:

Պ. *Սէն*՝ որ Փարիզէն կանցնի:

Հ. Ովկիանոս թափուողները որոնք են, եւ ինչ երկիրներ կոռոզեն:

Պ. Այս եօրն են. *Լուար*, *Կարոն*՝ որ Գաղղիան կոռոզեն. *Միևեօ*, *Տուրօ*, *Թալօ* եւ *Կուլառիանա*՝ որ Սպանիայէն եւ Փորթուկալէն կանցնին. *Կուլառալքիվիր* Սպանիոյ մեջ:

Հ. Միջերկրական ծովը թափուողները որոնք են:

Պ. Այս ջորսն են. *Էսքրօ*՝ Սպանիոյ մեջ, *Հը-*

*սողալու* (Ռօն) Գաղղիոյ մէջ, *Առևօ* եւ *Տի-  
բերիս*՝ Իտալիոյ մէջ :

Հ. Ադրիական ծովը թափուողները որոնք են :

Պ. Այս երկուքը . *Փօ* եւ *Ա'տիակ*՝ Իտալիոյ մէջ :

Հ. Սեւ ծովը ինչ գետեր կրափին , եւ ո՞ր եր-  
կիրները կոռոզեն :

Պ. Այս երեքը . *Դաւուռք*՝ որ կոռոզէ Գեր-  
մանիան , Մանաստանը , Տանկաստան եւ  
Ռուսաստան . *Տևեպեր* եւ *Տևերեր*՝ որ կոռո-  
զեն գՌուսաստան :

Հ. Ազախու ծովուն մէջ թափուող գետը ո՞րն է :

Պ. *Տու՛*՝ որ Նախիջեանէն կանցնի :

Հ. Կասպից ծովը թափուողները որոնք են ,  
եւ ուսկից կանցնին :

Պ. Այս երկուքը . *Վոլկա* եւ *Ուրալ*՝ որ Ռու-  
սաստանի մէջէն կանցնին :

Հ. Եւրոպայի ամենէն մեծ գետը ո՞րն է :

Պ. *Վոլկա* , որոյ երկայնութիւնն է եօթըհա-  
րիւր մղոնէն աւելի , կամ 3,400 հազարմետր :

Հ. Վոլկայէն ետքը ո՞րն է մեծը :

Պ. *Դաւուռք* , որոյ երկայնութիւնն է 2,800  
հազարմետր :



## ԿԱՍ ԼԴ.

### Ե շ Ր Ո Ս Յ Յ Ի Ղ Ճ Ե Ր Ք .

- Հ. Եւրոպայի գլխաւոր լճերը քանի՞ հատ են :  
Պ. Տասնըվեց :
- Հ. Շուետի երկրին մեջ քանի՞ լիճ կայ, եւ որոնք են :  
Պ. Երեք. Վեկեր, Վերեր եւ Մե'րառն :
- Հ. Ռուսիոյ մեջ քանի՞ լիճ կայ եւ որոնք են :  
Պ. Չորս. եւ են Սայնա, Լատոկա, Օնեկա եւ Փեյիուս :
- Հ. Չուիցերիի լճերը որոնք են :  
Պ. Այս հինգը. ձիւնեւրայի՝ Նեոշարեյի՝ Յուրիքի՝ Լուչեռնայի եւ Բոսքանցայի լճերը :
- Հ. Աւստրիոյ երեսելի լիճը որն է :  
Պ. Պարպռն՝ Մաճառստանի մեջ :
- Հ. Իտալիոյ անուանի լճերը որոնք են :  
Պ. Մաճորե լիճը, Գոմոյի եւ Կարտայի լճերը :

## ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԵՒՐՈՊԱ.

### ԴԱՍ ԼԵ.

*Ռ ո շ ա ս ս ա ն .*

Կայսերութիւն.

Հ. Ռուսաստանի բնակիչը սրջափ է :

Պ. Վարսուհուներէք միլիոն :

Հ. Ռուսիոյ սահմանը սրն է :

Պ. Հետն առնելով Կովկասեան զաւառները, որոց մէկ մասը Ասիոյ մէջ է, եւ Լեհաստանի թագաւորութիւնը, Ռուսիոյ սահմանն է Հիւսիսէն արջային Սառուցեալ ովկիանոս .

Արեւելքէն Կասպից ծովը, Ռերայ գետը, Ռերայ լեռներն եւ Քարա գետը .

Հարաւէն Եւրոպայի Տաճկաստան, Սեւ ծովը, Ասիոյ Տաճկաստան եւ Պարսկաստան .

Արեւմտքէն՝ Շուետ, Պորնեան ծոց, Պալթիկ ծով, Բրուսիա եւ Աստրիա .

Հ. Ռուսաստանի մեծութիւնը որչափ է, եւ քանի մաս կրածնուի:

Պ. Ռուսաստան տասն անգամ աւելի մեծ է քան զԳաղղիա. եւ կրնայ չորս մասն բաժնուիլ. այսինքն *քուս Ռուսաստան, Լեհաստան, Կովկասեան գաւառք եւ Կղզիք:*

Հ. Ռուսաստանի մայրաքաղաքը որն է:

Պ. *Փերրպուրկ* (550,000 բն.) զոր 1703-ին Մեծն Պետրոս շինեց՝ Նեւա գետին վրայ. անուանի է իւր գեղեցիկ ու կանոնաւոր շէնքերովը:

Հ. Երկրորդ մայրաքաղաքը որն է:

Պ. *Մոսքուա* կամ *Մոսկով* (390,000 բն.) տերութեան հին մայրաքաղաքը. հոս է սերագնեայ Լազարեան իշխանաց մեծակառոյց ձեմարանն ու եկեղեցին:

---

## ԴԱՍ ԼԶ.

Հ. Ռուսաստանի միւս գլխաւոր քաղաքները որոնք են:

Պ. *Աժտերխան* (50,000 բն.) վուկա գետին բերանը՝ տերութեան վաճառաշահ քաղաքներէն մեկն է. բնակչաց մեծ մասը Հայ:



*Ռիկա* (65,000 ըն.) ամուր ու վաճառաշահ քաղաք.

*Օտեւասա* (75,000 ըն.) Սեւ ծովուն վրայ տերութեան ամենեն վաճառաշահ քաղաքը.

*Թայդան* կամ *Թակակոք* (15,000 ըն.) Ազախու ծովուն վրայ բանուկ նաւահանգիստ:

*Սեւասրուիոյ* կամ *Ազեւո* (6,000 ըն.) Սեւ ծովուն վրայ նաւահանգիստ. 1855-էն առաջ Ռուսիոյ նաւային զօրութեան կեդրոնն էր. նոյն տարին Գաղղիացոց ու Անգղիացոց երկար ու զօրաւոր պաշարմանը դիմանային ետեւ բոլորովին կործանեցաւ, հիմա նորէն սկսաւ շինուիլ:

*Սիւմեթրուիոյ* կամ *Ազմէշիո* (25,000 ըն.) Խրիմու գլխաւոր եւ ամենեն ծաղկած քաղաքը:

*Թեոդոսիա* կամ *ԳեՅե* (12,000 ըն.) Սեւ ծովուն վրայ նաւահանգիստ. հոս է ազգային Խալիպեան Ռեսուսմնարանը:

*Քիշնեւ* (53,000 ըն.) Պեսարապիոյ մայրաքաղաքը:

*Կերչ* (15,000 ըն.) Ենիգայէի նեղուցին բերանը բանուկ նաւահանգիստ:

*Նոր Նախիչևան* (13,000 ըն.) հայաբնակ եւ գեղեցիկ քաղաք.

Հայաբնակ քաղաքներ են նաեւ *Հիւ խրիմ*, *Խարասու*, *Պաղչեսարայ*, *Գրիգորու-*

սօլիս, Եւսպատորիա, Նոդայսք կամ Ասի-  
քօշեա :

Հ. Լեհաստանն ինչ երկիր է :

Պ. Լեհաստանը 1831-էն առաջ թագաւո-  
րութիւն կըսուէր, հիմա փոխարքայութիւն է՝  
Ռուսիոյ կայսերութեան տակ :

Հ. Մայրաքաղաքը ո՞րն է :

Պ. Վարշաւ կամ Վարշա՛ւա (150,000 բն.)  
Վիսթուլա գետին վրայ :

Հ. Ռուսաստանի գլխաւոր կողմերը ո-  
րո՞նք են :

Պ. Արջային Սառուցեալ Ովկիանոսին մեջ  
Նոր Զեմլեա, Վայկուց եւ Բաշկուշէվ կող-  
մերը, եւ Պալթիկ ծովուն մեջ Աշանտ :

Հ. Տերութեան կառավարութեան կերպն ինչ-  
պէս է :

Պ. Միապետական :

Հ. Կրօնքը ինչ է :

Պ. Յունադաւան :

Հ. Եւրոպայէն դուրս ինչ երկիրներ ունին  
Ռուսք :

Պ. Ասիոյ մեջ՝ Կովկաս լեռանց հարաւա-  
կողմը Վրաստան, Շիրուան, Իմերէթ, Ա-  
սպազա, Հայաստանիս մեկ մասը, եւ Ասիոյ  
հիւսիսակողմը՝ Սիպիթ :

Ամերիկայի մեջ՝ Ռուսիոյ Ամերիկան :

## ԴԱՍ ԼԷ.

### Տ ա ն ի ռ ա Ր Բ ա .

Հ. Տանիմարքայի բնակիչը ճրջափ է:

Պ. Երկու միլոն հինգհարիւր հազար:

Հ. Տանիմարքան ուր է, եւ ինչպէս կրածնուի:

Պ. Պալքիկ ծովուն բերանն է, եւ Երկու մաս կրածնուի. *ցամաքային գաւառք եւ կղզիք:*

Հ. Տամարքային գաւառները որոնք են:

Պ. *Եւրքանտ*, եւ *Հոլլըայնի* ու *Լաւէնպուրկի* դքսութիւնները:

Հ. Կղզիները որոնք են:

Պ. Գլխաւորներն են, Պալքիկ ծովուն մեջ՝ արշիպելոզոս Դանեաց, յորում են *Չէլանտ* եւ *Ֆիէն* կամ *Ֆիոնիա* կղզիները. Ատլանտեան օվկիանոսին մեջ՝ *Ֆէրէօր* կղզիները. եւ *Իսլանտա*՝ Ատլանտեան եւ Սառուցեալ օվկիանոսներուն մեջտեղը: Այս կղզւոյն հարաւային ծովեզերքն է հռչակաւոր *Հէքլա* հրաբուխը:

Հ. Տանիմարքայի տերութեան մայրաքաղաքը որն է:

Պ. *Քոփենհայ* (Քեօպենհաւն) (130,000 բն.)  
*Ջէրսնտ* կղզւոյն մեջ, Եւրոպայի գեղեցիկ  
մայրաքաղաքներէն մէկն է:

Հ. Տանիմարքայի կառավարութեան կերպն ինչպէս է:

Պ. Սահմանադրական միապետութիւն:

Հ. Կրօնքն ինչ է:

Պ. Լութերական:

Հ. Ամերիկայի մեջ ինչ երկիր ունին Տանիմարքացիք:

Պ. *Կրեօնշանտիա*, *Սուրբ Խաչ* կղզիներն ու Փոքր Անթիլեանց *Սուրբ Թովմաս* կղզին:

---

## ԳԱՍ ԼԸ.

### *Շուես եւ Նորվեկիա.*

Թագաւորութիւն.

Հ. Շուեսի բնակիչը որչափ է:

Պ. Հինգ միլիոն:

Հ. Սահմանները որոնք են:

Պ. Հիւսիսէն արջային Սառուցեալ օվկիանոս.

Արեւելքէն Պալթիկ ծովը, Պոթնեան ծոցը եւ Ռուսաստան .

Հարաւէն Սքակերրաք եւ Պալթիկ ծովը .  
Արեւմտքէն Ատլանտեան ովկիանոս եւ  
Հիւսիսային ծովը :

Հ. Քանթի մաս կրածնուի :

Պ. Երեք. Շուկո, Նորվեկիա եւ Կղզիք :

Հ. Բուն Շուկոյը կամ Շուկոյիան ուր է, եւ  
մայրաքաղաքը ո՞րն է :

Պ. Բուն Շուկոյիան արեւելակողմն է, եւ  
մայրաքաղաքն է Սրոքհոլմ (100,000 բն.) Մե-  
լաուն լճին վրայ վաճառաշահ քաղաք :

Հ. Նորվեկիան ուր է, եւ մայրաքաղաքը  
ո՞րն է :

Պ. Արեւմտակողմն է, եւ մայրաքաղաքը  
Քրիստիանիա (40,000 բն.) համանուն ծո-  
ցին վրայ :

Հ. Լափոնիան ուր է :

Պ. Նորվեկիոյ եւ Շուկոյի հիւսիսակողմն  
է, անմարդաբնակ, մշտասառուոյց ձիւներով  
պատած :

Հ. Շուկոյի կղզիները ուրոնք են :

Պ. Պալթիկ ծովուն մեջ Օլաւո եւ Կորչաւո .  
Սառուցեալ ովկիանոսին մեջ՝ Նորվեկիոյ ծո-  
վեզերքը ԼոՅՅուտէն կղզեաց խումբը :

Հ. Շուետները Եւրոպայէն դուրս ինչ երկիր ունին :

Պ. Ամերիկայի մեջ Սուշրք Բարբուռլիմէոս կղզին, որ Փոքր Անթիլեանց մեկն է :

Հ. Շուետի կառավարութեան կերպն ինչ է :

Պ. Սահմանադրական միապետութիւն :

Հ. Կրօնքն ինչ է :

Պ. Լուտերական :

---

## ԴԱՍ ԼԹ.

### *Բրիտանական կղզիք կամ Անգղիա.*

Թագաւորութիւն.

Հ. Բրիտանական կղզեաց բնակիչը ո՞րչափ է :

Պ. Քսանութը միլիոն :

Հ. Բրիտանական կղզիներն ինչ են :

Պ. Բրիտանական կղզիները Եւրոպայի հիւսիսային արեւմտակողմը արշիպելագոս մի կձեւացընեն՝ երկու մեծ կղզիներով, չորս խմբով կղզեաց եւ եօթը կղզեակներով :

Հ. Երկու մեծ կղզիները որո՞նք են :

Պ. Երկու մեծ կղզիներն են Մեծ Բրիտանիա եւ Իռլանտա :



Հ. Մեծ Բրիտանիան ինչ գլխաւոր բաժանումն ունի:

Պ. Բոււն Անգղիա եւ Սկոտլանդիա:

Հ. Անգղիան քանի կոմսութիւն կրածնուի:

Պ. Յիսունութեկու կոմսութիւն:

Հ. Անգղիոյ մայրաքաղաքը ո՞րն է, եւ վրան ինչ գլխաւոր զիտելիք կայ:

Պ. *Լոնտոն* ( Լը'նտըն ) կամ *Լոնտրա* ( 2,700,000 բն. ) Թամիզ գետին վրայ շինուած է, ու Եւրոպայի ամենէն բազմամարդ եւ ամենէն վաճառաշահ քաղաքն է:

Հ. Միւս երեսելի քաղաքները որոնք են:

Պ. *Լի'վրիուշ* ( 380,000 բն. ) վաճառաշահ նաւահանգիստ. *Մե'նչըսթըր* ( 310,000 բն. ) եւ *Պը'րմիկեմ* ( 180,000 բն. ) որ ձեռագործաց կողմանէ շատ անուանի են. *Պրի'սթըր* ( 140,000 բն. ) ծովային վաճառականութիւնը շատ բանուկ:



ԴԱՍ Խ.

*Սկովսիա, Իռլանդա.*

2. Սկովտիան քանի կոմսութիւն կրածնուի:  
Պ. Երեսունուիրեք:
3. Մայրաքաղաքը ո՞րն է:  
Պ. *Էտինսկ* (140,000 բն.) համալսարանը անուանի:
4. Սկովտիոյ ամենէն մեծ քաղաքը ո՞րն է:  
Պ. *Կլե'սկո* (290,000 բն.) համալսարանը հրոջակատոր:
5. Իռլանտան քանի գաւառ կրածնուի:  
Պ. Զորս:
6. Իռլանտայի մայրաքաղաքը ո՞րն է:  
Պ. *Ծուբլին* (310,000 բն.) Իռլանտայի ծովուն վրայ՝ Լոնտրայէն ետքը Բրիտանական կղզեաց առաջին մեծ քաղաքն է:
7. Իռլանտան ուրիշ ինչ երեսելի քաղաք ունի:  
Պ. *Բորք* (200,000-բն.) վաճառաշահութեամբը Իռլանտայի երկրորդ քաղաքն է:

Հ. Բրիտանիոյ կղզեաց ջորս խումբերը թնջ  
անուններ ունին :

Պ. Շէ'րլընտ, Որկադեան, Հերրիդեան եւ  
Սորլիկեան կղզիք, ջորսն ալ Ատլանտեան  
ովկիանոսին մէջ :

Հ. Միս եօթը մանր կղզիները որոնք են :

Պ. Մեն եւ Է'նկլսի' Իռլանտիոյ ծովուն  
մէջ. Ուայր, Արիկեի, Կե'ռնսի եւ Ճերսի'  
Մանշի մէջ. Հէլկոյէնտ' Հիւսիսային ծովուն  
մէջ :

---

### ԴԱՍ ԽԱ.

Անգղիոյ բերքը, կառավարութիւնը,  
կրօնը, գաղթականութիւնները.

Հ. Անգղիոյ վաճառականութիւնն ինչ աս-  
տիճանի ծաղկած է :

Պ. Անգղիան իւր 27,000 նաւերովը բոլոր  
աշխարհիս հետ առուտութիւնն ունի. տերութեանց  
մէջ ամենէն ճարտարն ու վաճառաշահն է,  
եւ երկիրը ջրանցքներով ու երկաթուղիներով  
պատած է, որ մեծ դիւրութիւն կուտան իւր  
վաճառականութեանը :

Հ. Բրիտանական կղզեաց կառավարութիւնն  
Բնջպէս է :

Պ. Սահմանադրական միապետութիւն, եւ  
բազաւորութիւնը ժառանգական է :

Հ. Կրօնքն Բնջ է :

Պ. Անգղիոյ եւ Սկոտիոյ մեջ՝ բողոքական,  
Իռլանտայի մեջ՝ հռովմեական :

Հ. Եւրոպայի մեջ Անգղիացիք ուրիշ Բնջ  
տեղեր ունին :

Պ. *Ճիւղիւրէրը* կամ *Ճիւղիւրացիք* քաղաքը  
համանուն նեղուցին վրայ՝ Սպանիոյ հարա-  
ւակողմը . անառիկ է բերդը՝ 460 մեքր բարձր  
ժայռի վրայ շինուած : *Մալթա* կղզին Միջեր-  
կրականին մեջ, եւ *Յանիական* կղզիները՝  
Յունաստանի ծովեզերքը :

Հ. Ասիոյ մեջ Բնջ երկիրներ ունին :

Պ. Հնդկաստանի մեծագոյն մասը, *Սէյլան*  
եւ *Սինկապուր* կղզիները :

Հ. Ափրիկէի մեջ Բնջ երկիրներ ունին :

Պ. Բարեյուսոյ գլուխը, Գաղղիոյ կղզին,  
Սուրբ Հելինէ կղզին, Սենեկալին մեկ կտորը :

Հ. Ամերիկայի մեջ Բնջ տեղեր ունին :

Պ. Նոր Բրիտանիան, անգղիական Կույա-  
նան եւ Փոքր Անթիլեան կղզեաց մեծ մասը :

Հ. Ովկիանիոյ մեջ թնջ երկիր ունին :

Պ. Նոր Հոլանտա :

Հ. Այս երկիրներուն բնակիչներն ալ մեկ-տեղ հաշուելով, Անգղիոյ տերութեան իշխանութեան տակը ընդ ամենը յորչափ հոգի կայ :

Պ. Երեքհարիւր միլիոնէն ասելի :

---

### ԴԱՍ ԽԲ.

*Գ ա դ դ ի ա կ ա լ Ֆ ր ա ն ս .*

Կայտերութիւն.

Հ. Գաղղիոյ բնակիչը յորչափ է :

Պ. Երեսուներկեց միլիոն :

Հ. Սահմանն թնջ է :

Պ. Հիւսիսէն Գերմանիա, Հոլանտա եւ Հիւսիսային ծովը :

Արեւելքէն Պատենի դքսութիւնը, Զուիցերի, Սալձոյա եւ Փիեմոնթ :

Հարաւէն Միջերկրական ծովն ու Պիրենեան լեռինքը՝ որովք Սպանիայէն կրածնուի :

Արեւմտքէն Կասքոնեան ծոց, Ատլանտեան ովկիանոս, Մանչ եւ Բալէի նեղուցը՝ որով Անգղիայէն կզատուի :

Հ. Գաղղիան քանի մասն կրածնուի :

Պ. Ուրսունըվեց բաժին ( տեփարբըման ) :

Հ. Մայրաքաղաքը ո՞րն է :

Պ. Փարիզ (1,550,000 բն.) Սեն գետին վրայ, Լոնտոնեն ետքը իւր բազմամարդութեամբն ու հարստութեամբը Եւրոպայի առաջին քաղաքն է, ուսմանց եւ գիտութեանց կողմանէ ալ իրեն հաւասարը չկայ :

Հ. Գաղղիան ուրիշ ինչ երեսելի քաղաքներ ունի :

Պ. Լիոն (300,000 բն.) մետաքսեղէն կերպասներուն կողմանէ աշխարհիս առաջին քաղաքը :

Մարսէյ կամ Մարսիշիս (250,000 բն.) Միջերկրական ծովուն վրայ Գաղղիոյ առաջին վաճառաշահ նաւահանգիստը :

Պորտո (155,000 բն.) բոլոր աշխարհիս հետ զինիի մեծ առուտուր ունի :

Սրբասպուրկ (80,000 բն.) վաճառաշահ քաղաք. հուջակաւոր է մայր եկեղեցին ու մեջի ժամացոյցը :

Թուլոն (42,000 բն.) Միջերկրական ծովուն վրայ ամուր նաւահանգիստ. հոս կկենան պատերազմական նաւուց մեծ մասը :

Սէն-Տընի (18,000 բն.) Փարիզի մօտ. անուանի է մայր եկեղեցին՝ բազաւորաց գե-



րեզմաններովը. հոն է նաեւ մեր վերջին թագա-  
ւորին Լեւոն վեցերորդի գերեզմանը :

Վերսայլ (40,000 քն.) Փարիզէն կես ժամ  
հեռու. հռչակաւոր է մեջի թագաւորական մե-  
ծակառոյց պալատն ու պարտեզը՝ բազմա-  
թիւ շատրուաններովը :

---

### ԴԱՍ ԽԳ.

Հ. Գաղղիոյ կառավարութեան կերպն ինչ է :

Պ. Միապետութիւն :

Հ. Վաճառականութիւնը, երկրագործութիւ-  
նը, արուեստք եւ գիտութիւնք ինչ աստիճանի  
ծաղկած են :

Պ. Անգղիայէն ետքը աշխարհիս առաջին  
վաճառաշահ տերութիւնն է Գաղղիա. երկրա-  
գործութիւնը, արուեստներն ու գիտութիւն-  
ներն ալ վերջին կատարելութեան հասած են :

Հ. Գաղղիացիք Եւրոպայէն դուրս ինչ եր-  
կիրներ ունին :

Պ. Ասիոյ մեջ Հնդկաստանի մեկ մասը, ո-  
րոյ գլխաւոր քաղաքն է Փոնրիշէրի .

Ափրիկէի մեջ Ալճերի կամ Ճեզայիր,  
Սենեկալին մեկ մասը, Բորեա եւ Պուրպոն  
կղզիները .

Ամերիկայի մեջ՝ Սուրբ Պետրոս եւ Մի-  
քելոն կղզիները՝ Սուրբ Լաւրենտիոսի ծոցին  
մեջ. Կուառտարուֆիս եւ Կոչյանա Գաղ-  
ղիական :

---

ԴԱՍ ԽԴ.

Պ ե շ ճ ի ա.

Թագաւորութիւն.

- Հ. Պելճիոյ բնակիչը ո՞րչափ է :
- Պ. Չորս միլիոն վեցհարիւր հազար :
- Հ. Սահմանը ո՞րն է :
- Պ. Հիւսիսէն Հոլանտա .  
Արեւելքէն Գերմանիա եւ Հոլանտա .  
Հարաւէն Գաղղիա .  
Արեւմտքէն Հիւսիսային ծովը :
- Հ. Պելճիոյ մայրաքաղաքը ո՞րն է :
- Պ. Պրիւքսէշ (260,000 բն.) Եւրոպայի գե-  
ղեցկաշէն քաղաքաց մեկը :
- Հ. Ուրիշ ինչ գլխաւոր քաղաքներ ունի :
- Պ. Անվերս կամ Անդուերպիս (90,000 բն.)  
բանուկ նաւահանգիստ .

*Կանտ* կամ *Կենթ* (115,000 ըն.) մեծ ու վաճառաշահ քաղաք.

*Լիեժ* կամ *Լիւրքիլս* (80,000 ըն.) Մեծ գետին վրայ, հանքային ածուխի մեծ առուտուր ունի:

Հ. Կառավարութեան կերպը ինչ է:

Պ. Սահմանադրական միապետութիւն:

Հ. Կրօնքն ինչ է:

Պ. Բնակչաց մեծ մասը հռովմեական է:

---

### ԳԱՍ ԽԵ.

*Հոլանտա կամ Ստրիւն Լանհանգֆ.*

Թագաւորութիւն.

Հ. Հոլանտայի բնակիչը ո՞րչափ է:

Պ. Երեք միլիոն հինգհարիւր հազար:

Հ. Սահմանը ո՞րն է:

Պ. Հիւսիսէն ուարենմտքէն Հիւսիսային ծովը. Հարաւէն Պելճիա.

Արեւելքէն Գերմանիա:

Հ. Հոլանտայի մայրաքաղաքը ո՞րն է:

Պ. *Ամստըրտամ* (260,000 ըն.) Զուիտերգէի վրայ սքանչելի նաւահանգիստ, ու վաճառաշահ եւ հարուստ քաղաք:

Հ. Հոլանտան ուրիշ ինչ երեւելի քաղաքներ ունի :

Պ. *Լահե* կամ *Հայիս* կամ *Հասկ* (80,000 բն.) քաղաքորը հոս կընստի .

*Ռոքրերտաւ* (105,000 բն.) Մեօզ գետին վրայ վաճառաշահ քաղաք :

Հ. Տերուրեան կառավարութիւնն ինչպէս է :

Պ. Սահմանադրական միապետութիւն :

Հ. Կրօնքը ինչ է :

Պ. Կալվինական :

Հ. Հոլանտացիք Եւրոպայէն դուրս ինչ երկիրներ ունին :

Պ. Ափրիկէի մէջ *Սուրք Գեորգ*՝ հիւսիսային Կուինեայի մէկ կղզին .

Ամերիկայի մէջ՝ *Կուլյաևա* Հոլանտիոյ, *Քիւրասսօ* եւ Անրիլեանց մէջ մեկքանի փոքր կղզիներ :

Ովկիանիոյ մէջ՝ Սոմաթրա կղզւոյն մէկ մասը, Ճաւա կղզւոյն մէկ կտորը, *Ամպոյնա* եւ ուրիշ քանի մի մանր կղզիներ :



## ԴԱՍ ԽԶ.

### Զուիցերի կամ Հեղուեսիա.

Գաշնակցութիւն.

Հ. Զուցերիի բնակիչը որչափ է :

Պ. Երկու միլիոն չորսհարիւր հազար :

Հ. Սահմանը որն է :

Պ. Հիւսիսէն Գերմանիա .

Արեւելքէն Աւստրիա .

Հարաւէն Իտալիա .

Արեւմտքէն Գաղղիա :

Հ. Քանի մասն կրածնուի :

Պ. Քսանուերկու նահանգ :

Հ. Գլխաւոր քաղաքները որոնք են :

Պ. Հիւսիսային կողմը Պագէշ կամ Պաշ կամ Պագիշէա (23,000 բն.) Զուիցերիի ամենէն վաճառաշահ քաղաքը .

Յուրիխ (12,000 բն.) համանուն լճին վրայ .

Մեջտեղը Պէռն (23,000 բն.) գլխաւոր քաղաք եւ ամենէն բազմամարդը .

Լիւցեռն (9000 բն.) համանուն լճին վրայ.  
Հարաւային արեւմտակողմը ձիկեւրս  
կամ ԿեկեՅ կամ Ժշեկիվ (28,000 բն.) Զուի-  
ցերիի ամենէն մեծ քաղաքն է. ծոցի ժամա-  
ցոյցները անուանի:

Հ. Այս նահանգաց կառավարութեան կերպն  
ինչպէս է:

Պ. Ամեն նահանգներն ալ անկախ կառա-  
վարութիւն ունին՝ իրարու զաշնակից:

Հ. Կրօնքնին ինչ է:

Պ. Քսանութիւն նահանգաց ինը հատը  
հռովմեադաւան են, վեցը բողոքական, եւ  
եօրը խառն, այսինքն իրենց կէսը հռովմեա-  
դաւան եւ կէսը բողոքական:

---

## ԴԱՍ ԽԷ.

Ա շ ա ս ռ ի ա .

Կայսերութիւն.

Հ. Աստրիոյ բնակիչը ճրջափ է:

Պ. Երեսունընը միլիոն հինգհարիւր հա-  
զար:



Հ. Աստրիոյ կայսերութիւնը ինչո՞վ կկազմուի եւ սահմանը ո՞րն է:

Պ. Աստրիոյ կայսերութիւնն այլ եւ այլ քաղաքորութիւններով ու տերութիւններով կկազմուի, եւ սահմանն է

Հիւսիսէն Սաքսոնիա, Բրուսիա, Լեհաստան, Ռուսաստան.

Արեւելքէն Ռուսաստան եւ Տաճկաստան.

Հարաւէն Տաճկաստան, Ադրիական ծովն ու Իտալիա.

Արեւմտքէն Պաւերա եւ Զուիցերի:

Հ. Աստրիոյ մայրաքաղաքը ո՞րն է:

Պ. Վլեննա կամ Վիեն (500,000 բն.) Դանուբ գետին վրայ՝ Գերմանիոյ ամենէն մեծ քաղաքն է: Հոս է Միսիթարեանց մեկ վանքն ու տպարանը:

Հ. Գլխաւոր քաղաքները որոնք են:

Պ. Հիւսիսային կողմը Փրակա (140,000 բն.) Պոնեմիոյ քաղաքորութեան մայրաքաղաքը:

Հարաւակողմը Թրևառ (85,000 բն.) Ադրիական ծովուն վրայ վաճառաշահ նաւահանգիստ, եւ Լիւրիկէի քաղաքորութեան ամենէն մեծ քաղաքը:

Արեւելակողմը Պուռա կամ ՕՖեն (52,000 բն.) Դանուբին աջակողմեան ա-

փանցը վրայ՝ Մաճառօտանի կամ Հունգարիոյ բազաւորութեան մայրաքաղաքը. գեղեցիկ կամրջով մը կպած է Փէշք քաղաքին (110,000րն.) հետ որ Դանուբին միւս ափանցը վրայ շինուած է եւ Մաճառօտանի ամենէն մեծ քաղաքն է:

Հ. Իտալիոյ մէջ ինչ երկիր ունի Աւստրիան:

Պ. *Վենետիկ* քաղաքը հանդերձ զաւառովը:

Հ. Կառավարութեան կերպն ինչպէս է:

Պ. Միապետութիւն:

Հ. Կրօնքն ինչ է:

Պ. Ընդհանրապէս հռովմեադաւան:

---

### ԴԱՍ ԽԸ.

*Բ r n z u ի ա.*

Թագաւորութիւն.

Հ. Բրուսիոյ բնակիչը ձրջափ է:

Պ. Տասնրեօքը միլիոն հինգհարիւր հազար:

Հ. Սահմանն ինչ է:

Պ. Հիւսիսէն Պալքիկ ծովն ու Մերլեմպուրկ. Արեւելքէն Լեհաստան եւ Ռուսաստան. Հարաւէն Սաքսոնիա եւ Աւստրիա.

Արեւմտքէն Հաննովեր:

Հ. Այս սահմանէն դուրս եղած մեծ դքսութիւնը ո՞րն է :

Պ. Մեծ դքսութիւն Ստորին Հռենոսի, որոյ գլխաւոր քաղաքն է *Քոյունիա* կամ *Քէլն* (100,000 բն.) :

Հ. Բրուսիոյ մայրաքաղաքը ո՞րն է :

Պ. *Պետրիև* (460,000 բն.) Եւրոպայի գեղեցիկ քաղաքներէն մէկն է :

Հ. Ուրիշ երեսելի քաղաքները որո՞նք են :

Պ. Հարաւակողմը *Պրեսպա* (120,000 բն.) Օտեր գետին վրայ, բազմամարդութեանը կողմանէ տերութեան երկրորդ քաղաքը :

Հիւսիսային արեսելակողմը՝ *Տանցիկ* (62,000 բն.) Վիսրուլա գետին վրայ տերութեան գլխաւոր նաւահանգիստը. *Քեօնիկսպերկ* (78,000 բն.) Բրուսիոյ հին մայրաքաղաքը :

Հ. Բրուսիացոց կրօնքն ի՞նչ է :

Պ. Մեծագոյն մասինը լուտերական եւ կալվինական, եւ փոքր մասինը հռովմեական :



ԴԱՍ ԽԹ.

*Գերմանիա կամ Գերմանական դաշ-  
նակցութիւն.*

Հ. Գերմանական դաշնակցութեան բնակիչը  
ծրջափ է:

Պ. Երեսուներհինգ միլիոն:

Հ. Գերմանական դաշնակցութեան սահմա-  
նը ո՞րն է:

Պ. Հիւսիսէն Պալքիկ ծովը, Տանիմարքա եւ  
Հիւսիսային ծովը.

Արեւմտքէն Հոլանտա, Պելճիա եւ Գաղ-  
ղիա.

Հարաւէն Զուիցերի եւ Աստորիա.

Արեւելքէն Աստորիա եւ Բրուսիա:

Հ. Գերմանական դաշնակցութիւնը ձեւացը-  
նող տերութիւնները քանի՞ հատ են:

Պ. Քառասուն, ամենքն ալ իրարմէ անկախ:

Հ. Ասոնց մեջ քանի՞ բազաւորութիւն կայ,  
քանի՞ մեծ դքսութիւն, քանի՞ դքսութիւն եւ  
քանի՞ ազատ քաղաք:

Պ. Չորս բազաւորութիւն.

Տասնըզորս մեծ դքսութիւն եւ դքսութիւն.  
Զորս ազատ քաղաք:

Հ. Զորս բազաւորութիւնները որոնք են ի-  
րենց մայրաքաղաքներովը:

Պ. Պաւերա, մայրաքաղաքը Մոնաքոյ կամ  
Միւնխէն, Միւնխ. (135,000 բն.) եւրոպայի  
գեղեցիկ ու ծաղկած քաղաքներէն մեկը:

Սաքսոնիա, մայրաքաղաքը Տրեզուս  
կամ Տրեզուս (110,000 բն.)

Հաննովեր, մայրաքաղաքը Հաննովեր  
(29,000 բն.)

Վիւրթեմպերկ, մայրաքաղաքը Շրուք-  
հարտ (47,000 բն.):

Հ. Գլխաւոր մեծ դքսութիւններն ու դքսու-  
թիւնները որոնք են՝ իրենց մայրաքաղաքնե-  
րովը:

Պ. Մեծ դքսութիւն Պատենի, մայրաքաղա-  
քը Բարչարունկ (26,000 բն.):

Իքսութիւն Պրաւնշվայկի կամ Պրուս-  
վիքի, մայրաքաղաքը Պրուսնովիք (40,000 բն.):

Մեծ դքսութիւն Սաքս-Վեյմարի, մայրա-  
քաղաքը Վեյմար (12,000 բն.):

Իքսութիւն Սաքս-Բոստրիկ-Կորա, մայ-  
րաքաղաքը Կորա (15,000 բն.):

Մեծ դքսութիւնք *Հէսսէն-Քասելի*, մայրաքաղաքը *Քասել* (36,000 բն.), եւ *Հէսսէն Տարմշրատի*. մայրաքաղաքը *Տարմշրատ* (33,000 բն.):

Մեծ դքսութիւնք *Մեքլենպուրկ-Շվերինի*, մայրաքաղաքը *Շվերին* (15,000 բն.):

Դքսութիւն *Նասսաւի*, մայրաքաղաքը *Վիսպարտ* (16,000 բն.) անուանի են ախտաբոյժ ջերմուկները. եւ *Մեքլենպուրկ-Սրրեկիցի*, մայրաքաղաքը *Նոր Սրրեկից* (7,000 բն.):

Հ. Զորս ազատ քաղաքները որոնք են :

Պ. *Լիւպեք* (27,000 բն.) Պալթիկ ծովուն մօտ .

*Ֆրանքֆորթ* (65,000 բն.) Մայն գետին վրայ .

*Ամպուրկ* (165,000 բն.) Էլպա գետին վրայ .

*Պրեմա* կամ *Պրեմեն* (61,000 բն.) Վեգեր գետին վրայ :

Հ. Դաշնակցութեան ընդհանուր զործողութիւնները ուր կտեսնուին :

Պ. Ֆրանքֆորթի ժողովոյն մեջ :

Հ. Դաշնակցութեան գլխաւոր կրօնքն ինչ է :

Պ. Հիւսիսային կողմը լութերական, եւ հարաւային կողմը հռովմեական :





## ՀԱՐԱԻԱՅԻՆ ԵԻՐՈՊՍ.

ԴԱՍ Ծ.

*Փ ռ թ ռ շ կ ա շ .*

Թագաւորութիւն.

Հ. Փորթուկալի բնակիչը զորչափ է:

Պ. Երեք միլիոն հինգհարիւր հազար:

Հ. Սահմանն ինչ է:

Պ. Հիւսիսէն եւ արեւելքէն Սպանիա.

Արեւմտքէն եւ հարաւէն Ատլանտեան ովկիանոս:

Հ. Մայրաքաղաքը զորն է:

Պ. *Լիսպոնս* (260,000 բն.) Թակոյ գետին բերանը՝ Եւրոպիոյ լաւ ու ընդարձակ նաւահանգիստներէն մէկն է:

Հ. Ուրիշ զլիսաւոր քաղաքը զորն է:

Պ. *Փորթո* կամ *Օլիորթո* (80,000 բն.) հարուստ ու վաճառաշահ քաղաք, զինին անուանի:

Հ. Կառավարութեան կերպն ինչպէս է :

Պ. Սահմանադրական միապետութիւն :

Հ. Կրօնքն ինչ է :


Պ. Հռովմեական :

Հ. Փորթուկացիք Եւրոպայէն դուրս ինչ երկիր ունին :

Պ. Ասիոյ մեջ, Հնդկաստանի Տիւրք եւ Կոստանթնուքները, եւ Չինոս Մարտո քաղաքը .

Ափրիկէի մեջ՝ Ասորեան կղզիները, Մատերա կղզին, Դաշարի գլխոյ կղզիները, Սուրբ Թովմաս կղզին, հարաւային Կուրնէայի մէկ մասը, Մոզամպիք, եւ Մոնոմորափայի մեջ ու Զանկեպարի ծովեզերքը շատ տեղեր .

Ովկիանիոյ մեջ՝ Թիմորի մէկ փոքրիկ կտորը :



ԴԱՍ ԾԱ.

Ս պ ա ն ի ա .

Թագաւորութիւն .

Հ. Սպանիոյ բնակիչը սրջափ է :

Պ. Տասնըջորս միլիոն :

Հ. Սահմանը սրն է :

Պ. Հիւսիսէն Ատլանտեան ովկիանոս եւ Պի-  
րենեան լերինք, որով Գաղղիայէն կրամնուի.  
Արեւելքէն Միջերկրական ծովը .

Հարաւէն Միջերկրական ծովն ու Ճիպիլ-  
թերրայի նեղուցը .

Արեւմտքէն Փորթուկալ եւ Ատլանտեան  
ովկիանոս :

Հ. Սպանիոյ մայրաքաղաքը սրն է :

Պ. Մատրիտ (300,000 բն.) որ Սպանիոյ  
մեջտեղուանքը կիյնայ . Եւրոպայի գեղեցիկ  
քաղաքներէն մէկն է :

Հ. Միւս գլխաւոր քաղաքները որոնք են :

Պ. Արեւելակողմը Պարցելունա (150,000 բն.)  
Միջերկրականին վրայ նաւահանգիստ, եւ  
Սպանիոյ երկրորդ քաղաքը .

*Վաշեկեցիա* (160,000 ըն.) Միջերկրակա-  
նին մօտ .

Հարաւակողմը *Քորտուլա* (60,000 ըն.)—  
*Սեւիլիա* (190,000 ըն.)—*Կրանատա* (100,000  
ըն.)—*Քատիքս* (75,000 ըն.), Միջերկրականին  
վրայ բանուկ նաւահանգիստ . — *Մաշակա*  
(113,000 ըն.), վաճառաշահ քաղաք՝ գինին  
անուանի :

Հ. Սպանիացոց Եւրոպայի մեջ ունեցած  
կղզիները որոնք են :

Պ. Միջերկրականին մեջ Բաղեարեան կղզ-  
գիք, որոց գլխաւորներն են *Մալորքա*, *Մի-  
նորքա* եւ *Իվիցա* :

Հ. Կառավարութեան կերպն ինչպէս է :

Պ. Սահմանադրական միապետութիւն :

Հ. Կրօնքն ինչ է :

Պ. Հռովմեական :

Հ. Սպանիացիք Եւրոպայէն դուրս ինչ եր-  
կիրներ ունին :

Պ. Ափրիկէի մեջ *Յեուքա* եւ *Քանարեան*  
կղզիք :

Ամերիկայի մեջ՝ *Քուչա* եւ *Փորթո-Ռի-  
քս* կղզիները :

Ովկիանիոյ մեջ՝ *Փիլիպպեան* եւ *Մա-  
րիանեան* կղզիք :

ԴԱՍ ԾԲ.

Ի   s   ա   շ   ի   ա.

Հ. Իտալիոյ բնակիչը սրբափ է:

Պ. Քսանրհինգ ու կես միլիոն:

Հ. Կրօնքը ինչ է:

Պ. Հռովմեական:

Հ. Սահմանը ո՞րն է:

Հիւսիսէն Գերմանիա եւ Չուիցերի.

Հարաւէն Յունիական ծովը.

Արեւելքէն Ադրիական ծովն ու Աստորիա.

Արեւմտքէն Գաղղիա եւ Միջերկրական

ծովը:

Հ. Իտալիան քանի տերութիւն կրածնուի:

Պ. Եօրը. որոց հինգը մեծ, երկուքը փոքր:

Հ. Հինգ մեծերը որոնք են:

Պ. Առաջինն է Սարտենիոյ կամ Փիեմօնթի քաղաւորութիւնը՝ Իտալիոյ հիւսիսային արեւմտակողմը:

Հ. Բնակիչը զրջափ է:

Պ. Եօթը միլիոնէն աւելի:

Հ. Մայրաքաղաքը զրն է:

Պ. *Թուրիև* (150,000 բն.) Փօ գետին վրայ, Խտալիոյ գեղեցկաշէն քաղաքներէն մեկը:

Հ. Ուրիշ գլխաւոր քաղաքները որոնք են:

Պ. *Ճենովա* (100,000 բն.) գեղեցկակերտ պալատներով զարդարուած ծովահայեաց քաղաք.  
*Շամպերի* (13,000 բն.), Սաւոյայի մայրաքաղաքը.

*Նիցցա* (28,000 բն.) համանուն կոմսութեան մայրաքաղաքը, մեղմ օդովը անուանի.

*Աղեքասնորիա* (38,000 բն.) ամուր զօրանիստ քաղաք:

*Միլան* (175,000 բն.) Լոմպարտիոյ գեղեցկաշէն մայրաքաղաքը, որ 1859-ին բոլոր գաւառովն ու երեք միլիոն բնակչովը Աւստրիայէն բաժնուելով՝ Սարտենիոյ հետ միացաւ:

Հ. Երկրորդ երկիրը զրն է:

Պ. *Վենետիկ*, որ Աւստրիոյ ձեռքն է, եւ մայրաքաղաքն է *Վենետիկ* (110,000 բն.) 70 մանր կղզիներու վրայ շինուած. գեղեցիկ պալատներ ունի. մօտակայ Սուրբ Ղազար կոչուած կղզեկին մէջ է Մխիթարեանց վանքը:



Հ. Վենետկոյ զանառին միւս զլիսաւոր քաղաքները որոնք են :

Պ. *Մակրուա* (30,000 բն.) ամուր քաղաք.  
*Փատուա* (50,000 բն.) համալսարանը ա-

նուանի :

Հ. Վենետկոյ երկրին բնակիչը որչափ է :

Պ. Երկուք ու կես միլիոն :

Հ. Իտալիոյ երրորդ երկիրը որն է :

Պ. *Թոսքանայի մեծ դքսութիւնը*, որ այս տարի Սարտենիոյ հետ միացաւ :

Հ. Մայրաքաղաքը որն է :


Պ. *Փլորենտիա* կամ *Ֆլորենցա* (115,000 բն.) Առնոյ գետին վրայ, Իտալիոյ գեղեցկաշէն քաղաքներէն մէկն է :

Հ. Միւս երեւելի քաղաքները որոնք են :

Պ. *Փիզա* (23,000 բն.) համալսարանը հրոշակաւոր. — *Լիվորնոյ* (75,000 բն.) Միջերկրական ծովուն վրայ բանուկ նաւահանգիստ :

Հ. Թոսքանայի բնակիչը որչափ է :

Պ. Երկու միլիոնի մօտ :



## ԴԱՍ ԾԳ.

Հ. Իտալիոյ չորրորդ մեծ տերութիւնը ո՞րն է :

Պ. Պապին տերութիւնը՝ *Թոսքանայի* արեւմտեան ու հարաւային դին :

Հ. Մայրաքաղաքը ո՞րն է :

Պ. Հռոմ (180,000 բն.) Տիրեր զետին վրայ. անուանի են հին ժամանակներէն մնացած հնութիւններն ու Սուրբ Պետրոսի մեծակառոյց եկեղեցին :

Հ. Գլխաւոր քաղաքները որո՞նք են :

Պ. *Չիվիքոս-Վէքքիա* (7000 բն.) Տիւրենեան ծովուն վրայ ամուր նաւահանգիստ.

*Անքոնա* (30,000 բն.) Ադրիական ծովուն եզերքը՝ վաճառաշահ քաղաք. — Պոչոնիա (75,000 բն.) համալսարանը անուանի :

Հ. Բնակիչը ո՞րչափ է :

Պ. Երեք միլիոնէն աւելի :

Հ. Իտալիոյ հինգերորդ մեծ տերութիւնը ո՞րն է :

Պ. Նափոյի (Նեապոլսոյ) բազաւորութիւնը՝ Իտալիոյ հարաւակողմը :

Հ. Մայրաքաղաքը ո՞րն է:

Պ. *Նախոյի* (415,000 բն.) Միջերկրական ծովուն վրայ, Իտալիոյ ամենեն մեծ քաղաքը:

Հ. Սիկիլիա կղզւոյն գլխաւոր քաղաքները որո՞նք են:

Պ. *Փաշէրմոյ* (200,000 բն.) մեծ ու գեղեցիկ քաղաք.—*Մեսսինա* (100,000 բն.) Սիջերկրականին գլխաւոր նաւահանգիստներէն մէկը:

Հ. Նափոլիի բազաւորութեան բնակիչը ո՞րքափ է:

Պ. Ինը միլիոնէն աւելի:

Հ. Իտալիոյ փոքր տերութիւնները որո՞նք են:

Պ. *ա*, Փարմայի դքսութիւնը, մայրաքաղաքը *Փարմա* (40,000 բն.) բոլոր դքսութեան բնակիչքը 496,000:

*բ*, Մոտենայի դքսութիւնը, մայրաքաղաքը *Մոտենա* (31,000 բն.) բոլոր դքսութեան բնակիչը 500,000:

Այս երկուքն ալ մօտեքս Սարտենիոյ տերութեան հետ միացան:

Հ. Մոնաքոյի իշխանութեան եւ Սան-Մարինոյի հասարակապետութեան վրայ ինչ գիտելիք կայ:

Պ. Մոնաքոյի իշխանութեան բնակիչն է 7,500, եւ Սարտենիոյ բազառորութեան հետ միացած է. իսկ Սաւն-Մարիւնոյի հասարակապետութեան բնակչաց թիւն է 8,000, եւ պապին տերութեանը հետ միացած է:

---

## ԴԱՍ ԾԴ.

### Եւրոպայի Տաճկաստան.

Հ. Եւրոպայի Տաճկաստանին բնակիչը որչափ է:

Պ. Տասնըվեց միլիոն ու կես, որոց վեց միլիոնը միայն մահմեդական է:

Հ. Սահմանը որն է:

Պ. Հիւսիսէն Ռուսաստան եւ Աւստրիա.

Արեւմտքէն Աւստրիա եւ Ադրիական ծովը:

Հարաւէն Յունաստան եւ Արշիպելոզազոս:

Արեւելքէն Զանազգալէսի նեղուցը, Մարմարայի ծովը, Կոստանդնուպօլսոյ նեղուցն ու Սև ծովը:

Հ. Տաճկաստանի մայրաքաղաքը որն է:

Պ. Կոստանդնուպօլիս կամ Պօլիս (800,000.

քն.) Վոսփորի նեղուցին վրայ՝ որ Մարմարա եւ Սեւ ծովերն իրարու հետ կմիացընէ. եզական դիրքովը աշխարհիս առաջին քաղաքն է. ընդարձակ նաւահանգիստը 1200 նաւէն աւելի կառնու, եւ վաճառականութիւնը խիստ բանուկ է: Այս քաղաքը հին ատենը Բիւզանդիոն կկոչուէր. Մեծն Կոստանդիանոս 320-ին մեծցընելուն ու գարդարելուն համար, իւր անունովը Կոստանդնուպօլիս՝ այսինքն Կոստանդիանոսի քաղաք ըսուեցաւ. 1453-ին Յունաց ձեռքէն առաւ զայն Յաքիմ սուլթան Մեհմէտ եւ իւր տերութեանը մայրաքաղաք ըրաւ:

Ճ. Գլխաւոր քաղաքները որոնք են:

Պ. Ադրիանուպօլիս կամ *Էսիրեկ* (125,000 քն.) տերութեան երկրորդ մայրաքաղաքը.

Սելանիկ կամ *Թեսաղունիկ* (72,000 քն.) համանուն ծոցին վրայ բանուկ նաւահանգիստ. Մակեդոնիոյ մայրաքաղաքն է, շատ հնութիւններ ունի.

Պոսնա կամ Պոսնա-Սարայ (70,000 քն.) Պոսնիոյ մայրաքաղաքը. ճարտար ու վաճառաշահ:

Պուքրէշ (60,000 քն.) Վալաքիոյ մայրաքաղաքը.



Եաշ (40,000 բն.) Մոլտաւիոյ մայրաքաղաքը .

Պելկրատ (32,000 բն.) Դանուբին վրայ ամուր քաղաք :

Շումլա կամ Շումնի (35,000 բն.) ամուր ու ճարտար քաղաք .

Վիտին (26,000 բն.) Դանուբին վրայ ամուր բերդաքաղաք .

Սիլիստրէ (22,000 բն.) Դանուբին ձախակողմը ամուր քաղաք .

Ռուսնուզ (32,000 բն.) մեծ ու վաճառաշահ քաղաք .

Եանեսա (50,000 բն.) Առնաուուտլուգ կամ Ալպանիա գաւառին գլխաւոր քաղաքը .

Կելիպօլու (18,000 բն.) Զանազալէսիին վրայ :

---

## ԴԱՍ ԾԵ.

Հ. Եւրոպայի Տաճկաստանն ինչ գլխաւոր կղզիներ ունի :

Պ. Արշիպեղագոսին հիւսիսակողմը մեկքանի կղզիներ ունի, որոց գլխաւորներն են Թասսու կամ Թաշօզ, Սամսրուսկէ կամ Սեմեկետրէք, Լեմնուս կամ Լիմնի :



Հ. Կրետե կղզին ուր է:

Պ. Արշիպեղազոսին հարաւակողմը, որ համանուն գլխաւոր քաղաքովը՝ Արշիպեղազոսին ամենէն մեծ կղզին ու Եւրոպիոյ ամենէն մեծ ու բարեբեր կղզիներէն մէկն է:

Հ. Տաճկաստանի կառավարութեան կերպն ինչպէս է:

Պ. Միապետութիւն:


Հ. Տերութեան կրօնքն ինչ է:

Պ. Մահմեդական:

Հ. Օսմանցոց տէրութիւնը Եւրոպայէն դուրս ինչ երկիրներ ունի:

Պ. Ասիոյ մեջ՝ Ասիայի Տաճկաստան, եւ Արաբիոյ մէկ մասը:

Ափրիկէի մեջ՝ Եգիպտոս եւ Թունուզի ու Թրիփոլի պէյութիւնները հարկատու են իրեն:



## ԴԱՍ ԾԶ.

### Յ ո շ ն ա ս ս ա ն .

Հ. Յունաստանի բնակիչը ո՞րչափ է :

Պ. Մեկ միլիոն :

Հ. Սահմանը ո՞րն է :

Պ. Հիւսիսէն Տաճկաստան .

Արեւելքէն Արշիպեղազոս .

Հարաւէն Միջերկրական ծովը .

Արեւմտքէն Յունիական ծովը :

Հ. Մայրաքաղաքը ո՞րն է :

Պ. *Աթէնք* (31,000 բն.) ինն ժամանակի ամենէն հռչակաւոր քաղաքներէն մեկը . տեսնելու արժանի հնուքիւններ ունի : Նաւահանգիստն է *Պիրէոն* :

Հ. Գլխաւոր քաղաքները որոնք են :

Պ. *Փարրաս* (10,000 բն.) վաճառաշահ քաղաք. — *Նաւյարիւն* (3,000 բն.) Յունիական ծովուն վրայ նաւահանգիստ . հոս 1827-ին Ռուսք, Գաղղիացիք եւ Անգղիացիք մեծ յաղթութիւն բնելով Տաճկաց եւ Եգիպտացոց զօրացը վը-

րայ՝ Յունաց քաղաքութեանը հաստատուե-  
լուն պատճառ եղան. — *Նաշիլիա* (13,000 բն.)  
ամուր բերդաքաղաք եւ վաճառաշահ նաւա-  
հանգիստ. — *Կորնրու* (4,000 բն.). — *Շիրս*  
(20,000 բն.), համանուն կղզւոյն մեջ Յունաս-  
տանի ամենէն վաճառաշահ քաղաքն է :

Հ. Յունաստանի գլխաւոր կղզիքը որոնք են :

Պ. *Եւբեա* կամ *Նէկրոփոնք* (*Էյրիպօզ*),  
*Հիտրս* կամ *Չամլլանա*, *Կիւկրադայք* կամ  
*Բոյոր կղզիք*՝ Արշիպելոզագոսին հարաւակող-  
մը, եւ *Պարու*՝ մարմարիոնը անուանի :

Հ. Յունաստանի կառավարութեան կերպն  
ինչպէս է :

Պ. Սահմանադրական միապետութիւն .

Հ. Կրօնքն ինչ է :

Պ. Յունադաւան :

---

## ԴԱՍ ԾԷ.

### *Յոնիական կղզիք.*

Հ. Յոնիական կղզեաց բնակիչը ո՞րչափ է :

Պ. Երեքհարիւր հազար :

Հ. Յոնիական կղզիները որոնք են :

Պ. *Յոնիական կղզիք* կասուին Յունաստա-

նի արեամտեան ու հարաւային ծովեզերքն եղած եօթը կղզիները, որ Անգղիոյ պաշտպանութեանը տակ հասարակապետութիւն մը կը ձեւացընեն :

Հ. Որո՞նք են այս կղզիները :

Պ. ԲորՖու կամ Կորկիւրա (16,000 բն.) որ մայրաքաղաք է հասարակապետութեան. Փաքսօ, Սանրա-Մալրա, Թեաքի կամ Իրակէ՛ հայրենիք Ողիսեսի. ԳեՄարտնիա, Յոնիական կղզեաց ամենէն մեծը. Զանրա կամ Զակիւնթոս՝ խիստ բարեբեր, եւ Զերիկօ կամ Կիքերա :

Հ. Կրօնքն ինչ է :

Պ. Յունադաւան :



## ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆ ԱՇԽԱՐՀԻ,

Ա Ս Ի Ա.

ԴԱՍ ԾԸ.

*Բնակիչք, սարածուրիւն եւ սահմանք.*

Հ. Ասիոյ բնակիչը որչափ է:

Պ. Վեցհարիւր վարսունուքը միլիոն:

Հ. Մեծուրիւնը որչափ է:

Պ. Աշխարհիս հինգ մասանց մեջ ամենէն մեծն է Ասիա, եւ ամենէն քաղմամարդը:

Հ. Ասիան հին ցամաքին որ կտորն է:

Պ. Արեւելեան մասն է:

Հ. Ասիոյ սահմանը որն է:

Պ. Հիւսիսէն Արջային Սառուցեալ ովկիանոս.  
Արեւելքէն Պեհրիկայ ծով եւ Մեծ ովկիանոս.

Հարաւեն Հնդկաց ծով.

Արեւմտքեն Ուրալ գետն ու Ուրալ լեռները, Կովկաս լեռը, Սեւ ծովը, Կոստանդնուպօլսոյ եւ Չանազգայէսի նեղուցները, Միջերկրականը, Սիւեզի պարանոցն ու Կարմիր ծովը:

---

## ԴԱՍ ԾԹ.

### *Ծովք եւ նեղուցք Ասիոյ.*

Հ. Ասիոյ չորս մեծ ծովերը որոնք են:

Պ. Հիւսիսակողմը՝ արջային Սառուցեալ ովկիանոս. արեւելակողմը՝ Մեծ ովկիանոս. հարաւակողմը՝ Հնդկաց ովկիանոս, եւ արեւմտակողմը՝ Միջերկրական ծով:

Հ. Այս չորս մեծ ծովերէն ինչ փոքր ծովեր կձեւանան:

Պ. Սառուցեալ ովկիանոսէն երկու ծով կը ձեւանայ. Քարայի ծովն ու Սիպերիոյ ծովը: Մեծ ովկիանոսէն կձեւանայ հինգ ծով. Պենըիկայ, Օխորսքի, Ճափոնի, Գորեայի եւ Զինաց ծովերը:



Հնդկաց ովկիանոսէն երկու ծով կկազմուի . Էօմէնի ծովն ու Կարմիր ծովը .

Միջերկրականէն երեք . Արշիպէղագոս, Մարմարայի ծովն ու Սեւ ծովը :

Հ. Կասպից ծովն ու Արալ լիճը ինչ են :

Պ. Կասպից ծովն ու Արալ լիճը մեկմեկ աղի մեծամեծ լճեր կհամարուին :

Հ. Ասիոյ գլխաւոր նեղուցները քանի հատ են ու որոնք են :

Պ. Եօքը հատ են . Եւրոպական Տաճկաստանի ու Ասիոյ Տաճկաստանին մեջտեղը՝ Դարդանեան կամ Զանազգաշէսի նեղուցը, որով Արշիպէղագոսը Մարմարային հետ կը միանայ :

Կոստանդնուպօսոյ նեղուցը, որով Մարմարան Սեւ ծովուն հետ կմիանայ .

Պասիւրնանոկայի նեղուցը, որով Ատենի ծոցը Արաբիոյ ծոցոյն հետ կմիանայ՝ Արաբիոյ ու Ափրիկէի մեջտեղը .

Հիւրմիւզի նեղուցը, որով Էօմէնի ծոցը Պարսից ծոցոյն հետ կմիանայ՝ Արաբիոյ ու Պարսկաստանի մեջտեղը .

Մարաքքայի նեղուցը, որով Հնդկաց ծովը Մեծ ովկիանոսին հետ կմիանայ՝ Մալաքքա բերակղզւոյն ու Սումաթրա կղզւոյն մեջտեղը :

*Յորճոզայի* ջրանցքը, որով Գորեայի ծովը Չինաց ծովուն հետ կմիանայ:

*Պեհրինկայ* նեղուցը, որով Պեհրինկայ ծովը արջային Սառուցեալ ովկիանոսին հետ կմիանայ՝ Ասիոյ եւ հիւսիսային Ամերիկոյ մեջտեղը:

---

#### ԳԱՍ Կ.

##### *Ասիոյ ծոցերն ու կղզիները.*

Հ. Ասիոյ մեջ քանի գլխաւոր ծոցեր կան:

Պ. Տասը, եւ են *Օպի* ծոցը, որ արջային Սառուցեալ ծովէն կձեւանայ՝ Օպի գետոյն բերանը, Սիպերիոյ հիւսիսային ծովեզերքը.

*Անատիո* ծոցը, որ Պեհրինկայ ծովէն կը ձեւանայ՝ Սիպերիոյ արեւելակողմը:

*Թունքիւի* եւ *Սիււնայ* ծոցերը՝ Չինաց ծովէն կազմուած՝ Հնդկաչինոս հարաւային արեւելեան կողմը.

*Պենկաչայի* ծոցը, որ Հնդկաց ովկիանոսէն ձեւացած է՝ Հնդկաստանի ու Հնդկաչինոս մեջտեղը.

*Էօմենի* ծոցը, որ Հնդկաց ովկիանոսէն կը-  
ձեռանայ՝ Արաբիոյ ու Հնդկաստանի մեջտեղը .

*Պարսկային* ծոցը, որ Էօմենի ծոցէն ձեռա-  
ցած է՝ Արաբիոյ եւ Պարսկաստանի մեջտեղը .

*Ատէնի* ծոցը, որ Էօմենի ծոցովը ձեռա-  
ցած է՝ Արաբիոյ եւ Ափրիկէի մեջտեղը .

*Արաբիոյ* ծոցը, որ եւ *Կարմիր ծով* կա-  
ստի, Էօմենի ծոցէն ձեռացած է, եւ Արաբիոյ  
արեւելակողմը Ափրիկէէն կրածնէ .

*Փեշիշի* ծոցը՝ Գորեայի ծովէն ձեռացած :

Հ. Ասիոյ գլխաւոր կղզիները որոնք են :

Պ. Ասիոյ կղզիներուն գլխաւորներն են Ճա-  
փոնի կայսերութիւնը ձեռացընողները՝ Մեծ  
Ովկիանոսին մեջ, Ասիոյ արեւելեան ծովեզեր-  
քը : Այն մեծ արշիպելագոսէն զատ՝ անուանի  
են նաեւ .

*Սեյլան*, Հնդկաց ծովուն մեջ .

*Հայնան*, Չինաց ծովուն մեջ, եւ

*Տորմոզա*, Մեծ Ովկիանոսին մեջ, եր-  
կուքն ալ Չինաց ձեռքը :

---

## ԴԱՍ ԿԱ.

*Թերակղզիք եւ հրուանդանք Ասիոյ .*

Հ. Ասիան քանի՞ թերակղզի ունի :

Պ. Ութը . չորսը մեծ, չորսը փոքր :

Հ. Մեծերը որոնք են :

Պ. Հնդկաչիև կամ արեւելեան քերականի  
Հնդկաց, արեւմտեան քերականի Հնդկա-  
տանի, Արարիա եւ Անատոլոս կամ Փոքր  
Ասիա :

Հ. Փոքրիկները որոնք են :

Պ. Բամչարքա, Պեհրինկայ նեղուցին եւ Օ-  
խորսքի ծովուն մեջտեղը՝ Սիպերիոյ արեւե-  
լակողմը.

Գորեա՝ Չինաստանի արեւելակողմը.

Մալաքքա, Հնդկաչիևու հարաւակողմը.

Բիւնրար, Հնդկաստանի արեւմտակողմը :

Հ. Ասիոյ գլխաւոր հրուանդանները որոնք են :

Պ. Այս եօրն են .

Պապ-իւլ-մանուկայ եւ Ռասեշկար՝ Ա-  
րարիոյ հարաւակողմը .

Գամրիև, Հնդկաստանի հարաւակողմը.

Ռումանիա, Մալաքքա քերակղզոյն հա-  
րաւակողմը .

Արեւելեան հրուանդան՝ Սիպերիոյ արեւե-  
լակողմը .

Հիւսիսայիև հրուանդան՝ Սիպերիոյ  
հիւսիսակողմը .

Պապա Պոռնու՝ Ասիոյ Տաճակաստա-  
նին արեւմտակողմը :

## ԴԱՍ ԿԲ.

### Սսիոյ լեռները.

Հ. Սսիոյ գլխաւոր լեռները որոնք են :

Պ. Ուշալ եւ Կոպկաս լեռներէն զատ, որք եւրոպան Սսիայէն կրածնեն, գլխաւոր զօտիք լեռանց սոքա են .

Տորոս եւ Լիբանան՝ Սսիոյ Տաճկաստանին մեջ . Լիբանանու կտորներն են Թարոր եւ Կարմեղոս լեռները .

Արա՛յ եւ Սրակոյժոյ՝ Սիպերիոյ եւ Չինաստանի մեջտեղը .

Յու՛նկի՛նկ՝ Չինաստանի մեջ .

Հի՛մարայա՝ Չինաստանի եւ Հնդկաստանի մեջտեղը . ասոր Տալալակի՛րի ըսուած կտորը աշխարհիս ամենէն բարձր լեռը կրհամարուի .

Մասիս եւ Կորդուաց լեռի՛նք՝ Հայաստանի մեջ .

Պորուր՝ Թուրքաստանի եւ Չինու մեջտեղը .

Կաս՝ Հնդկաստանի մեջ .

Սի՛նա եւ Բորեք լեռի՛նք՝ Արաբիոյ հիսսիային արեւմտակողմը :

ԴԱՍ ԿԳ.

*Ասիոյ գեներն ու լճերը.*

Հ. Ասիոյ գլխաւոր գետերը որոնք են :

Պ. *Օպի, Ենիսեյ եւ Լենա*՝ որ Սառուցեալ ովկիանոսը կրափին .

*Ամուր*՝ որ Օխոքսքի ծովը կվազէ .

*Հոսակ-Հօ եւ Բեակ*՝ որ Դեղին ծովը կրափին .

*Մեյ-Բոնկ եւ Մեյ-Նամ*՝ որ Չինաց ծովը կրափին .

*Իրաւատտի, Պրահմախորքա, Գանգես*՝ որ Պենկալայի ծոցը կիջնան .

*Սինտ կամ Ինդոս*՝ որ Էօմենի ծոցը կը վազէ .

*Տիգրիս եւ Եփրատ*, որ իրարու հետ կը միանան եւ *Շադ-իւղ-Արեւ* անուամբ՝ Պարսկային ծոցը կրափին :

Հ. Ասիոյ գլխաւոր լճերը որոնք են :

Պ. *Պայքալ*՝ Սիպերիոյ հիւսիսակողմը .

*Արալ*՝ Թարարստանի մէջ .



Ասփարտեան շինք կամ Մեռեալ ծովը՝  
Ասիոյ Տաճկաստանին մէջ.

Վանայ ծովակն ու Սեւանայ լիճը՝ Հայ-  
աստանի մէջ :

---

### ԴԱՍ ԿԴ.

*Օղ, բերք եւ կրօնք Ասիոյ.*

Հ. Ասիոյ օղն ու բերքը ինչպէս է :

Պ. Ասիոյ հիւսիսակողմը՝ Սառուցեալ ով-  
կիանոսին եզերքը ընդարձակ դաշտեր բռնած  
են, ուր օղին սաստիկ ցրտութենէն ոչ բոյս  
կրուանի եւ ոչ մարդիկ կարող են բնակիլ.  
Իսկ Ասիոյ հարաւակողմը աշխարհիս ամենէն  
քարերեր երկիրն է. քարեխառն օղ, եւ սքան-  
չելի բոյսեր ռւ պտուղներ ունի, եւս եւ հա-  
րուստ հանքեր, այսինքն ամեն տեսակ մե-  
տաղ, ազնիւ քարեր, աղամանդ եւ պատուա-  
կան մարգարիտ :

Հ. Ասիան ինչ կենդանիներ ունի :

Պ. Ընտանի կենդանեաց ամեն տեսակն ալ  
ունենային ետեւ՝ ունի նաեւ զազաններ, ինչ-  
պէս փիղ, ունգեղջիւր, վագր, առիւծ, ինձ,  
եւ այլն :

Հ. Ասիոյ բնակչաց մեջ ինչ կրօններ կան :  
Պ. Արեւմտակողմը՝ քրիստոնէութիւն, հարաւային արեւմտակողմը՝ մահմետականութիւն, հարաւակողմը՝ պրահմականութիւն, հարաւային արեւելակողմը՝ պուտտականութիւն, Զինու. մեջ Կոմփուկիոսի աղանդը, ձափոնի մեջ՝ Սինթոյիներ, եւ ուրիշ այլ եւ այլ կուսակաշտական կրօններ :

---

### ԴԱՍ ԿԵ.

*Արուեստք, գիտութիւնք եւ բաժանուումն  
Ասիոյ.*

Հ. Արուեստք եւ գիտութիւնք Ասիոյ մեջ ինչ աստիճանի ծաղկած են :

Պ. Որչափ որ հին ատենը արուեստք եւ գիտութիւնք ծաղկած էին Ասիոյ մեջ, հիմա այնոյնչափ ետ մնացած են՝ համեմատութեամբ Եւրոպայի :

Հ. Ասիան քանի գլխաւոր մասն կրածնուի :

Պ. Տասնըմեկ .

Մեկը հիւսիսակողմը, որ է Ռուսաստան Ասիոյ .

Երկուքը արեւմտակողմը, այսինքն Տաճկաստան Ասիոյ եւ Արաբիա .

Չորսը մեջտեղը . Պարսկաստան, Թուրքաստան, Աֆղանիստան եւ Պելուճիստան .

Երկուքը հարաւակողմը . Հնդկաստան եւ Հնդկաչին :

Երկուքը արեւելակողմը . Չինաստան եւ Ճափոն :

---

ԴԱՍ ԿԶ.

*Ռուսաստան Ասիոյ .*

Հ. Ասիոյ Ռուսաստանին բնակիչը հրջափ է :

Պ. Հինգ միլիոն :

Հ. Ասիոյ Ռուսաստանին սահմանները որոնք են :

Պ. Հիւսիսէն արջային Սառուցեալ ովկիանոսը, եւ Եւրոպայի Ռուսաստան .

Արեւելքէն Օխոթսքի եւ Պեհրինկայ ծովերը, Պեհրինկայ նեղուցն ու Կասպից ծովը .

Հարաւէն Ասիոյ Տաճկաստանը, Պարսկաստան, Թաթարստան եւ Չինաց կայսրութիւնը .

Արեւմտքէն Ռարայ լեռներն ու Սեւ ծովը .

Հ. Ասիոյ Ռուսաստանը քանի մասն կրածնուի :

Պ. Երկու . Սիպիւր կամ Սիպերիա՝ որ Ասիոյ հիւսիսակողմը բռնած է, եւ Կովկասային աշխարհ՝ Ասիոյ արեւմտակողմը :

Հ. Սիպերիոյ գլխաւոր քաղաքները որոնք են :

Պ. Թոպուշք (26,000 բն.) արեւմտակողմը .

Իրքուք (25,000 բն.) հարաւակողմը՝

Պայքայ լճին մօտ .

Օխորք (1,200 բն.) համանուն ծովուն վրայ նաւահանգիստ եւ նաւարան :

Հ. Կովկասեան Ռուսաստանը քանի մասն կրածնուի :

Պ. Եօրը կուսակալութիւն . այսինքն

Կովկասեան գաւառք .

Ձերքեզ .

Ապազա, Մնկոեյ, Իմերեթ եւ Կուրիեյ .

Տաղստան եւ Լեզկիք .

Վրաստան .

Շիրուան .

Ռուսաց Հայաստան :



## ԴԱՍ ԿԷ.

Հ. Կովկասեան գաւառաց գլխաւոր քաղաքները որոնք են :

Պ. Դզրար (12,000 բն.) ամուր, գեղեցիկ ու վաճառաշահ քաղաք, բնակչաց մեծ մասը հայազգի .

Մազոտք ( 6,000 բն. ) եւ Սրաւրուխոյ (8,000 բն.):

Հ. Չերքեզի գլխաւոր քաղաքը որն է :

Պ. Էնտերի կամ Անտրէյնվա (12,000 բն.) ունի տօնավաճառ.:

Հ. Ապազայի գլխաւոր քաղաքները որոնք են:

Պ. Անախա (6,000 բն.) Սեւ ծովուն եզերքը, որ այժմ պարպուեցաւ :

Սոխոււմ-Գալէ, Սեւ ծովուն վրայ նաւահանգիստ :

Հ. Մնկուելի գլխաւոր քաղաքը որն է :

Պ. Ռէտուր-Գալէ, բանուկ նաւահանգիստ :

Հ. Իմերեթի գլխաւոր քաղաքը որն է :

Պ. Խուրայիս (4,000 բն.) գեղեցկադիր ու բարեբեր քաղաք :

Հ. Կուրիելի գլխաւոր քաղաքը ո՞րն է :

Պ. Փորի (1000 բն.) Ռիոն գետին բերանը նոր ծաղկիլ սկսած քաղաք :

Հ. Տաղստանի գլխաւոր քաղաքը ո՞րն է :

Պ. Տերպէնտ կամ Դարբանդ (28,000 բն.) հին ու ամուր քաղաք :

Հ. Վրաստանի գլխաւոր քաղաքները որո՞նք են :

Պ. Թիֆլիզ կամ Տիֆլիս (50,000 բն.) Կուր գետին վրայ՝ Վրաստանի մայրաքաղաք, եւ հիմա Կովկասեան աշխարհին առաջին քաղաքը : Ռուսաստանի գլխաւոր հայաբնակ քաղաքն է :

Մցխերս (1,200 բն.) Վրաստանի հին մայրաքաղաքը, այժմ աներակ :

Հ. Շիրուանի գլխաւոր քաղաքը ո՞րն է :

Պ. Պարու (10,000 բն.) ամուր քաղաք եւ Կասպից ծովուն վրայ բանուկ նաւահանգիստ :

Հ. Ռուսաց Հայաստանի գլխաւոր քաղաքները որո՞նք են :

Պ. Երևան (20,000 բն.) Տիֆլիսէն ետքը այս կողմերուս գլխաւոր հայաբնակ ու ծաղկեալ քաղաքն է՝ Զանկու գետին վրայ :

— Երեւանայ մօտ է Ս. Էջմիածնայ Վանքը :

Նախիջևան (6,000 բն.) աշխարհիս ամենէն հին քաղաքը :



Որդուպատ (4,000 բն.).

Ազուշիս (2,000 բն.).

Գանձակ կամ Եղիսաբէքոշպօշիս  
(20,000 բն.) — Շուշի (10,000 բն.):

---

## ԴԱՍ ԿԸ.

### Տաճկաստան Ասիոյ.

Հ. Ասիոյ Տաճկաստանին բնակիչը ո՞րչափ է:

Պ. Տասնըօթը միլիոն :

Հ. Սահմանը ո՞րն է :

Պ. Հիւսիսէն Ռուսաստան եւ Սեւ ծով .

Հարաւէն Արաբիա .

Արեւելքէն Պարսկաստան .

Արեւմտքէն Կոստանդնուպօլսոյ ու Չա-  
նազգայէսի նեղուցները, Արշիպեղազոսն ու  
Միջերկրականը :

Հ. Ասիոյ Տաճկաստանը քանի՞ կրամնուի :

Պ. Եօթը, եւ եւն

ա, Փոքր Ասիա կամ Անատօլոս .

բ, Հայաստան .

գ, Միջագետք .

դ, Բիւրտիստան .

ե, Իրազ-Արապի .

զ, Ասորիք .

է, Կղզիք :

**ԴԱՍ ԿԹ.**

**Փոքր Ասիա կամ Անասորու.**

Հ. Փոքր Ասիոյ գլխաւոր քաղաքները որոնք են :

Պ. *Զմիռնիա* կամ *Իզմիր* (150,000 բն.) Միջերկրականին վրայ՝ Ասիոյ Տաճկաստանին ամենէն վաճառաշահ քաղաքը .

*Պրուսա* կամ *Պուրսա* (60,000 բն.) Օսմանեան տերութեան հին մայրաքաղաքը . մետաքսի մեծ առուտուր ունի .

*Անկիւրիա* կամ *Էնկիւրիւ* (38,000 բն.) անուանի է այժերուն մետաքսի նման բուրդը :

*Եւրոկիա* կամ *Թոզար* (100,000 բն.) պղնձահանքը անուանի .

*Իկոնիոն* կամ *Գոնեա* (30,000 բն.) վաճառաշահ քաղաք .

*Ամասիա* (26,000 բն.) մետաքսի մեծ առուտուր ունի .

*Կեսարիա* կամ *Գայսէրի* (30,000 բն.) մեծ ու վաճառաշահ քաղաք .

*Տրապիզոն* (50,000 ըն.) Սեւ ծովուն վրայ  
բանուկ նաւահանգիստ .

*Սեբաստիա* կամ *Սըվաս* (28,000 ըն.)  
քովը պոնտականք ունի .

*Նիկովիդիա* կամ *Իզնիկ* (6000 ըն.) :

---

## ԴԱՍ Հ.

Հ ա յ ա ս ս ա ն .

Հ. Հայաստանի մասին գլխաւոր քաղաքները  
որոնք են :

Պ. *Կարիև* կամ *Էրզիւրիւմ* (80,000 ըն.)  
Տաճկաստանի ու Պարսկաստանի վաճառա-  
կանութեան կեդրոնն է . 1858-ին եղած երկ-  
րաշարժով Տաճկաց քաղին մեծ մասը աւ-  
րուեցաւ .

*Վան* կամ *Շամիրամակիրտ* (62,000 ըն.)  
քովն է Շամիրամին շինած բերդը, որուն վը-  
րայ բեւեռածեւ գրերը մինչեւ հիմա կեցած  
են : Վանայ ծովուն չորս կղզիներուն անուն-  
ներն են *Աղրամար*, *Կոռոց*, *Լիմ*, *Առտեր* :

Հ. Միջագետաց գլխաւոր քաղաքները ո-  
րոնք են :

Պ. *Տիգրասէսկերտ* կամ *Տիարպէքիք*  
(65,000 ըն.) հին, ամուր ու վաճառաշահ .

*Եդեսիա* կամ *Ուրհայ* (55,000 ըն.) մեր  
Արգար քաղաւորին շինած քաղաքն է :

ԴԱՍ ՀԱ.

*Իրագ-Արապի, Ասորիք.*

Հ. Իրակ-Արապիի գլխաւոր քաղաքները որոնք են :

Պ. Պաղատառ (100,000 բն.) Տիգրիս գետին վրայ վաճառաշահ քաղաք.

Պասրա (60,000 բն.) Շաղ-իւլ-Արեպ գետոյն վրայ վաճառաշահ քաղաք:

Հ. Ասորւոց երկրին գլխաւոր քաղաքները որոնք են :

Պ. Բերիս կամ Հալէպ (125,000 բն.) վաճառաշահ քաղաք.

Դաւնակոս կամ Շամ (200,000 բն.) շատ հին ու վաճառաշահ քաղաք, 1860 տարւոյս մէջ քրիստոնէից սոսկալի կոտորածովը նշանաւոր.

Երուսաղէմ (30,000 բն.) Պաղեստինու կամ Սուրբ Երկրին մայրաքաղաքը: Գողգոթայի վրայ շինուած եկեղեցւոյն մէջ՝ Քրիստոսի Տեառն մերոյ սուրբ գերեզմանը մեծ ուխտատեղի է ամենայն քրիստոնէից.

*Արևա* (20,000 բն.) հռչակաւոր բերդ ու վաճառաշահ քաղաք: Մօտ է Թաբոր լեռը, որոյ վրայ այլակերպեցաւ Տերն մեր, եւ կարմեղոս լեռը՝ ուր եղիա մարգարէն առանձնացաւ .

*Պերուք* (10,000 բն.) Միջերկրականին վրայ՝ Ասորեոց երկրին ամենէն վաճառաշահ քաղաքը:

---

## ԴԱՍ ՀԲ.

### *Ասիոյ Տաճկաստանին կղզիները.*

Հ. Ասիոյ Տաճկաստանի գլխաւոր կղզիները որոնք են:

Պ. Մարմարա ծովուն մեջ համանուն Մարմարա կղզին, յորմէ առատ մարմարիոն կելլէ.

Արշիպեղազոսին մեջ *Լեարու* (*Միտիլի*) Մետիլինէ քաղաքովը. *Քիոս* (*Սագրզ*) եւ *Սամոս* (*Սուսամ առաւր*).

Միջերկրականին արեւմտակողմը *Հոողոս* (*Ռոտոս*) եւ արեւելակողմը *Կիպրոս* (*Գրպրզ*) որ ամենէն մեծն է. անուանի է զինին:



## ԴԱՍ ՀԳ.

### Ա ռ ա թ ի ա.

Հ. Արարիոյ բնակիչը զրջափ է:

Պ. Տասուերկու միլիոն:

Հ. Սահմանը զրն է:

Պ. Հիւսիսէն Տաճկաստան Ասիոյ.

Հարաւէն Էօմենի ծոցը, Հիւրմիւզի նեղուցն ու Պարսկային ծոցը.

Արեւելքէն Ատենի եւ Էօմենի ծոցերը.

Արեւմտքէն Կարմիր ծովը:

Հ. Գլխաւոր քաղաքները որոնք են:

Պ. *Մէքքէ* (35,000 բն.) Մահմետին հայրենիքը. Տաճկաց մեծ ուխտատեղին է.

*Մաշկար* (60,000 բն.) Էօմենի ծոցին վրայ նաւահանգիստ, Արարիոյ ամենէն վաճառաշահ քաղաքը.

*Մետիկէ* (6,000 բն.) Մահմետ Մեքքէէն հոս փախաւ Քրիստոսի 622 թուականին. այն տարիէն կսկսի Տաճկաց *հիւնրէք* ըսուած թուականն որ *իսխուշտ* կնշանակէ.

*Մոքա* (5,000 բն.) Եմէն գաւառին գլխաւոր քաղաքը. անուանի է խահուէն:



**ԴԱՍ ՀԴ.**

**Պարսկաստան.**

Հ. Պարսկաստանի բնակիչը ռըջափ է:

Պ. Ինը միլիոն:

Հ. Սահմանը ռըն է:

Պ. Հիւսիսէն Թուրքաստան, Կասպից ծովը եւ Ռուսաստան.

Հարաւէն Պարսկային ծոցն ու Հիւրմիւզի նեղուցը.

Արեւելքէն Պելուճիստան եւ Աֆղանիստան.

Արեւմտքէն Ասիոյ Տաճկաստան:

Հ. Մայրաքաղաքը ռըն է.

Պ. Դեհրան (135,000 բն.) օղը ամառը շատ վնասակար է:

Հ. Ուրիշ ինչ երեսելի քաղաքներ ունի:

Պ. Ասպահան (60,000 բն.) որ Դեհրանէն առաջ տերութեան մայրաքաղաքն էր: Սորա մեծ արուարձանն է Նոր Զուղայ՝ հայ բնակիչներովը անուանի.

*Դաւրեժ (Թեպրիզ)* (100,000 բն.) վաճառաշահ՝ Ատրպեճանի վլխաւոր քաղաքը .

*Շիրակ* (20,000 բն.) գինին անուանի .

*Համառան* (46,000 բն.) հին եկբատան քաղաքին տեղը շինուած . կաշիի մեծ առուտուր ունի :

---

## ԳԱՍ ՀԵ.

### *Թոռքասան.*

Հ. Թուրքաստանի բնակիչը որչափ է :

Պ. Եօքը միլիոն :

Հ. Սահմանը որն է :

Պ. Հիւսիսէն Սիպերիա .

Հարաւէն Պարսկաստան եւ Աֆղանիստան .

Արեւելքէն Չինաց կայսերութիւնը .

Արեւմտքէն Կասպից ծովը :

Հ. Գլխաւոր քաղաքները որոնք են :

Պ. *Պուխարա* (75,000 բն.) Թուրքաստանին ամենէն մեծ քաղաքը .

*Սւղրդանա* (10,000 բն.) վաճառաշահ քաղաք . 1400-ին հռչակաւոր Լենկթիմուր քաղաւորին մայրաքաղաքն էր :

ԳՍՍ 29.

*Ա զ ղ ա ն ի ս ա ն .*

Հ. Աֆղանիստանի բնակիչը որչափ է, եւ  
Աֆղանները ինչ ազգ են .

Պ. Տասը միլիոն . սոքա հին Ադուանքը ը-  
սուած ազգէն են, Հայաստանէն հոն գաղթա-  
կան զնացած ու բազմացած . երկար ժամա-  
նակ Պարսից ու Մողոլաց իշխանութեան տակն  
էին . 1747-ին ինքնագլուխ եղան :

Հ. Մայրաքաղաքը որն է :

Պ. *Բասպուշ (Բեասպիշ)* (80,000 բն.) ձիու մեծ  
առուտուր ունի :

Հ. Ուրիշ ինչ զլխաւոր քաղաքներ ունի :

Պ. *Գանտահար* (100,000 բն.) Աֆղանիստա-  
նի հին մայրաքաղաքը . ամուր ու վաճառաշահ .

*Հերաք* (100,000 բն.) արեւելքի մեծ եւ  
անուանի քաղաքներէն մեկը :

Հ. Աֆղանիստանի կրօնքն ինչ է :

Պ. Մահմեդականութիւն :

## ԴԱՍ ՀԷ.

### Պ ե յ ո շ Ն ի ս տ ա ն .

Հ. Պելուճիստանի բնակիչը որչափ է :

Պ. Երկու միլիոն :

Հ. Պելուճիստանի սահմանը որն է :

Պ. Հիւսիսէն Աֆղանիստան .

Հարաւէն Էօմենի ծոցը .

Արեւելքէն Հնդկաստան .

Արեւմտքէն Պարսկաստան :

Հ. Մայրաքաղաքը որն է :

Պ. Քէշաք (20,000 բն.) ճարտար ու վաճառաշահ քաղաք :

Հ. Պելուճիստանի կրօնքն ինչ է :

Պ. Մահմետականութիւն :

Հ. Կառավարութեան կերպն ինչպէս է :

Պ. Խանութիւն :



ԴԱՍ ՀԸ.

Հ ն դ կ ա ս ա ն .

Հ. Հնդկաստանի բնակիչը որչափ է :

Պ. Հարիւր յիսունհինգ միլիոն :

Հ. Սահմանը որն է :

Պ. Հիւսիսէն Չինաց կայսերութիւնը .

Հարաւէն Հնդկաց ծովը .

Արեւելքէն Պենկալայի ծոցը եւ Հնդկաչին .

Արեւմտքէն Աֆղանիստան , Պելուճիստան եւ Էօմենի ծոցը :

Հ. Հնդկաստան քանի մասն կբաժնուի :

Պ. Հինգ . այսինքն

Անկախ տերութիւնք .

Անգղիացւոց ձեռքն եղած երկիրներ .

Անգղիացւոց հարկատու երկիրներ .

Գաղղիացւոց ձեռքն եղած երկիրներ .

Փորթուկալցւոց ձեռքն եղած երկիրներ :

Հ. Անկախ տերութեանց գլխաւոր քաղաքները որոնք են :

Պ. *Հահոր* (100,000 բն.) ոչխարներուն բուրդը ազնիւ, եւ անով շինուած շալերն անուանի .

*Քաշմիր* (60,000 բն.) ցփսին ու շալը շատ յարգի է :

---

### ԳԱՍ ՀԹ.

#### *Անգղիացոց ձեռքն եղած երկիրներ.*

Հ. Անգղիացոց ձեռքն եղած երկիրներուն գլխաւոր քաղաքները որոնք են :

Պ. *Կաշկարա* (1,000,000 բն.) ծաղկած ու վաճառաշահ քաղաք, ուր մեր ազգէն եւս բազմութիւն կայ, եւ *Մարդասիրական ձեւարան* բռնած ուսումնարանը հանդերձ տալարանով :

*Տէշի* (180,000 բն.) փառաւոր քաղաք, որ Մողոլի տերութեան մայրաքաղաքն էր .

*Մատրաս* (500,000 բն.) Պենկայայի ծոցին վրայ վաճառաշահ քաղաք. մեր ազգէն եւս երեսելի վաճառականներ ու ժողովուրդ կայ հոս .

*Պենարես* (200,000 բն.) Գանգես գետին վրայ Հնդկաստանցոց ամենէն ուսումնական քաղաքն ու մեծ ուխտատեղին է .



*Պոմպայ* (255,000 բն.) ցամաքի մօտ փոքր կղզիի մը վրայ՝ վաճառաշահ քաղաք .

*Սուրաբ* (125,000 բն.) ամուր քաղաք եւ խիստ բանուկ նաւահանգիստ .

*Տաքքա* (150,000 բն.) Գանգեսի վրայ ճարտար քաղաք .

*Փարնա* (300,000 բն.) մեծ ու վաճառաշահ քաղաք :

Հ. Անգղիացւոց հարկատու եղած տերութեանց գլխաւոր քաղաքները որոնք են :

Պ. *Լուքնօ* (300,000 բն.) Ռուտի նապապին՝ այսինքն իշխանին մայրաքաղաքը .

*Հայտերապատ* (120,000 բն.) Նիզամի բազաւորութեան մայրաքաղաքը .

*Նադիուր* (120,000 բն.) եւ *Պարոտա* (100,000 բն.) Նադիուրի եւ Պարոտայի բազաւորութեանց մայրաքաղաքներն են :



**ԴԱՍ Զ.**

**Գաղղիացւոց եւ Փորրուկացւոց մասը,  
եւ Հնդկաստանի կղզիները.**

Հ. Գաղղիացւոց ձեռքն եղած մասին գլխաւոր քաղաքները որոնք են :

Պ. Փոնրիչերի (22,000 բն.) ամուր ու վաճառաշահ քաղաք .

Չակոտեռուկոր (30,000 բն.) ճարտար ու վաճառաշահ քաղաք :

Հ. Փորրուկացւոց մասին գլխաւոր քաղաքը որն է :

Պ. Կոս (30,000 բն.) ամուր ու վաճառաշահ քաղաք, եւ անբոյք նաւահանգիստ :

Հ. Հնդկաստանի ծովեզերքին մօտ քանի գլխաւոր կղզի կայ, եւ որոնք են :

Պ. Երկու խումբ կղզեաց նա մեկ մեծ կղզի խումբերն են .

Լաքեոսիվեանք՝ Մալապարի, այսինքն արեւելեան Հնդկաստանի ծովեզերքը՝ որ 42

հատ են, եւ ամենքն ալ Անգղիացոց հարկատու իշխանի մը կհնազանդին .

*Մարտիվեանք*՝ Լաքետիվեանց հարապային արեւելակողմը, 12 հազարի չափ մանր մանր խումբեր կամ ժայռեր : Ամենքն ալ ինքնիշխան սուլդանի մը կհնազանդին :

Ամենէն մեծն է *Սէշլան* կղզին՝ Անգղիացոց ձեռքը :

## ԴԱՍ ՁԱ.

### Հ ն դ կ ա չ ի ն .

- Հ. Հնդկաչինու բնակիչը որչափ է :
- Պ. Բսանուիրեք միլիոն :
- Հ. Մահմանը որն է :
- Պ. Հիւսիսէն Չինաց կայսերութիւնը .  
Հարաւէն Մալաքքայի նեղուցն ու Չինաց ծովը .  
Արեւելքէն Չինաց ծովն ու Թոնքինի ծոցը .  
Արեւմտքէն Հնդկաստան եւ Պենկալայի ծոցը :
- Հ. Հնդկաչինը քանի մասն կբաժնուի, եւ զիստոր քաղաքները որոնք են :
- Պ. Հինգ մասն կբաժնուի, որ ասոնք են .

ա, Անգղիական Հնդկաչին. գլխաւոր քաղաքները *Արաքան* (100,000 բն.) *Մաշաքքա* (60,000 բն.) եւ *Սիւնկափուշ* (30,000 բն.).

բ, Ազատ Մալաքքա բերակղզին, յորում վեց բազաւորութիւնք կան.

գ, Պիրմանի կայսերութիւնը, որոյ մայրաքաղաքն է *Ալխ* (50,000 բն.).

դ, Սիամի բազաւորութիւնը, որոյ մայրաքաղաքն է *Պանքոք* (90,000 բն.).

ե, Աննամի կայսերութիւնը, որ ամենէն մեծն ու զօրաւորն է, եւ չորս բազաւորութիւն կրովանդակէ. մայրաքաղաքն է *Հուէ* (100,000 բն.):

Հ. Աննամի հարաւային մասը ինչ կասուի:

Պ. *Քոչիւլիւ*, յորում է եւ *Հուէ* մայրաքաղաքը՝ որ պարսպացը կարգէ դուրս ամրութեանը կողմանէ Սիոյ ամենէն ամուր բերդաքաղաքը կհամարուի:

Հ. Հիւսիսային Աննամը ինչ կկոչուի:

Պ. *Թոնքիւ*, եւ մայրաքաղաքն է *Քէչոյ* (90,000 բն.):

Հ. Հնդկաչինու կղզիները որոնք են:

Պ. Այս երեք խումբերն են.

*Անտաւան* եւ *Նիքոպար* կղզիք՝ Պենկալայի ծոցին մեջ. *Փարացէլս*՝ Զինաց ծովուն մեջ:

ԴԱՍ ՁԲ.

*Ձին կարճ Ձինասան.*

Կայսերութիւն.

Հ. Ձինու բնակիչը ո՞րչափ է:

Պ. Չորսնարիւր միլիոն:

Հ. Սահմանը ո՞րն է:

Պ. Հիւսիսէն Սիպերիա.

Հարաւէն Հնդկաստան եւ Հնդկաչին.

Արեւելքէն Ձինաց ծով, Կապոյտ ծով,  
Գեղին ծով ու Ճափոնի ծով.

Արեւմտքէն Թուրքաստան եւ Հնդկաչին:

Հ. Ձինաց կայսերութիւնը քանի՞ գլխաւոր  
մասն կրածնուի:

Պ. Երկու. բուն Ձինաստան եւ Հարկատու  
երկիրներ:

Հ. Մայրաքաղաքը ո՞րն է:

Պ. *Փէքիե*, աշխարհիս ամենէն մեծ քաղա-  
քը (1,700,000 բն.):

Հ. Ուրիշ գլխաւոր քաղաքները որոնք են :

Պ. *Քսէրոն* (850,000 բն.) կայսերութեան ամենէն վաճառաշահ քաղաքը . չայլ մեծ առուտուր ունի .

*Նսէքիւ* (800,000 բն.) ճարտար եւ ուսումնական քաղաք, եւ կայսերութեան հին մայրաքաղաքը :

Հ. Հարկատու երկիրներուն գլխաւորները որոնք են :

Պ. *Քորեա*, *Մոդոյ* եւ *Թիպէր* :

Հ. Գլխաւոր կղզիները որոնք են :

Պ. *Թարաքայ*, *Ֆորսնոզա* կամ *Թայ-Ուան*, *Հայ-Նսէ* եւ *Լիու-Չեու* կղզեաց արշիպելագոսը :

---

## ԴԱՍ ԶԳ.

Ճ ա յի ո ն .

Հ. Ճափոնի բնակիչը ո՞րչափ է :

Պ. Երեսուն միլիոն :

Հ. Ճափոնի կայսերութեան դիրքը ո՞րն է, եւ թնչ կղզիներով կձեւանայ :

Պ. Ճափոնի կայսերութիւնը Ասիոյ արեւե-



լակողմն է, եւ հինգ կղզիներէ կձեւանայ, որք  
են Նիֆոն, Սիքոքֆ, Եսօ, Բիւսիւ եւ Թա-  
րաքայ կղզւոյն հարաւակողմը :

Հ. Մայրաքաղաքը ո՞րն է :

Պ. Եսօ (1,300,000 բն.) Նիֆոն կղզւոյն վրայ  
Ասիոյ գեղեցիկ քաղաքներէն մէկը :

Հ. Ուրիշ գլխաւոր քաղաքը ո՞րն է :

Պ. Միաքօ (530,000 բն.) որ ճափոնի ու-  
սումնական քաղաքն է :



... ..  
... ..  
... ..

... ..  
... ..  
... ..

... ..  
... ..  
... ..

... ..  
... ..  
... ..

... ..  
... ..  
... ..

... ..  
... ..  
... ..

... ..  
... ..  
... ..

... ..  
... ..  
... ..

ԵՐՐՈՐԴ ՄԱՍՆ ԱՇԽԱՐՀԻ,

Ա. Փ Ր Ի Կ Է.

ԴԱՍ ԾԴ.

*Դիրք, քնակիչք եւ սահմանք Ափրիկէի.*

Հ. Ի՞նչ է Ափրիկէն :

Պ. Հին ցամաքին երրորդ մասն է, մեծ քերակոզի՝ Ասիոյ հետ Սիւեզի պարանոցովը միացած :

Հ. Բնակիչը ո՞րքաի է :

Պ. Իննսուն միլիոն :

Հ. Սահմանը ո՞րն է :

Պ. Հիւսիսէն Միջերկրական ծովը :

Հարաւէն Մեծ ովկիանոս .

Արեւելքէն Սիւեզի պարանոցը, Կարմիր ծովը եւ Հնդկաց ովկիանոսը .

Արեւմտքէն Ատլանտեան ովկիանոսը :

## ԴԱՍ ԶԵ.

*Ափրիկեի նեղուցները, ծոցերը, գետերն  
ու շները.*

Հ. Ափրիկեն քանի նեղուց ունի :

Պ. Երեք. Ճիպրաշրարի նեղուցն որ Ատլանտեան ովկիանոսը Միջերկրականին հետ կը միացընէ .

*Մոզամպիքի նեղուցը՝ Մատակասքար կղզւոյն ու ցամաքին մէջտեղը .*

*Պապ-Իւր-Մակոեպի նեղուցը՝ որ Արաբիոյ ծոցը Ատենի ծոցոյն հետ կմիացընէ :*

Հ. Քանի ծոց ունի :

Պ. Ափրիկեին ծովերը վեց ծոց կձեռացընեն, այսինքն

*Սիրք եւ Քապես՝ Միջերկրականէն ձեռացած .*

*Կուիկեայի ծոցը՝ Ատլանտեան ովկիանոսէն ձեռացած .*

*Լոկոս եւ Սոմալա՝ Հնդկաց ովկիանոսէն ձեռացած .*

*Առեկեի* ծոցը՝ Կարմիր ծովէն ձեւացած :  
Հ. Ափրիկէն քանի մեծ գետ ունի, եւ որոնք են :

Պ. Վեց. մեկն է *Նեղոս*՝ որ Եթովպիան կամ Հապէշտանը, Նուպիան եւ Եգիպտոսը կոռոգէ ու Միջերկրական ծովը կրափի .

Չորսը Ատլանտեան ովկիանոսը կրափին .  
*Սենեկաչ* եւ *Կամպիա*՝ Սենեկամպիան ոռոգելով, եւ *Նիկեր* եւ *Քոնկո* կամ *Չայիրէ*՝ հարաւային Կուինեայէն անցնելով .

*Չամպեզ* Հնդկաց ծովը կվազէ՝ Քաֆրաստանէն ու Մոզամպիքէն անցնելով :

Հ. Ափրիկէի գլխաւոր լճերը որոնք են :

Պ. Ափրիկէի ամէն լճերն ալ ծանօթ չեն . անոնցմէ երկու երեսելիներն են *Չառ*՝ Սուտանի մեջ, եւ *Տեմպեա*՝ Հապէշտանի մեջ :

---

## ԴԱՍ ԶԶ.

*Ափրիկէի կղզիներն ու հրուանդանները .*

Հ. Ափրիկէի գլխաւոր կղզիները կամ կըղզեաց խումբերը քանի են :

Պ. Տասնըջորս .

Ութը Ատլանտեան ովկիանոսին մեջ,  
այսինքն *Ատրեանք, Մատերս, Բանա-  
րեանք, կղզիք Դալարի Գլխոյ, Կռիկեայի*  
ծոցին կղզիները, *Սուրք Մատրեոս կղզիք,*  
*Հանքարձումն, Սուրք Հեղիկէ.*

Վեցը՝ Հնդկաց ծովուն մեջ, այսինքն  
*Սոքոթորս, Սէյլէլեան կղզիք, Բոմորեան*  
*կղզիք, Զենգիպար, Մատակասքար, Մաս-  
քարիկեան կղզիք:*

Հ. Ափրիկէն քանի գլխաւոր հրուանդան  
ունի, եւ որոնք են:

Պ. Տասնըմեկ. եւ են

Գլուխ *Պոն* կամ *Բարի*՝ Պերպերիստա-  
նի հիւսիսակողմը.

Գլուխ *Սպիտակ* եւ *Պոյատոր*՝ Սահրայի  
արեւմտակողմը.

Գլուխ *Դալարի*՝ Սենեկամպիոյ արեւ-  
մտակողմը.

Գլուխ *Արմաշենեաց*՝ հիւսիսային Կուի-  
նեայի արեւմտակողմը.

Գլուխ *Լոսիկզ*՝ Երկու Կուինեաներուն  
մեջտեղը.

Գլուխ *Բարեշուսոյ* եւ Գլուխ *Ատլանց*՝  
Բարեյուսոյ գլխոյն երկրին հարաւակողմը.

Գլուխ *Կատօ* կամ *Քաթօ-տեղ-Կատօ*՝  
Մոզամպիլի հիւսիսակողմը:



Գլուխ Կուարտաձուխ՝ Այանի հիսսիսակողմը .

Գլուխ Սուրբ Մարիամ՝ Մատակասքար կղզւոյն հարաւակողմը :

---

## ԴԱՍ ԶԷ.

### Ափրիկէի լեռները.

Հ. Ափրիկէի մեջ քանի գլխաւոր գօտիք լեռանց կան, եւ որոնք են :

Պ. Հինգ. եւ են

Ատլաս, որ Պերպերիստանի մեջ տարածուած է .

Քուկ, որ Նիկրիտիան կամ Սուտանը Կուինեայէն կգատէ .

Լուսի լեռները՝ Նիկրիտիոյ եւ Հապէշտանի հարաւակողմը .

Լուխարա լեռները՝ որ Ափրիկէի արեւելեան ծովեզերքը կտարածուին .

Մատակասքարի լեռները՝ որ այն կղզւոյն բոլոր երկայնութիւնը կբռնեն :

## ԴԱՍ ԶԸ.

*Ափրիկէի օղը, քերֆը, գազանները ու կրօնքը.*

Հ. Ափրիկէի օղն ինչպէս է:

Պ. Որովհետեւ հասարակածին զրեք տակն է ու անով երկու հաւասար մասն կրածնուի Ափրիկէն, բոյոր տարին արեւուն ճառագայթները ուղղահայեաց վրան կգարնեն, ու կարգէ դուրս տալուքին կպատճառեն:

Հ. Բերքն ինչ է:

Պ. Ընդհանրապէս ծովեզերքը պտղաբեր է, բայց ներսերն ընդարձակ աւազուտ անապատներ ունի, ուր հազիւ քանի մը դալարարոյս երկիրներ կան որ *ախսիս* կասուին: Գետերուն եզերքը զարմանալի կերպով կանին զանազան բոյսեր ու ծառեր. քոքենին, արմաւենին, աղամարգենին իրենց առատ պտղովը դիւրագիւտ կերակուր կպատրաստեն բնակչաց. ցորենը, եգիպտացորենը եւ շաքարարոյսը՝ մշակուած տեղերը լաւ առաջ կուգան:

Հ. Ի՞նչ զագաններ կան Ափրիկէ:

Պ. Անապատները լի են կատաղի զագաններով, որոց գլխաւորներն են առիւծ, վագր, յովագ, ինձ, կոկորդիլոս, օձ, ձիագետի, ռնգեղջիւր, տաճիկ ուղտ, ընձուղտ, վագերածի, եւ այլն: Թռչնոցը մեջ ալ անուանի եջայլամը, որոյ փետուրները շատ յարզի են:

Հ. Բնակիչքը ինչ ցեղէ են:

Պ. Ափրիկեցիք երկու մեծ ցեղ կրածնուին. *սպիտակ* կամ *կապիսային* ցեղ, յորմէ են բոլոր հիւսիսային կողմին բնակիչները. եւ *սև* ցեղ, որ այն ընդարձակ ցամաքակղզւոյն բոլոր միւս կտորները բռնած է: Գրեթէ ամբողջ հիւսիսակողմը տարածուած են Արաբացիք՝ որ մահմեդական են, իսկ միւս կողմերը սեւերը՝ որ կռապաշտեն. ծովեզերքն ու մօտ եղած կղզիներուն մեջ միայն գաղթական քրիստոնեայք կան:

---

## ԴԱՍ ԶԹ.

### *Ափրիկիի քաժանուէր.*

Հ. Ափրիկէն քանի աշխարհ կրածնուի:

Պ. Տասնութքը. երեքը հիւսիսակողմը, եօթը մեջտեղը, եւ ութը հարաւակողմը:

Հ. Հիւսիսայինները որոնք են :

Պ. Պերպերիստան, Եգիպտոս, Սահրա :

Հ. Մեջտեղիները որոնք են :

Պ. Սեւեկամպիա, հիւսիսային Կուրեկա, Սուտան կամ Նիկրիտիա, Նուպիա, Երովպիա կամ Հապեշտան, Այան, Ատէշ :

Հ. Հարաւայինները որոնք են :

Պ. Հարաւային Կուրեկա, Օրենքացոց երկիրը, գաղղականութիւն Բարեյուշայթըլ-խոյն, Գամբրատան, Մսնունքայիա, Մոգամպիք, Զանկեպար, Մատակասքար :

---

## ԴԱՍ Ը.

### Պերպերիստան .

Հ. Պերպերիստանի բնակիչը որչափ է :

Պ. Քսան միլիոն :

Հ. Սահմանը որն է :

Պ. Հիւսիսէն Միջերկրական ծովը .

Հարաւէն Սահրա .

Արեւելքէն Եգիպտոս .

Արեւմտքէն Ատլանտեան օվկիանոս :

Հ. Պերպերիստանը քանի տերութիւն կը-  
րածնուի :

Պ. Չորս. այսինքն Թրիփուլիի կամ Թարա-  
պլուսի եւ Թունուզի ինամակալութիւնները,  
Ալճերի կամ ձեզայիր, որուն 1830-ին տիրե-  
ցին Գաղղիացիք, եւ Մարոքի կամ Մերաքե-  
շի կայսերութիւնը :

Հ. Թրիփուլիի մայրաքաղաքը ո՞րն է :

Պ. *Թրիփուլի* կամ *Թարասպուս* (25,000 բն.)  
նոս կնրստի պէյը, այսինքն երկրին իշխանը :

Հ. Թունուզի մայրաքաղաքը ո՞րն է :

Պ. *Թունուզ* (100,000 բն.) Միջերկրականին  
վրայ նաւահանգիստ, ճարտար ու վաճառա-  
շահ քաղաք, Կարքեղոնի աւերակացը մօտ :

Հ. Ալճերիի կամ ձեզայիրի գլխաւոր քաղա-  
քը ո՞րն է :

Պ. *Ալճերի* (*Ալժէ*) կամ *ձեզայիր* (55,000  
բն.) Միջերկրականին վրայ նաւահանգիստ :

Հ. Մարոքի մայրաքաղաքը ո՞րն է :

Պ. *Մարոք* կամ *Մերաքէշ* (70,000 բն.)  
մեծ ու վաճառաշահ քաղաք :

Հ. Ուրիշ ինչ երեսնի քաղաք ունի :

Պ. *Յէս* (100,000 բն.) մեծ քաղաք. առե-  
նով արուեստներն ու գիտութիւնները շատ  
ծաղկած էին :

**ԴԱՍ ՂԱ.**

**Ե գ ի ս ո ս ն ս .**

- Հ. Եզիպտոսի բնակիչը հրջափ է :
- Պ. Երէք միլիոն :
- Հ. Եզիպտոսի սահմանը հրն է :
- Պ. Հիւսիսէն Միջերկրական ծովը .  
Հարաւէն Նոպիա .  
Արեւելքէն Կարմիր ծովն ու Սիւեզի  
պարանոցը .  
Արեւմտքէն Լիբիոյ անապատը :
- Հ. Եզիպտոսի մայրաքաղաքը հրն է :
- Պ. *Գահիրէ* կամ *Մըսրը* (300,000 բն.) Նե-  
ղոսին աջակողմեան գետափունքը շինուած՝  
հին ու հոյակապ քաղաք :
- Հ. Ուրիշ գլխաւոր քաղաքները որոնք են :
- Պ. *Ադէքուսնդրիա* կամ *Իսրէկտէրիէ*  
(50,000 բն.) Միջերկրականին վրայ անուա-  
նի նաւահանգիստ, եւ Եզիպտոսի ամենեւն  
վաճառաշահ քաղաքը :



*Ռեշիտ կամ Ռոզէքքա* (15,000 բն.) —  
*Տաւիար* (20,000 բն.) բանակ նաւահան-  
գիստներ .

*Սիւեզ* (1,000 բն.) կարմիր ծովուն վրայ  
նաւահանգիստ :—Ափրիկէն Ասիոյ նետ միա-  
ցրնող պարանոցը *Սիւեզի պարանոց* կասուի :

- Հ. Եգիպտոսի կառավարութիւնն ինչպէս է :
- Պ. Փոխարքայութիւն է՝ Օսմանեանց իշխա-  
նութեանը տակ :

---

### ԳԱՍ ՂԲ.

*Սահրա կամ Մեծ աւապաս.*

- Հ. Սահրայի բնակիչը որչափ է
- Պ. Մեկ միլիոն :
- Հ. Սահրայի արեւելեան մասն ինչ կասուի,  
եւ սահմանը որն է :
- Պ. *Լիբիոյ աւապաս*. եւ սահմանն է  
Հիսսիսէն Պերպերիստան .  
Հարաւէն Սոտան .  
Արեւելքէն Եգիպտոս .  
Արեւմտքէն Ատլանտեան ովկիանոս :
- Հ. Սահրայի բնակիչները ինչ ազգ են :
- Պ. Արաբացի, Պերպեր եւ Մաւրիտանացի :

- Հ. Սոքա ո՞ր կրնակին :  
Պ. Ովասիսներու մեջ, ուր ունին նաեւ ան-  
նշան քաղաքներ, ինչպէս Ակապլի, Ակա-  
տեւ, Հոտէն :  
Հ. Կրօնքնին ինչ է :  
Պ. Մահմեդականութիւն :
- 

## ԴԱՍ ՂԳ.

### *Ս ե ն ե կ ա լ ս ի ա .*

- Հ. Սենեկամալոյ բնակիչը ո՞րչափ է :  
Պ. Տասուերկու միլիոն :  
Հ. Ինչո՞ւ համար *Սենեկարկա* ըսուած է  
այս երկիրը :  
Պ. Որովհետեւ *Սենեկալ* եւ *Կարկա* գե-  
տերը մեջէն կանցնին :  
Հ. Սահմանը ո՞րն է :  
Պ. Հիւսիսէն Սահրա .  
Հարաւէն Կուիսեա .  
Արեւելքէն Սուտան .  
Արեւմտքէն Ատլանտեան ովկիանոս :

Հ. Սենեկամալիան քանի կրածնուի:

Պ. Երկու. Ինքնագլուխ Սենեկամալիա, եւ գաղթական Սենեկամալիա՝ որ Անգղիացւոց, Գաղղիացւոց եւ Փորթուկացւոց ձեռքն է:

Հ. Գաղղիացւոց գաղթականութեան մայրաքաղաքը ո՞րն է:

Պ. Սուրբ Լուչոյիկոս (12,000 բն.) որ Սենեկալին բերանը կղզիի մը վրայ շինուած է:

Հ. Գաղղիացիք ուրիշ ինչ երկիր ունին հոն:

Պ. Իրենցն է նաեւ *Կորկա* կղզին, Գալարի գլխոյն մօտ:

Հ. Ինքնագլուխ Սենեկամալիոյ գլխաւոր քաղաքները որո՞նք են:

Պ. Պամպուրք եւ Թիմպօ:

Հ. Բուն Սենեկամալիոյ սեւերուն կրօնն ինչ է:

Պ. Մահմետականութիւն:



## ԴԱՍ ՂԴ.

### Հիւսիսային Կուրինեա.

- Հ. Հիւսիսային Կուրինեայի բնակիչը որչափ է :  
Պ. Տասը միլիոն :
- Հ. Սահմանը որն է :  
Պ. Հիւսիսէն Սուտան եւ Սենեկամալիա .  
Հարաւէն Կուրինեայի ծոցն ու հարաւային  
Կուրինեա .  
Արեւելքէն Փափրաստան .  
Արեւմտքէն Ատլանտեան ովկիանոս :
- Հ. Քանի մասն կրածնուի :  
Պ. Երկու . *ինքնագրուիս Կուրինեա*, յորում  
այլ եւ այլ քաղաւորութիւններ կան, եւ զըլ-  
խաւոր քաղաքներն են *Ապումէյ*, *Քոմագի* .  
եւ *գաղբակսն Կուրինեա*, յորում Անգղիա-  
ցիք, Հոլանտացիք, Տանիմարքացիք եւ Ա-  
մերիկացիք երկիրներ ունին :
- Հ. Բուն Կուրինեացոց կրօնքն ինչ է :  
Պ. Կռապաշտութիւն :

ԳԱՍ ՂԵ.

*Հարաւային Կուինեա կամ Քոնկո.*

Հ. Հարաւային Կուինեայի բնակիչը ճրջափ է:

Պ. Հինգ միլիոն :

Հ. Սահմանը ճրն է:

Պ. Հիւսիսէն Հիւսիսային Կուինեա .

Հարաւէն եւ արեւելքէն՝ Քաֆրաստան.

Արեւմտքէն Ատլանտեան օվկիանոս :

Հ. Քանի մասն կրածնուի :

Պ. Երկու . ինքնիշխան բազաւորութիւններ,  
եւ զաղբական երկիրներ՝ որ Փորբուկայցւոց  
ձեռքն են :

Հ. Ինքնիշխան բազաւորութեանց զխաւոր  
քաղաքները որոնք են :

Պ. *Լօանկօ* կամ *Պուալի* եւ *Սան-Սալվատոր* :

Հ. Փորբուկայցւոց զխաւոր քաղաքները ո-  
րոնք են :

Պ. *Լօանտա* եւ *Պենկէլա* :

Հ. Բուն բնակչաց կրօնքն ինչ է :

Պ. Հիւսիսային Կուինեացւոց պէս կռապաշ-  
տութիւն :

ԴԱՍ ՂԶ.

*Սուսան կամ Նիկրիսիա.*

Հ. Սուտանի բնակիչը ճրջափ է :

Պ. Քսան միլիոն :

Հ. Սահմանը ճրն է :

Պ. Հիւսիսէն Սահրա .

Հարաւէն Քաֆրաստան .

Արեւելքէն Նուպիա .

Արեւմտքէն Սենեկամպիա :

Հ. Սուտան ինչպէս կրածնուի :

Պ. Այլ եւ այլ բազաւորութիւններ :

Հ. Գլխաւոր քաղաքները որոնք են :

Պ. *Թումպուքքու* (12,000 բն.) որ Ափրիկէի մեծ քաղաքներէն մէկն է, եւ Պերպերիստանի ու Եգիպտոսի հետ ընդարձակ առուտուր ունի .

*Սաքարու* (80,000 բն.) մայրաքաղաք Ֆեզզանի բազաւորութեան՝ որ ամենէն զօրաւորն է .

*Էնկոռնու* (50,000 բն.) որ Պոռնուի բազաւորութեան մայրաքաղաքն է :



Հ. Սուտանցիք թնչ գոյն ունին եւ կրօնք-  
նին թնչ է :

Պ. Սաստիկ սեւ են, եւ մահմեդական ու  
կուսապաշտ :

---

### ԴԱՍ ՂԷ.

#### Ն ո շ պ ի ա .

Հ. Նուպիոյ բնակիչը որչափ է :

Պ. Երկու միլիոն :

Հ. Սահմանը որն է :

Պ. Հիւսիսէն Եգիպտոս .

Հարաւէն Եթովպիա .

Արեւելքէն Կարմիր ծովը .

Արեւմտքէն Լիբիոյ անապատը :

Հ. Նուպիա որո՞ն իշխանութեան տակն է :

Պ. Եգիպտոսի փոխարքային :

Հ. Գլխաւոր քաղաքը որն է :

Պ. Սեննար (9,000 բն.) որ Կապոյտ Նեղոսի  
կամ Պահր-իւլ-Ազրէքին վրայ վաճառա-  
շահ քաղաք է :

Հ. Նուպիացւոց կրօնքն թնչ է :

Պ. Մահմեդականութիւն :

---

## ԴԱՍ ՂԸ.

### Երովպիա կամ Հապեշիսան.

Հ. Երովպիոյ բնակիչը սրջափ է:

Պ. Չորս միլիոն:

Հ. Սահմանը սրն է:

Պ. Հիւսիսէն Նուպիա.

Հարաւէն Քափրաստան եւ Այանի ծովե-  
զերքը.

Արեւելքէն Պապ-իւլ-Մանտեպի նեղուցը  
եւ Կարմիր ծովը.

Արեւմտքէն Նուպիա եւ Սուտան:

Հ. Երովպիան ինչպէս կրամնուի:

Պ. Այլ եւ այլ քաղաւորութիւններ, որոց ե-  
րեւելին է Թիկրէ՝ իւր Շէշիքուք մայրաքա-  
ղաքովը:

Հ. Երովպացիք ինչ կրօնք ունին:

Պ. Երովպացիք, որ Հապեշ կամ Խաշիշիկ  
եւս կասուին, քրիստոնէութիւնը ընդունած  
են չորրորդ դարուն, եւ մեծ մասը մինչեւ  
հիմա պահած են, բայց խառն հրեական ու  
աւելորդապաշտ արարողութեամբք:

ԴԱՍ ՂԹ.

Ա. յ ա ն ե շ Ա. Տ Կ Ղ.

Հ. Այանի եւ Ատեւի բնակիչը որչափ է :

Պ. Չորսհարիւր հազար, որոց կեսը մահմետական արարացի սեւեր են, եւ կեսը կրօնապաշտ :

Հ. Սահմանը որն է :

Պ. Հիւսիսէն Ատենի ծոցը .

Հարաւէն Զանկեպար ,

Արեւելքէն Հնդկաց ծովը .

Արեւմտքէն Երովպիա եւ Քաֆրաստան :

Հ. Կառավարութիւնն ինչպէս է :

Պ. Երկու զատ զատ բազաւորութիւն է :

Հ. Մայրաքաղաքները որոնք են :

Պ. Զէյթա, Պապ - իւլ - Մանտեպի նեղուցին վրայ վաճառաշահ քաղաք. եւ Աւասկուրէշ, ուր հազիւ երբեք կանձրեւեկ :



## ԳԱՍ Ճ.

### *Քափրաստան եւ Մոնոմորափա .*

Հ. Քափրաստանի բնակիչը ո՞րչափ է :

Պ. Երկու միլիոն :

Հ. Սահմանը ո՞րն է :

Պ. Հիւսիսէն Սուտան .

Հարաւէն Օթենթացոց երկիրը եւ Հընդկաց ծովը .

Արեւելքէն Մոզամպիք, Զանկեպար եւ Այանի ծովեզերքը .

Արեւմտքէն Ատլանտեան ովկիանոս :

Հ. Քափրաստանը Ափրիկէի ո՞ր կողմն է :

Պ. Ափրիկէի մեջտեղն եղած բոլոր անծանօթ երկիրները Քափրաստան կասուին :

Հ. Մոնոմորափան ինչ է, եւ վրան ինչ կայ գիտնալիք :

Պ. Մոնոմորափան Քափրաստանի մէկ կրտորը կրնայ սեպուիլ . մէկ միլիոն չորսհարիւր հազար բնակիչ ունի . ատենով զօրաւոր բազաւորութիւն էր , բայց ներքին կռիւներով տկարացաւ . հիմա այլ եւ այլ մանր ու տկար իշխանութիւններ են , եւ Փորթուկացիք ծովեզերքին տիրած :

**ԴԱՍ ՃԱ.**

**Գաղթականութիւն գլխոյն Բարեյուսոյ.**

**— Օրենքացոց երկիր.**

Հ. Բարեյուսոյ գլխոյն բնակիչը ո՞րքափ է:

Պ. Երկուհարիւր վաթսուհազար, կեսը Անգղիացիք ու Հոլանտացիք, եւ կեսը կոսապաշտ սեւեր կամ Օրենքացիք:

Հ. Սահմանը ո՞րն է:

Պ. Հիւսիսէն Օրենքացոց երկիրը.  
Հարաւէն ու արեւմտքէն Ատլանտեան  
ովկիանոս.

Արեւելքէն Մոզամպիքի նեղուցը:

Հ. Մայրաքաղաքը ո՞րն է:

Պ. *Գլուխ* կամ *Քաշի* (20,000 բն.) Բարեյուսոյ գլխոյն երկրին հարաւակողմը, որ 1806-էն ի վեր Անգղիացոց ձեռքն է, ինչպէս նաեւ բոլոր երկիրը:

Հ. Օրենքացոց երկիրն ո՞ր է:

Պ. Գլուխ Բարեյուսոյ երկրին հիւսիսակողմը:

Հ. Բնակիչը զորջափ է:

Պ. Երկուհարիւր հազար, որ վայրենի կռապաշտ ու սեւամորթ ժողովուրդ են՝ այլ եւ այլ ցեղ բաժնուած, եւ ողորմելի գեղեր կբնակին:

---

ԴԱՍ ՃԲ.

*Մոզամպիք.*

Հ. Մոզամպիքը որո՞ւ ձեռքն է:

Պ. Փորթուկացեոց գաղթականութեան մը, որոյ գլուխը իշխան մի է:

Հ. Բնակիչը զորջափ է:

Պ. Երկու միլիոն վեցհարիւր հազար, որոց մեծագոյն մասը կռապաշտ սեւեր են՝ այլ եւ այլ ժողովուրդներ բաժնուած, եւ իրենց համար մեկմեկ մասնաւոր շէխեր կամ գլուխներ ունին:

Հ. Սահմանը որն է:

Պ. Հիւսիսէն Զանկեպար.

Հարաւէն եւ արեւմտքէն Քաֆրաստան.

Արեւելքէն Մոզամպիքի նեղուցը:

Հ. Մայրաքաղաքը որն է:

Պ. *Մոզամպիք* (3,000 բն.) ծովեզերքին մօտ կղզիի մը վրայ:



## ԴԱՍ ՃԳ.

### *Ձ ա ն կ ե պ ա ր .*

Հ. Ձանկեպարի բնակիչը իրջափ է :

Պ. Մեկ ու կես միլիոն , կեսը արարացի մահմեդական է և կեսը կռապաշտ սեւեր :

Հ. Սահմանը ի՞նչ է :

Պ. Հիւսիսէն Ալան .


Հարաւէն Մոզամպիք .

Արեւելքէն Հնդկաց ծովը .

Արեւմտքէն Մոզամպիք :

Հ. Վրան ինչ գիտելիք կայ :

Պ. Ձանկեպարի երկիրը այլ է և այլ մանր տեքուրիւններ բաժնուած է , որոց գլխաւոր քաղաքներն իրենց իւրաքանչիւրին անուամբը կկոչուին , եւ են *Մակատոքսո* , *Պրաւա* , *Մեշինտա* , *Մոնպազա* , *Քիլօա* եւ *Մոնկալլօ* :



THE ART

1. The first part of the book is devoted to a general introduction to the subject of the art of the artist. It discusses the various elements of the art, such as the materials used, the tools, and the techniques employed. It also touches upon the historical development of the art and the role of the artist in society.

2. The second part of the book is a detailed study of the various branches of the art. It covers the different styles and schools of art, from the classical to the modern. It also discusses the influence of various factors, such as the environment, the culture, and the individual artist, on the development of the art.

3. The third part of the book is a practical guide to the art of the artist. It provides a step-by-step guide to the various techniques and methods used in the art. It also includes a number of exercises and projects designed to help the reader develop their own skills and style.

4. The fourth part of the book is a collection of essays and articles by various artists and art critics. These pieces provide a range of perspectives on the art and its development. They also discuss the role of the artist in society and the impact of the art on the culture.

5. The fifth part of the book is a bibliography of the various sources used in the book. It includes a list of books, articles, and other materials that are relevant to the study of the art.

ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍՆ ԱՇԽԱՐՀԻ,

Ա Մ Ե Ր Ի Կ Ա.

ԴԱՍ ՃԴ.

*Դիրք, քնակիչ, սահմանիք.*

Հ. Ի՞նչ է Ամերիկան :

Պ. Ամերիկան, որ *կոր աշխարհ* եւ *կոր ցամաք* եւս կասուի, 1492-ին Քրիստափոր Բոլումպոս գտաւ, եւ Ասիայէն ետքը աշխարհիս հինգ մասանց մեջ ամենէն մեծն է, բայց Ովկիանիայէն զատ ամենէն սակաւամարդն է:

Հ. Բնակիչը ո՞րչափ է:

Պ. Յիսուսն միլիոն:

Հ. Սահմանը ո՞րն է:

Պ. Հիւսիսէն արջային Սառուցեալ ովկիանոս.

Հարաւեն հարաւային ովկիանոս .

Արեւելքն Ատլանտեան ովկիանոս .

Արեւմտքն Մեծ Խաղաղական ովկիանոս , եւ Պեհրինկայ ծովն ու նեղուցը :

---

### ԴԱՍ ձե.

*Ամերիկայի ծովերն ու նեղուցները .*

Հ. Ամերիկայի գլխաւոր ծովերը որոնք են :

Պ. Այս չորս մեծ ծովերն են . Սառուցեալ ովկիանոս արջային , Հարաւային ովկիանոս , Ատլանտեան ովկիանոս , եւ Խաղաղական ծով :

Արջային սառուցեալ ովկիանոսէն կձեանան *Բերեռայի* ծովը , *Հուտտոնի* ու *Պաֆի* ծովերը .

Ատլանտեան ովկիանոսէն կձեանայ *Անքիլեան* ծովը՝ որու մեջ են նաեւ Անքիլեան կղզիները .

Մեծ Խաղաղական ովկիանոսէն կձեանայ *Պեհրինկայ* ծովը :

Հ. Ամերիկայի գլխաւոր նեղուցները քանի՞ հատ են , եւ որոնք են :

Պ. Չորս . *Պեհրինկայ* նեղուցը՝ որ Պեհրինկայ ծովը արջային Սառուցեալ ովկիանոսին հետ կմիացընէ .

Ատլանտեան ովկիանոսը Պաֆֆինի ծովին հետ կմիանայ *Տէլլուսի* նեղուցով, Հուստոնի խորշին հետ՝ Պել-Իլի նեղուցով, Մեքսիկոյի ծոցին հետ՝ *Ֆորթուայի* նեղուցովը կամ *Պահամայի* ջրանցքովը .

*Մակելլանի* նեղուցը, որ Ամերիկան՝ Մակելլանի արշիպելագոսին մէջի *Երկիր Հրոյ* ասուած մեծ կղզիէն կգատէ :

---

## ԴԱՍ ԶԶ.

### *Ամերիկայի ծոցերն ու խորշերը.*

2. Ամերիկայի մեծ ծոցերը որոնք են :

Պ. Այս երեքը . *Մուրր Լաշընտիոսի* ծոցը՝ Ատլանտեան ովկիանոսէն ձեւացած .

*Մեքսիկոյի* ծոցը՝ Անիլեան ծովէն ձեւացած .

*Բալիմոսնիոյ* ծոցը՝ Մեծ Խաղաղական ովկիանոսէն ձեւացած :

2. Մանր ծոցերը կամ խորշերը որոնք են :

Պ. *Չիզաւիիք* խորշը՝ Միացեալ Նահանգաց արեւելակողմը .

*Բանիէշի* խորշը՝ Մեքսիկոյի նեղուցին ծայրը .

Հոնտորաս խորշը՝ Անթիլեան ծովուն մեջ .

Մարաքայիպոյի խորշը՝ Քոլումպիոյ հիւսիսակողմը .

Կուայաքիլի խորշը՝ Կուայաքիլի արեւմտակողմը .

Փանամայի խորշը՝ համանուն պարանոցին արեւմտակողմը :

---

## ԴԱՍ ՃԷ.

*Ամերիկայի կղզիներն ու քերակղզիները .*

Հ. Ամերիկոյ կղզիները քանի՞ գլխաւոր խումբ կրնան բաժնուիլ :

Պ. Տասնըվեց . այսինքն

Կրսէնչակտիս՝ Սառուցեալ ովկիանոսին մեջ .

Պաֆֆինի ծովուն կղզիները .

Եօրը՝ Մեծ ովկիանոսին հարաւակողմը, Նոր Գեորգիս, Մարտիլեան կամ Ֆաքէնտ կղզիք, Մակեղլանի արշիպելոգոսը, Մատրետե Տիօս կամ Ատտուածամօր արշիպելոգոս, Չիլօե, Խուան-Ֆեռնանտես եւ Բալլափակոս կղզիները . եւ Բուատրաս եւ Վանքուվերի արշիպելոգոսը՝ հիւսիսակողմը .



Վեց՝ Ատլանտեան ովկիանոսին մեջ .  
Սուրբ Լաւրէնտիոսի ծոցոյն կղզիները , Լոնկ-  
Սյրէնո , Պերմուտեան կղզիք , Լուքայեան  
կղզիք , Մեծ Անրիշեանք եւ Փոքր Անրիշեանք .  
Պենրիկայ ծովուն կղզիները :

Հ. Ամերիկայի մեջ քանի երեսելի թերա-  
կղզի կայ :

Պ. Վեց . Լապրատոր եւ Նոր Սկոտիա  
կամ Ակադիա՝ Նոր Բրիտանիոյ մեջ . Ֆլորի-  
տա՝ Միացեալ Նահանգաց հարաւակողմը .  
Գալիֆոռնիա եւ Եուքարաակ՝ Մեքսիկոյի մեջ .  
Ալաշքա՝ Ռուսիոյ Ամերիկային մեջ :

---

## ԳԱՍ ՃԸ .

Ամերիկայի հրուանդաններն ու պարա-  
նցները .

Հ. Քանի գլխաւոր հրուանդան կայ Ամե-  
րիկա :

Պ. Տասուերկու . ինը արեսելակողմը , Ֆե-  
րուէլ՝ Կրոնկլանտիոյ հարաւակողմը . Վոսթը-  
հոլմ եւ Կարոլոս՝ Լապրատորի մեջ . Սապը  
կամ Աւագ՝ Նոր Սկոտիոյ հարաւակողմը .  
Թանչա՝ Ֆլորիտային հարաւակողմը . Գա-

քոչ' եռքաքանի հիւսիսային արեւելեան դին.  
Ս. Ռոքոս' Պրազիլի արեւելակողմը. *Տրուխարո'*  
հարաւային Ամերիկոյ հարաւային ծայրը.  
Հոռն' Մակելլանի արշիպելագոսին հարաւա-  
կողմը.

Երեք արեւմտակողմը. *Սպիտակ գրուխ'*  
Փերուի հիւսիսակողմը. *Սուրբ Դուկաս'* Բա-  
լիֆոռնիոյ հարաւակողմը. *Գրուխ արեւմը-*  
*տեան'* Ռուսիոյ Ամերիկային արեւմտակող-  
մը' Ասիոյ Արեւելեան գլխոյն դիմացը:

Հ. Ամերիկան քանի պարանոց ունի:

Պ. Միայն *Փանամայի* պարանոցը, որ հիւ-  
սիսային Ամերիկան հարաւային Ամերիկոյ հետ  
կմիացրնէ:

---

### ԴԱՍ ՃԹ.

#### *Ամերիկայի լեռներն ու լճերը.*

Հ. Ամերիկայի լեռները քանի գօտի ունին:

Պ. Չորս մեծ. այսինքն

*Ալլեկանի'* որ Միացեալ Նահանգաց մե-  
ջէն կանցնի.

*ժայռոտ լերինք եւ Բորտիլլեանք'* որ  
հիւսիսային Ամերիկայէն կանցնին' հիւսիսէն  
հարաւ.

*Անտեսակք՝* որ հարաւային Ամերիկոյ մեջ  
ջեն կանցնին՝ Ատլանտեան օվկիանոսի ծովերուն վրայ երկըննալով հիւսիսէն հարաւ .

*Պրագիլեակն լերինք՝* որ բոլոր Պրագիլը  
կալատեն :

Հ. Ամերիկան քանի մեծ հրաբուխ ունի , եւ  
որոնք են :

Պ. Երկու . եւ են

*Սուրբ Եղիա՝* Ռուսի Ամերիկային մեջ .

*Փոխորսարեփեքլ՝* Մեքսիկոյի մեջ :

Հ. Ամերիկայի գլխաւոր լճերը քանի հատ են :

Պ- Տասնմեկ . *Գ'րեւաց լիճ* եւ *Վյեննիփիկկ՝*  
Նոր Բրիտանիոյ մեջ .

*Վերին լիճ* , *Միչիկան* , *Հուրոն* , *Էրիես*  
եւ *Օնթարիօ* Սիացեալ Նահանգաց հիւսիսա-  
կողմը .

*Նիքարակուա՝* Կուարեմալայի մեջ .

*Մարաքայիպօ՝* Բոլոմպիոյ մեջ .

*Թիքիքաքա՝* Փերուի մեջ .

*Հու-Փարու՝* Պրագիլի հարաւակողմը :



## ԴԱՍ ՃԺ.

### Ամերիկայի գետերը.

Հ. Ամերիկայի գլխաւոր գետերը քանի են, ո՞ւր են եւ ո՞ւր կրափին :

Պ. Ինը, որոց չորսը հիւսիսային Ամերիկոյ մեջ . եւ են

*Մաքլեզի*՝ որ Նոր Բրիտանիան կոռոզէ ու Բեւեռային ծովը կրափի .

*Սուրբ Լաւրենտիոս*՝ որ նոյնպէս կոռոզէ Նոր Բրիտանիան եւ կերբայ կրափի Ատլանտեան ովկիանոսը .

*Միսիսիպի*՝ որ Միացեալ նահանգները կոռոզէ եւ Մեքսիկոյի ծոցը կրափի .

*Քոլումպիա* կամ *Օրեկոն*, որ Միացեալ նահանգները կոռոզէ ու մեծ Ովկիանոսը կրափի .

Հինգը հարաւային Ամերիկա, որոց ամենքն ալ Ատլանտեան ովկիանոսը կրափին . եւ են

*Օրեկոք'* որ Բոլոմպիոյ մեկ մասը կոռոզէ .

*Ամազոնաց* գետը՝ որ Փերուն եւ Պրագիլը կոռոզէ, եւ աշխարհիս ամենէն մեծ գետն է .

*Ռիօ Թոքանիկն* եւ *Սան-Ֆրանցիսքո'* որ Պրագիլը կոռոզէ .

*Փլարա*, որ Պրագիլը, Փարակուայն ու Փլարան կոռոզէ :

Հ. Նիակարան ինչ է :

Պ. Զրվեժ մի է որ 52 մեքր բարձրութենէ այնպիսի սաստկութեամբ վար կթափի որ ահաւոր ձայնը հեռուն կըլսուի, ու մարդուս վրայ սոսկում կրերէ :

---

## ԴԱՍ ՀԺԱ.

*Կլիմայ, քերֆ, հսւնֆ, կենդանիֆ, կրօնֆ.*

Հ. Ամերիկայի կլիման ու բերքն ինչպէս է :

Պ. Ամերիկան անհուն տարածութեամբ ամեն տեսակ կլիմայ ու աշխարհիս միւս մասանց ամեն տեսակ բերքն ունի. հարաւակողմը լաւ առաջ կուգան բամբակենի, խահուէ, շաքարաբոյս, քոքենի. բայց ընդհանրապէս հին ցամաքէն աւելի ցուրտ է, որոյ պատճառ են իւր բարձրաբերձ լեռները, բազմաթիւ գե-

տերն ու անբիւ գետակները . բեւեռային զաւառներուն ցուրտն այնչափ սաստիկ է որ հոն զրեք ամենեւին բոյս չբուսնիր :

Հ. Ամերիկան ինչ հանք ու կենդանիք ունի :

Պ. Հանքային նիւթերու կողմանէ Ամերիկան աշխարհիս ամեն մասերէն աւելի հարուստ է . իրեն արծաթի հանքերուն պէս արծաթի հանքեր տեղ մը չգտնուիր, եւ քիչ տեղ կայ որ ոսկիի հանքերը Ամերիկայի ոսկեհանքերուն հաւասարուին : Խիստ առատ են նաեւ երկաթը, փլաքինը, պղինձը, կապարը, անագը, սնդիկը, հանքային ածուխը, եւ այլն :

Հ. Կենդանեացը վրայ ինչ կայ գիտելիք :

Պ. Հին ցամաքի կենդանիներէն ու գազաններէն զատ՝ հարաւային զաւառներուն մէջ ունի լամա, այծեամն, կապիկ, եւ տեսակ տեսակ զեղեցկափետուր բոջուններ, ինչպէս քոլիպրի, բոջնաճանճ եւ բուրակ : Այլ եւ այլ կողմերը բազմաբիւ սողուններ ունի, որոց մէջ ամենէն սոսկալին բոժոժաւոր օձն է :

Հ. Կրօնքն ինչ է :

Պ. Յիսուսն միլիոն բնակչացը 28 միլիոնը հռովմեադաւան են, 20 միլիոնը բողոքական, եւ մնացածը կռապաշտ վայրենիներ :



ԴԱՍ ՃԺԲ.

Բաժանուճն Ամերիկոյ. — Հիւսիսային  
Ամերիկա.

Հ. Ամերիկան քանի մասն կրածնուի :

Պ. Երկու. հիւսիսային եւ հարաւային  
Ամերիկա, որ Փանամայի պարանոցով իւր-  
րու նետ կպած են :

Հ. Հիւսիսային Ամերիկային մեջ քանի տե-  
րութիւն կայ, եւ որոնք են :

Պ. Վեց. եւ են, Ռուսի Ամերիկա, Կրոկե-  
շանտիա, Նոր Բրիտանիա, Միացեալ Նա-  
հանգք, Մեքսիկո, Կուարեմալա :

Հ. Հարաւային Ամերիկային մեջ քանի տե-  
րութիւն կայ, եւ որոնք են :

Պ. Տասը. եւ են Բոլոնիա, Կոլումբա,  
Պրագիլ, Փերու, Վերին Փերու, կամ Պոլիվիա,  
Փարակուայ, Ուրուկուայ, Փլարա, Զիլի,  
Փարակոնիա :

ԳԱՍ ՃԺԳ.

Ռուսիոյ Ամերիկա. — Կրոնիչանիսիա.

Հ. Ռուսիոյ Ամերիկային բնակիչը զրջափ է:  
Պ. Յիսուն հագար:

Հ. Սահմանը զրն է:  
Պ. Հիւսիսէն արջային Սառուցեալ ով-  
կիանոս .

Արեւմտքէն Պեհրինկայ նեղուցն ու ծովը.  
Հարաւէն Մեծ Ովկիանոս .  
Արեւելքէն Նոր Բրիտանիա:

Հ. Գլխաւոր քաղաքը զրն է:  
Պ. Նոր Արքանկէլ՝ Սիբքա կղզւոյն մեջ:

Հ. Ռուսիոյ Ամերիկային իշխանութիւնը ո-  
րո՞ւ ձեռքն է:

Պ. Ռուսաց կայսրը վաճառականաց ընկե-  
րութեան մը յանձնած է գայն, որ մորթի մեծ  
առուտութիւն կընեն. երկրին ներսերը դեռ բոլոր-  
ովին անձանօր է:

Հ. Կրօնականտիան ուր է:

Պ. Պաֆֆինի ծովուն ու Տեվիսի նեղուցին մեջտեղը:

Հ. Վրան թնջ զիտելիք կայ:

Պ. Բնակիչն է քսանըհինգ հազար հոգի, որ *Եսքիմացիք* կասուին. ձմեռը գազաններու պէս գետնափոր տեղուանք կրնակին, ամառը վրաններու տակ, ձկնորսութեամբ կապրին եւ Տանիմարքացոց իշխանութեան տակն են: Ձմեռը հոն ինն ամիս կտեսէ, եւ հիւսիսային մասը տարին չորս ամիս միակերպ խաւարի մեջ է:

---

## ԴԱՍ ՃԺԴ.

### *Ն ո Ր Բ Ր Ի Տ Ա Ն Ի Ա.*

Հ. Բնակիչը ո՞րչափ է:

Պ. Մեկ միլիոն եօթըհարիւր հազար. մեծ մասը Եւրոպացի քրիստոնեայ, մնացածը տեղացի կռապաշտ:

Հ. Սահմանը ո՞րն է:

Պ. Հիւսիսէն Հուստոնի նեղուցն ու խորշը, եւ արջային Սառուցեալ ովկիանոս.

Արեւմտքէն Ռուսիոյ Ամերիկա եւ Մեծ Ովկիանոս .

Հարաւէն Միացեալ Նահանգք .

Արեւելքէն Ատլանտեան ովկիանոս :

Հ. Նոր Բրիտանիան որո՞ւ ձեռքն է :

Պ. Անգղիացւոց , եւ մայրաքաղաքն է Քէպթը՝ Քանատայի մեջ , որ Նոր Բրիտանիոյ ամենէն զեղեցիկ զաւառն է :

---

ԴԱՍ ՃԺԵ.

*Միացեալ Նահանգք.*

Հ. Միացեալ Նահանգաց բնակիչը որչափ է :

Պ. Քսանըչորս միլիոն , որք են Եւրոպացիք , Ափրիկեցիք եւ տեղացի Ամերիկացիք , որ դեռ քաղաքականութենէ կխորշին ու անտառներու եւ անապատներու մեջ քաշուած կբնակին կռապաշտութեամբ :

Հ. Եւրոպացի բնակչաց կրօնքն ինչ է :

Պ. Ասոնք մեծագոյն մասամբ Անգղիացի են , եւ կրօնքնին բողոքական :

Հ. Միացեալ Նահանգաց սահմանը որն է :

Պ. Հիւսիսէն Նոր Բրիտանիա .

Արեւմտքէն Մեծ ովկիանոս եւ Մեքսիկո.  
Հարաւեկն Մեքսիկոյի ծոցն եւ Մեքսիկո.  
Արեւելքէն Ատլանտեան ովկիանոս:

Հ. Մայրաքաղաքը ո՞րն է:

Պ. Վա'շինկըրըն (40,000 բն.) Գոլոմպիոյ  
մէջ՝ Փոքոմաք գետին վրայ շինուած:

Հ. Գլխաւոր քաղաքները որոնք են:

Պ. Նիւ Եօրք կամ Նոր Եօրք (600,000 բն.)  
Հուստոն գետոյն բերանը՝ Ամերիկայի ամենէն  
վաճառաշահ նաւահանգիստն ու ամենէն ե-  
րեսելի քաղաքը.

Փիլադելֆիա (420,000 բն.) մեծ ու  
գեղեցիկ քաղաք.

Պա'սքըն (150,000 բն.) վաճառականու-  
թիւնը խիտ մեծ.

Պալլիմոր (180,000 բն.) խիտ վաճա-  
ռաշահ քաղաք. նաւահանգիստը 2000 նաւէն  
աւելի կառնու:

Հ. Սիացեալ Նահանգաց վրայ ի՞նչ գիտե-  
լիք կայ:

Պ. Ասոնք քսանըինը հատ իրարու հետ նի-  
զակակցութեամբ միացեալ նահանգներ են.  
Իւրաքանչիւրն իրարմէ անկախ կառավա-  
րութիւն ունի, բայց ամենուն ընդհանուր օ-  
գուտն ու վնասը կմտածուի աշխարհածողովի  
մը մէջ՝ որ ձերակուտով ու երեսփոխանաց խոր-

հրդարանով կկազմուի, եւ անոնց երկուքին  
զլուխը կամ զահերեցը՝ չորս տարին մէյմը  
կորոշուի ընտրութեամբ բոլոր նահանգաց :

Հ. Քալիֆոռնիայի վրայ ինչ կայ զիտելիք :

Պ. Միացեալ Նահանգաց մէկ մասն է, եւ  
1848-են իվեր մեջը գտնուած հարուստ ոսկե-  
հանքերուն պատճառաւ աշխարհիս ամեն կող-  
մէն գաղթականք հոն կվազեն :

---

## ԴԱՍ ՃԺՁ .

### *Հասարակապետութիւն Մեքսիկոյի .*

Հ. Մեքսիկոյի բնակիչը որչափ է :

Պ. Ուրբ միլիոն, ամենքն ալ հռովմեադա-  
ւան, ինչպէս զրեթէ բոլոր հարաւային Ամերի-  
կոյ բնակիչները :

Հ. Սահմանը որն է :

Պ. Հիւսիսէն Միացեալ Նահանգք .

Արեւմտքէն Մեծ ովկիանոս .

Հարաւէն Մեծ ովկիանոս եւ Կուա-  
քեմալա .

Արեւելքէն Անթիլեան ծովն ու Մեքսի-  
կոյի ծոցը :



Հ. Մայրաքաղաքը ո՞րն է :

Պ. Մեքսիկո կամ Մեխիքո (250,000 բն.)  
նոր աշխարհին մեծ ու գեղեցիկ քաղաքներն  
մեկը. եկեղեցիքը շատ հարուստ են :

---

### ԴԱՍ ձԺԷ.

Հասարակապետութիւն Կուսբեմալայի,  
կամ Միացեալ Նահանգք միջին  
Ամերիկոյ .

Հ Կուսբեմալայի բնակիչը ո՞րչափ է :

Պ. Երկու միլիոն :

Հ. Սահմանը ո՞րն է :

Պ. Հիւսիսէն Մեքսիկո .

Արեւմտքէն ու հարաւէն Մեծ ովկիանոս .

Արեւելքէն Փանամայի պարանոցն ու  
Անթիլեան ծովը :

Հ. Կուսբեմալայի հասարակապետութիւնը  
քանի՞ նիզակակից անկախ տերութիւններէ  
կձեւանայ :

Պ. Հինգ. անոր համար ալ Միացեալ Նահանգք կասուի, եւ աշխարհաժողովով մը կկառավարուի:

Հ. Հասարակապետութեան մայրաքաղաքը որն է:

Պ. Կուարեմաչա (50,000 բն.):



## ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ.

### ԴԱՍ ՃԺԸ.

#### *Ք ո շ ո լ Վ պ ի ա .*

Հ. Քոլումպիոյ բնակիչը որչափ է :

Պ. Երեք միլիոն եօթնհարիւր հազար :

Հ. Սահմանը որն է :

Պ. Հիւսիսէն Անթիլեան ծովը .

Արեւմտքէն Կուաբեմալա եւ Մեծ ովկիանոս .

Հարաւէն Փերու .

Արեւելքէն Կույանա եւ Ատլանտեան ովկիանոս :

Հ. Քոլումպիոյ կառավարութեան կերպն ինչպէս է :

Պ. Քոլումպիոյ մեջ երեք առանձին ու անկախ հասարակապետութիւններ կան, այսինքն

Նոր Կրանատայի հասարակապետութիւն, որուն մայրաքաղաքն է Սանթրա-Ֆե-տե Պոկորա (40,000 բն.).

Վեկեցուելայի հասարակապետութիւն, մայրաքաղաքը Բարաքաս (30,000 բն.).

Հասարակածի հասարակապետութիւն, մայրաքաղաքը Բուխրօ կամ Բիքօ (50,000 բն.):

---

## ԴԱՍ ՃԺԹ.

### Կ ո շ ա ն ա .

Հ. Կուլանայի բնակիչը ճրջափ է:

Պ. Երկուհարիւր ութսուն հազար:

Հ. Սահմանը ճրն է:

Պ. Հիւսիսէն ու արեւելքէն Ատլանտեան օվկիանոսը.

Արեւմտքէն Բոլոմալիա եւ Պրագիլ.

Հարաւէն Պրագիլ:

Հ. Կուլանան քանի մասն կրածնուի, եւ իւրաքանչիւրին մայրաքաղաքը ճրն է:

Պ. Երեք. այսինքն

Անգղիական Կուլանա, մայրաքաղաքը Ճորն-Թա'ուրն կամ Սրայրոք (20,000 բն.).

Կոչյանու Հոյանտացոց, մայրաքաղաքը Փարանարիսօ (22,000 բն.) .

Գաղղիսկան Կոչյանու, մայրաքաղաքը Քայեն (5,000 բն.) :

---

### ԴԱՍ ՃԻ.

#### Կայսերուքին Պրագիլի.

2. Պրագիլի բնակիչը ո՞րչափ է :

Պ. Հինգ միլիոն :

2. Սահմանը ո՞րն է :

Պ. Հիւսիսէն Ատլանտեան ովկիանոս, Կոչյանա եւ Գոլոմպիա .

Արեւմտքէն Փերու եւ Վերին Փերու .

Հարաւէն Փլաթա եւ Ատլանտեան ովկիանոս .

Արեւելքէն Ատլանտեան ովկիանոս :

3. Մայրաքաղաքը ո՞րն է :

Պ. Ռիօ-Ճանէյրօ կամ Ռիօ-Եսանէյրօ (165,000 բն.), զեղեցիկ խորշի մը ծայրը՝ աշխարհիս ամենէն ապահով եւ ընդարձակ նաւահանգիստներէն մեկն է :

2. Գլխաւոր քաղաքները որո՞նք են :

Պ. Պաշիա կամ Սան-Սարձատոր (125,000 բն.) եւ Փերուամպուք (62,000 բն.) :

ԴԱՍ ՃԻՍ.

Հասարակապետութիւն Փերուի.

Հ. Փերուի հասարակապետութեան բնակիչք ձրջափ է :

Պ. Մեկ միլիոն ութհարիւր հազար :

Հ. Սահմանը ձրն է .

Պ. Հիւսիսէն Քուլումպիա .

Արեւմտքէն Մեծ ովկիանոս .

Հարաւէն Մեծ ովկիանոս եւ Վերին Փերու .

Արեւելքէն Պրազիլ :

Հ. Մայրաքաղաքը ձրն է :

Պ. *Լիմա* (62,000 բն.) :

Հ. Գլխաւոր քաղաքներն որոնք են :

Պ. *Քուչո* (48,000 բն.) եւ *Արեքիպա* (37,000 բն.) :





ԳԱՍ ՃԻԲ.

Հասարակապետութիւն Վերին Փերուխ  
կամ Պոլիվիոյ.

Հ. Վերին Փերուի բնակիչը որչափ է :

Պ. Մեկ միլիոն չորսհարիւր հազար :

Հ. Սահմանը որն է :

Պ. Հիւսիսէն Պրագիլ եւ Փերու.

Արեւմտքէն Փերու եւ Մեծ ովկիանոս.

Հարաւէն Չիլի եւ Փլաթա.

Արեւելքէն Պրագիլ :

Հ. Մայրաքաղաքը որն է :

Պ. *Չուքիսաքա* կամ *Փլաթա* (16,000 բն.) :

Հ. Գլխաւոր քաղաքները որոնք են :

Պ. *Փազ* (52,000 բն.) հարուստ ոսկեհանքերուն համար անուանի. եւ *Փորոսի* (11,000 բն.) հարուստ արծաթահանքերուն համար հռչակաւոր :



ԴԱՍ ՃԻԳ.

Իշխանապետութիւն Փարսկոյայի, Հա-  
ասրակապետութիւն Ուրուկոյայի, Եւ  
Նիզակակցութիւն Փլաթայի.

Հ. Փարսկոյայի բնակիչը ճրջափ է:

Պ. Երեքհարիւր հազար:

Հ. Մայրաքաղաքը ճրն է:

Պ. Վերայիոյսումն (15,000 բն.):

Հ. Ուրուկոյայի բնակիչը ճրջափ է:

Պ. Հարիւր ութսունհազար:

Հ. Մայրաքաղաքը ճրն է:

Պ. Մոնրեպիտեօ (32,000 բն.):

Հ. Փլաթայի բնակիչը ճրջափ է:

Պ. Երկու միլիոն:

Հ. Մայրաքաղաքը ճրն է:

Պ. Պուռնու Այրեւ (85,000 բն.) Փլաթա  
գետին բերանը՝ խիստ վաճառաշահ նաւա-  
հանգիստ:

## ԴԱՍ ձԻԴ.

### Հասարակապետութիւն Չիլիի.

Հ. Զիլիի կամ Գիլիի բնակիչը որչափ է:

Պ. Մեկ միլիոն ու կես:

Հ. Սահմանը որն է:

Պ. Հիւսիսէն վերին Փերուս կամ Պոլիվիա.

Արեւմտքէն Մեծ ովկիանոս.

Հարաւէն Փարակոնիա.

Արեւելքէն Փարակոնիա եւ Փլաթա:

Հ. Մայրաքաղաքը որն է:

Պ. Սանթիակո (68,000 բն.):

Հ. Գլխաւոր քաղաքները որոնք են:

Պ. Վալպարայզո (40,000 բն.) գեղեցիկ նահանգիստ ունի, եւ Ամերիկոյ հարաւային ծովեզերքին վաճառաշահ քաղաքներէն մեկն է:

Վալպարայզո (6,000 բն.) Ամերիկոյ գեղեցիկ նահանգիստներէն մեկն է:

ԴԱՍ ՃԻՆ.

Փաթակոնիա, — Հասարակապետութիւն  
Հայիթիի, եւ Հաւանա .

Հ. Փաթակոնիոյ բնակիչը ճրջափ է:

Պ. Երկուհարիւր հազար կոռապաշտ, որ  
դեռ իրենց վայրենի վիճակին մեջ մնացած են  
ու ամենեւին քաղաք չունին:

Հ. Փաթակոնիոյ սահմանը ճրն է:

Պ. Հիւսիսէն Փլաթա եւ Զիլի.

Արեւմտքէն Մեծ ովկիանոս.

Հարաւէն Մակելլանի նեղուցը.

Արեւելքէն Ատլանտեան ովկիանոս:

Հ. Հայիթիի Հասարակապետութեան վրայ  
Քնչ կայ գիտելիք:

Պ. Հայիթի կղզին որ ատենով Սուրբ Դո-

Տրեխլու կամ Սակ-Տովիկո կկոչուեր, Մեծ Անրիլեանց մեկն է, եւ մայրաքաղաքն է Փորր-օ-Փրեկս կամ Նաւահանցիստ Իշխանի, (30,000 բն.) բանուկ նաւահանգիստ :

Հ. Հաւանան ուր է :

Պ. Մեծ Անրիլեանց մեկը է նաեւ Քուլլա կղզին. ասոր մայրաքաղաքն է Հաւանա (115,000 բն.) ամուր ու խիստ վաճառաշահ :







ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍՆ ԱՇԽԱՐՀԻ,

Ո Վ Կ Ի Ա Ն Ի Ա .

ԳԱՍ ՃԻԶ .

*Դիրք, թնակիչ, նեղուցք Ովկիանիոյ .*

Հ. Ովկիանիոյ վրայ ինչ գիտելիք կայ :

Պ. Ովկիանիան կձեռացընեն Մեծ Խաղաղական ովկիանոսին մեջ գտնուած կղզիները : Աշխարհիս հինգ մասանց մեջ՝ երկրագնտին վրայ ամենէն մեծ տեղ բռնողն Ովկիանիան է, բայց այն բազմաթիւ կղզիներն ու արշիպելագոսները զատող ծովերն այնչափ շատ են եւ ընդարձակ, որ եւրոպայէն ետքը ամենէն քիչ ցամաք ունեցողը այս մասն է :

Հ. Բնակիչը ո՞րչափ է :

Պ. Քսանրուքը միլիոն :

Հ. Ի՞նչ գլխաւոր նեղուցներ ունի :

Պ. *Մաշաքքայի* նեղուցը արեւմտակողմը՝  
Մալաքքա բերակղզւոյն եւ Սոււմաթրա կղզ-  
ւոյն մեջտեղը .

*Սոււնտի* նեղուցը՝ Սոււմաթրա եւ Ճաւա  
կղզիներուն մեջտեղը .

*Մաքսսսար*՝ Պոռնեո եւ Չելեպեան կղզ-  
ւեաց մեջտեղը .

*Թորրեա*՝ Նոր Կուիւնեայի ու Նոր Հո-  
լանտիոյ մեջտեղը .

*Պաս*՝ Նոր Հոլանտիոյ եւ Տիեմենի մեջ-  
տեղը .

*Քուք*՝ որ Նոր Չելանտան երկու կղզի  
կրածնէ :

---

### ԴԱՍ ՃԻԷ .

*Կլիւնայ, բերք, կրօնի եւ բաժանուլն .*

Հ. Ովկիանիոյ կլիման ու բերքը ինչպէս է :

Պ. Ովկիանիոյ կղզիներուն կլիման ընդհան-  
րապէս տաք է, բայց ծովուն մերձաւորու-  
թեամբը բարեխառնուած : Ոմանց մեջ բնու-  
թիւնն իւր ամեն հարստութիւնը բաժնած է .  
ոմանց մեջ կգտնուին նաեւ կարգէ դուրս բոյ-  
սեր ու կենդանիներ :

Հ. Կրօնքն ինչ է:  
Պ. Ամենէն աւելի տարածեալ կրօնքն են քրիստոնէութիւն, մահմետականութիւն, պոստականութիւն, պրահմականութիւն, եւ շատ տեսակ կուսակաշտութիւններ:

Հ. Ովկիանիան քանի՞ գլխաւոր մասն կրածնուի:

Պ. Երեք. այսինքն  
*Մալեզիա կամ Մալալաստան, Մերանեսիա կամ Աւստրալիա, Փոլինեսիա կամ Բազմակղզիք:*

---

### ԴԱՍ ՃԻԸ.

#### *Մալեզիա կամ Մալալաստան.*

Հ. Մալեզիոյ կամ Արեւմտեան Ովկիանիոյ բնակիչը ո՞րչափ է:

Պ. Բսան միլիոն:

Հ. Սահմանը ո՞րն է:

Պ. Հիւսիսէն ճափոնի ծովն ու կղզիները. Արեւմտքէն Չինու ծովն ու Մալաքքա քերակղզին.

Հարաւէն Հնդկաց ովկիանոս.

Արեւելքէն Մելանեսիա եւ Փոլինեսիա:

Հ. Քանի գլխաւոր խումբ ունի եւ որոնք են:

Պ. Հինգ. եւ են

Կղզիք *Սոււտի*.

Խումբ *Պոռեկոյի*.

Խումբ *Զեշեպեանց*.

Արշիպեղազոս *Մոյուքեանց*.

Արշիպեղազոս *Փիլիպպեանց*:

Հ. Սոււտի գլխաւոր կղզիները որոնք են:

Պ. *Ճաւա* (8,000,000 բն.) որ Ովկիանիոյ կղզիներուն մեջ ամենէն բազմամարդն ու ծաղկածն է, եւ զրեք բոլորովին Հոլանտացւոց ձեռքը. մայրաքաղաքն է *Պարուշիս* (55,000 բն.) խիստ վաճառաշահ. եւ գլխաւոր քաղաքը *Սուրապայա* (50,000 բն.). երկուքին մեջ եւս հայազգի վաճառականք կգտնուին:

*Սոււարբա* (5,000,000 բն.) Սոււտի նեղուցով ձաւայեն բաժնուած, մեծ մասը Հոլանտացւոց ձեռքը. գլխաւոր քաղաքն է *Աշեմ* (20,000 բն.):

---

### ԴԱՍ ՃԻԹ.

Հ. Պոռեկոյի խումբին վրայ ինչ գիտելիք կայ:

Պ. Զորս միլիոն բնակիչ ունի, եւ բացի փոքրիկ կղզիներէն՝ բուն Պոռեկոյ կղզւոյն

մեծութիւնն է Գաղղիոյ երկուքը . մեկ մասը նուաճած են Հոլանտացիք, բայց մեծագոյն կտորը տակաւին անկախ է եւ առանձին սուլդան կամ իշխան մը ունի, որոյ մայրաքաղաքն է *Պռնէոյ* (15,000 բն.) :

Հ. Չելեպեանց խումբին վրայ ինչ տեղեկութիւն կայ :

Պ. *Չելեպեանց խումբն* ալ, որոյ բնակիչն է երեք միլիոն, նոյնպէս իւր համանուն երեսելի Չելեպեան կղզին ունի . գլխաւոր քաղաքն է *Մաքսսար* :

Հ. Մոլութեանց գլխաւորները որոնք են :

Պ. *Ամպոյնա* (50,000 բն.) ուր կնրստի Հոլանտացւոց իշխանութեանը տակ եղող Մոլութեան կղզեաց կուսակալը . — անուանի են նաեւ *Կիշոյ* եւ *Սերամ* :

Հ. Փիլիպպեանց արշիպելագոսին վրայ ինչ գիտելիք կայ :

Պ. Սոցա բնակիչն է չորս ու կէս միլիոն, եւ հազարաւոր մանր կղզիներէ ձեւացած է, որոց գլխաւորներն են

*Լուսոն* (2,400,000 բն.) մեծ մասը Սպանիացւոց ձեռքը . գլխաւոր քաղաքն է *Մանիլա* (100,000 բն.) խիստ վաճառաշահ .

*Միլտասնաօ* (1,200,000 բն.) ասոր ալ կէսը Սպանիացւոց ձեռքը, կեսն անկախ է :



ԴԱՍ ՃԼ.

*Մելանեսիոս կամ Աւսրայիս.*

Հ. Մելանեսիոյ կամ Հարաւային ովկիանիոյ բնակիչը որչափ է :

Պ. Մեկ ու կես միլիոն :

Հ. Սահմանը որն է :

Հիւսիսէն Փոլինեսիա եւ Մալեզիա .

Արեւմտքէն Հնդկաց ովկիանոս .

Հարաւէն Հարաւային մեծ ովկիանոս :

Արեւելքէն Փոլինեսիա :

Հ. Մելանեսիան քանի մասն կրնայ բաժնուիլ :

Պ. Երկու, Հարաւային ցամաք կամ Նոր Հոլանտա եւ Կղզիք :

Հ. Նոր Հոլանտիոյ վրայ քնչ գիտելիք կայ :

Պ. Մեծութիւնը Եւրոպայի չափ է, եւ աշխարհիս կղզիներուն ամենէն մեծը լինելով՝ ցամաք եւս կասուի. Անգղիացոց ձեռքն է, եւ մայրաքաղաքը Սիտնի (58,000 բն. ) :



Հ. Մելանեսիոյ կղզիներուն գլխաւորները որոնք են :

Պ. *Երկիր Տիււնէի*՝ (60,000 բն.) Նոր Հոլանտիոյ հարաւակողմը .

*Փափուշիս* կամ *Նոր Կուիկեա* (500,000 բն.) Նոր Հոլանտիոյ հիւսիսային արեւելեան կողմը .

*Նոր Իոլանտա* եւ *Նոր Բրիտանիա* (65,000 բն.) :

*Սողոմոնի Արշիպելագոս*, որ եւ *Կղզիք Արշակունեաց* կասուին (100,000 բն.) .

*Արշիպելագոս Սանրա-Քրուզի* կամ *Ս. Խաչի* (50,000 բն.) որոյ ամենէն երեւելի կղզին է *Վանիքորօ* .

*Նոր Հէրրիտլանդ* կամ *Կղզիք Հոգւոյն Սրբոյ* (150,000 բն.) .

Արշիպելագոսը *Նոր Քալետոնիոյ* եւ *Նոր Զելանտիոյ* (250,000 բն.) Նոր Բրիտանիոյ հարաւային արեւելեան դին :

---

### ԴԱՍ ՃԼԱ.

*Փոլինէսիա* կամ *Բազմակղզիք* .

Հ. Փոլինէսիոյ բնակիչը որքա՞ն է :

Պ. *Փոլինէսիոյ* կամ Արեւելեան Ովկիանիոյ բնակիչն է մեկ ու կես միլիոն :

Հ. Քաննի մասն կրնայ բաժնուիլ:

Պ. Երեք. *հարսաւային Փոլինեսիա*, ճիւստացին *Փոլինեսիա* եւ *Միքրոնեսիա* կամ *Մանրակղզիք*:

Հ. Հարաւային Փոլինեսիոյ գլխաւոր կղզիներն ու արշիպելոագոսները որոնք են:

Պ. Վիրի կամ Ճիւնի կղզիք (85,000 բն.).

*Բարեկամաց* կամ *Թունկա* կղզիք (200,000 բն.).

*Թայիրի* արշիպելոագոսը, կամ *Ընկերութեան* կղզիք.

*Փունորու* արշիպելոագոսը.

*Նուքս-Հիվա* կամ *Մարքիզեան* արշիպելոագոս.

*Նաւորդաց* կղզիք (160,000 բն.) որ *Հաւա* կամ *Պուկենիլի* եւս կասուին:

Հ. Հիւսիսային Փոլինեսիան քաննի արշիպելոագոս ունի:

Պ. Մեկ միայն, *Հաւայի* արշիպելոագոսը, որ եւ *Սենաուիչ* կղզիք (150,000 բն.):

Հ. Միքրոնեսիոյ գլխաւոր արշիպելոագոսները որոնք են:

Պ. *Մակեղանեան* արշիպելոագոս (1,000 բն.).

*Մարիանեան* կամ *Առագակաց* արշիպե-  
ղագոս .

*Բարդիկեան* կամ *Նոր Փիլիպպեան*  
արշիպեղագոս (50,000 բն.) :

*Անտոնեան* արշիպեղագոս կամ *Հիւսի-  
սային սպորադք* (սփիւռ. կղզիք), որ են Միք-  
րոնեսիոյ հիւսիսակողմը ցրուած կղզիները :

Վ Ե Ր Զ .

## Յ Ա Ն Կ

### ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ.

Նախագիտելիք .....	1
-------------------	---

#### ՄԱՍՆ Ա.

#### ԲՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ.

Ընդհանուր ստորագրութիւն տիեզերաց .	2
Արեւ .....	4
Աստեղք, Մոլորակք, Գիսաւորք .....	5
Լուսին .....	8
Մթնոլորտին գլխաւոր երեւոյթները .....	10
Երկիր .....	14
Երկայնութիւն եւ լայնութիւն .....	20
Գօտիք եւ կլիմայք .....	23
Ովկիանոս .....	30
Ծովք .....	32
Յամաքին այլ եւ այլ մասերը .....	34
Ջրոյ այլ եւ այլ տեսակներն ու կտորները .....	39

ՄԱՍՆ Բ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ.

*Ընդհանուր գիտելիք.*

Կառավարութիւնք .....	43
Կրօնք .....	45
Լեզուք եւ ցեղք մարդկան .....	46

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆ ԱՇԽԱՐՀԻ,

Ե Ի Ր Ո Պ Ա

Բնակիչ, կրօնք, տարածութիւն, օղ, եր- կիր, բերք Եւրոպայ .....	49
Սահմանք եւ բաժանումն Եւրոպայ .....	51
Եւրոպայի ծովերը .....	53
Եւրոպայի նեղուցները .....	—
Եւրոպայի ձոցերը .....	55
Եւրոպայի կղզիները .....	56
Թերակղզիք եւ պարանոցք Եւրոպայ ....	57
Գլուխք կամ հրուանդանք Եւրոպայ ....	59
Լերինք եւ հրաբուխք Եւրոպայ .....	60
Եւրոպայի գետերը .....	61
Եւրոպայի լճերը .....	64

ՀԻՄՆԱՍՏՅԻՆ ԵՒՐՈՊԱ .

Ռուսաստան .....	65
Տանիմարքա .....	69
Շուետ եւ Նորվեկիա .....	70
Բրիտանական կղզիք կամ Անգղիա .....	72
Սկովտիա, Իռլանտա .....	74
Անգղիոյ բերքը, կառավարութիւնը, կրօնը, գաղթականութիւնները .....	75
Գաղղիա կամ Ֆրանս .....	77
Պելճիա .....	80
Հոլանտա կամ Ստորին նահանգք .....	81
Զուիցերի կամ Հելուետիա .....	83
Աւստրիա .....	84
Բրուսիա .....	86
Գերմանիա կամ Գերմանական դաշնակ- ցութիւն .....	88

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԵՒՐՈՊԱ .

Փորթուկալ .....	91
Սպանիա .....	93
Իտալիա .....	95
Եւրոպայի Տաճկաստան .....	100
Յունաստան .....	104
Յունիական կղզիք .....	105



ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆ ԱՇԵԱՐՀԻ,

Ա Ս Ի Ա

Բնակիչք, տարածութիւն եւ սահմանք ..	107
Ծովք եւ նեղուցք Ասիոյ .....	108
Ասիոյ ծոցերն ու կղզիները .....	110
Թերակղզիք եւ հրուանդանք Ասիոյ .....	111
Ասիոյ լեռները .....	113
Ասիոյ գետերն ու լճերը .....	114
Օղ, բերք եւ կրօնք Ասիոյ .....	115
Արուեստք, զիտութիւնք եւ բաժանումն Ասիոյ .....	116
Ռուսաստան Ասիոյ .....	117
Տաճկաստան Ասիոյ .....	121
Փոքր Ասիա կամ Անատոլոս .....	122
Հայաստան .....	123
Իրագ-Արապի, Ասորիք .....	124
Ասիոյ Տաճկաստանին կղզիները .....	125
Արարիա .....	126
Պարսկաստան .....	127
Թուրքաստան .....	128
Աֆղանիստան .....	129
Պելուճիստան .....	130
Հնդկաստան .....	131
Անգղիացւոց ձեռքն եղած երկիրներ .....	132

Քաղղիացւոց եւ Փորթուկացւոց մասը եւ Հնդկաստանի կղզիները .....	134
Հնդկաչին .....	135
Զին կամ Զինաստան .....	137
Ճափոն .....	138

ԵՐՐՈՐԴ ՄԱՍՆ ԱՇԽԱՐՀԻ,

Ա Փ Ր Ի Կ Է

Գիրք, բնակիչք եւ սահմանք Ափրիկէի .	141
Ափրիկէի նեղուցները, ծոցերը, գետերն ու լճերը .....	142
Ափրիկէի կղզիներն ու հրուանդանները .	143
Ափրիկէի լեռները .....	145
Ափրիկէի օղը, բերքը, գազաններն ու կրօնքը .....	146
Ափրիկէի բաժանումը .....	147
Պերպերիստան .....	148
Եգիպտոս .....	150
Սահրա կամ Մեծ անապատ .....	151
Սենեկամպիա .....	152
Հիւսիսային Կուինեա .....	154
Հարաւային Կուինեա կամ Քոնկօ .....	155
Սուտան կամ Նիկրիտիա .....	156
Նուպիա .....	157
Եթովպիա կամ Հապէշիստան .....	158

Այան եւ Ատէյ .....	159
Քաֆրատան եւ Մոնոմորփալա .....	160
Քաղքականութիւն զխոյն Բարեյուսոյ.— Օրենքացոց երկիր .....	161
Մոզամպիք .....	162
Չանկեպար .....	163

—  
**ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍՆ ԱՇԵԱՐՀԻ,**

**Ա Մ Ե Ր Ի Կ Ա**

Դիրք, բնակիչ, սահմանք .....	165
Ամերիկայի ծովերն ու նեղուցները .....	166
Ամերիկայի ծոցերն ու խորշերը .....	167
Ամերիկայի կղզիներն ու բերակղզիները .....	168
Ամերիկայի հրուանդաններն ու պարանոցները .....	169
Ամերիկայի լեռներն ու լճերը .....	170
Ամերիկայի գետերը .....	172
Կլիմայ, բերք, հանք, կենդանիք, կրօնք .....	173
Բաժանումն Ամերիկոյ, — Հիւսիսային Ամերիկա .....	175
Ռուսիոյ Ամերիկա. — Կրօնականտիա ....	176
Նոր Բրիտանիա .....	176
Միացեալ Նահանգք .....	178
Հասարակապետութիւն Մեքսիկոյի .....	180

Հասարակապետութիւն Կոսաթեմալայի , կամ Միացեալ Նահանգք Միջին Ամե- րիկոյ .....	181
---	-----

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ.

Քոլումպիա .....	183
Կոչյանա .....	184
Կայսերութիւն Պրագիլի .....	185
Հասարակապետութիւն Փերուի .....	186
Հասարակապետութիւն Վերին Փերուի կամ Պոլիվիոյ .....	187
Իշխանութիւն Փարակուայի, Հասարակա- պետութիւն Ուրուկուայի, եւ Նիզա- կակցութիւն Փլարայի .....	188
Հասարակապետութիւն Զիլիի .....	189
Փարակոնիա, — Հասարակապետութիւն, — Հայիթիի եւ Հաւանա .....	190

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍՆ ԱՇԽԱՐՀԻ,

Ո Վ Կ Ի Ա Ն Ի Ա.

Դիրք, բնակիչ, նեղուցք Ովկիանիոյ ....	193
Կլիմայ, բերք, կրօնք եւ բաժանումն ..	194
Մալեզիա կամ Մալայաստան .....	195
Մելանեզիա կամ Աւստրալիա .....	198
Փոլինեզիա կամ Բազմակղզիք .....	199











